





Բ. ՋՐՁԱՆ

ԱՇԽԱՐՀԱԿԱՐ ԳՐԱԿԱՐԱԿԱՆԻԹԻՒԹԻՒՆ

Ա մաս

Արևմտանան գրականութիւն

1. ՆԱՀԱՊԵՏ ԱՌԻՍԻՆԵԱՆ

(1819—1876)

Մ. Մամուրեան—Հայկական համականի, Զմիւռնիս 1872, էջ 242—246:

և. Օսկան—Բուօսինեան, իր կետերն ու իր գործերը, Մասիս 1892, էջ 216, 241, 257—Հրազդան—Նահապետ Բուօսինեան, Գևորգի 1902, էջ 43—44:

Տ. Պ. Թորգոնեան—Բժիշկ դակու, Նահապետ Բուօսինեան, Հանով, Ամս., 1902—3:

Արևմտանան գրականութեան առաջին ռահմակիրան Նահապետ Բուօսինեանն է:

Արևմտանան աշխարհաբարն սկսել էր գրի առնուել առաջին անգամ ԺԹ. գարի սկզբանման ըստ Համանակ ուրիշ բան չէր, բայց նու այդ ժամանակ ուրիշ բան չէր, բայց եթէ Պօլսի ռամբիկ բարբառը, աղձատ ուղղագրութեամբ և թուրքերէն բառերով ու ձեհրով լի: Առաջին անգամ 1839-ին Զմիւռնիայի Շահմարան թերթը սկսում է ուշադրութիւն գարձնել լեզուի մաքրութեան վե-

բայ, թուրքերէն բառերի տեղ գնում է հայերէն
բառերը, թրքարանութիւնները աշխատում է
վերացնել, ուղղագրութիւնը համաձայնեցնում է
զրաբարի ուղղագրութիւննեւ այսպէսով նոյն առմիկ
բարբարին տալիս է զրակոն լեզուի կերպարանք:

Լեզուի մշակութեան գործը՝ տարածուելով
հետզհետէ աւելի լայն չափերով, շարունակուում է
տասնեակ տարիները Նրա ասպարէզը սակայն
շատ անձաւէ է. նա գործածական է միայն իրրե
հասարակ ժողովրդին դիմելու պիտոյք, զրակու-
նութեան ստորին տարիճանի վրայ, միայն լրա-
գրութեան մէջ։ Գրականութեան լեզուն զրա-
բարն է, որ մշակում են զրագէաները. բանուա-
տեղծութիւն, զիտութիւն, պատմութիւն, ամէն
ինչ զրաբար միայն կարելի է զրել. Դպրոցում
մանուկը հէնց առաջին օրից զրաբար է սովո-
րում, և աշխարհաբարը իրաւունք չունի կրիու-
կան գործի մէջ մտնելու։

Հետզհետէ կոկուելով ու դեղեցկանսպավ, երբ
սամիկ լեզուն հասնում է արգէն կատարեալ վի-
ճակի, երբ այլ ես ընդունակ էր նա զրական
բարձր սեռերի մշակութեան, նոր զրողների մի
ստուար խումբ, եւրոպական զազափարներով
մնուած և ժողովուրդի պէաքերին ու պահանջ-
ներին զիտակից, կոիւ է յայտաբարում զրաբա-
րի գէմ, պահանջում է ասպարէզը տալ աշխար-
հաբարին:

Այսպէս է բացում զրաբարեանների և
աշխարհաբարեանների զրապայբարում

Այս մարտիկների շարքում, նոր գտղափառ-
ների իրեւ առաջին բարողիչ, փայլաւմ է Ռու-
սինեանը:

Նահապեա Ռուսինեանը ծնուել է Կեսա-
րիոյ Եֆրէրէ գիւղում, 1819 թ. սեպտ. 28-ին:
Նրա հայրը պատի վերայ նկարող էր, շատ յա-
ջող իր արուեստի մէջ, այնպէս որ մինչև իսկ
դառնում է պալատական նկարիչ, յիսոյ վաճա-
ռականն Նահապեաը մինչև 10 տարեկան հաստ-
իլ սովորում է Եֆրէրէի մէջ՝ հօրը բաց արած
դպրոցում, տեղացի մի ուրկաւագի մօտ, և յե-
տոյ հօրը հետ զաղթում է Պօլիս ու մանուժ
Բւլկիւտարի դպրոցը, ուր միծ յառաջդիմու-
թիւն է ցոյց տալիս գրաբար հայերէնի և Փրան-
սիրէնի մէջ։ Դոլրոցը աւարտելուց յիսոյ՝ հօրը
մահուան պատճառով ընկնում է կարօտ վիճակի
մէջ և մի թուրք փաշայի մօտ վարում է Փրան-
սիրէնի թարգմանչութեան պաշտօնու Բայց շաւ-
տով բարերարների պաշտպանութեամբ թողնում
է այդ արհեստը և ուսումը շարունակելու հա-
մար գնում է Պարիզ։ Այստեղ վերջացնում է
միջնակարգ ուսումը, յիսոյ մանուժ բժշկական
համալսարան, որը աւարտում է փայլուն քննու-
թեամբ։

Ռուսինեանը, որչոփ որ հետեւում էր ըր-
դը շկութեան, բայց աւելի սէր ունէր դէսպի գրա-
կանութիւնը, պատմութիւնը և հասարակական
գիտութիւնները. և միշտ գնում էր լսել ոյն
պերճախօս անձիրին, որոնք Լուի Ֆիլիպ թո-

գաւորի ժամանակ Ֆրանսիայի փառքն էին կողմում և որոնք ծնեցին 1848-ի ֆրանսիական լիդարիախութիւնը Լամարտին, Հիւզո, Շատօրթիսն, Թիէո, Գիզո և այլն, իրենց հրաշտուչ ձաւուրով վասեցին Ռուսինեանի սիրար, անսաւ նա Փետրվարի, Յունիսի և Դեկտեմբերի յեղափոխութիւնները, որոնք առաջարկեցին թագաւորութիւնը, հիմնեցին ընդհանուր բռէարկութիւն, տարածեցին սահմանադրական զագափարը և աւելի նախառավատութիւն տուին ժողովրդի քոն թէ ազնուականների ձայնին Ռուսինեանը ականատես լինելով այս շարժումներին, անդրագարձաւ հայ իրականութեան վրայ. մեր կեանքը համեմատեց ֆրանսիական ազնուապետութեան հետ, անսաւ որ այստեղ էլ իշխողը կզերն ու ամիրոն է, այստեղ էլ տիրում են այն հին կարգերը, որոց ջնջելու համար արիւն թափեցին ֆրանսիացիք, այստեղ էլ ձայն չունի ժողովուրդը, ուամիկ, ազէտ ու անտեսուած, նրա լեզուն ոնդամ որհամարհուած է: Եւ ցանկացաւ ֆրանսիական յեղափոխութեան բարիքները մեր մէջ էլ տարածել, մեր կեանքին էլ տալ Սահմանադրական կազմակերպութիւն:

Ռուսինեանը յեղափոխական էր մինչև իր հոգու խորքերը. նրա համոզումն այն էր՝ թէ մի ժողովուրդ յեղափոխելու համար՝ ողէտք է յեղաշրջել նրա կեանքի բոլոր երեսյթները միանդամյուն: Այս պատճառով հէնց տուշին օրից նա ձեռք տաւ հայոց լեզուն, զիրը և աօմարը՝ ու-

բոնց ցանկանում էր տալ նոր կարդ ու կանոն։
Այս խնդիրների ուսումնասիրութեան համար
Ռուսինեանը՝ բժշկական ուսումն աւարտելուց
յիտոյ մնում է Պարիզում մի քանի տարի։ Այս
ժամանակ Պարիզ էին հաւաքուած Տաճկահայոց
լաւագոյն մտաւոր ներկայացուցիչները։ այնտեղ
էին Պարտիզանեան, Միասրեան, Կ. Ի. Թիւ-
ճեան, Գ. Այվաղովսքի, Նար-պէյ, Շերէնց և այլն.
այնտեղ էր Մուրատեան վարժարանը։ Ռուսին-
եանի նախաձեռնութեամբ հիմնում է Ալբարտե-
եան ընկերութիւնը, որի նպատակն էր նողաս-
տել աղպային յառաջդիմութեան։

Պարիզում Ռուսինեանը պատրաստում է իր
Ուղղախօսութիւնը, Տարեցոյցը և Գնդազրութիւնը։

Ուղղախօսութիւնը հայերէն աշխարհաբար
լեզուի քերականութիւնն է։ Ինչպէս գիտենք,
մինչև այն ժամանակ, հայերէն լեզու համար-
ւում էր միայն զրաբարը և այս պատճառով աշ-
խարհաբարը գանուում էր բոլորովին արհամարհ-
ուած վիճակի մէջ։ Ոչ ոք նրա վրայ ուշադրու-
թիւն չէր դարձնում։ Շշմարիտ է թէ արդէն 10-15
տարի էր, որ աշխարհաբար լեզուով զրգիր ու
թիրթիր էին հրատարակում, բայց նա
զուրկ էր գրական լեզուի ճշառութիւնից ու կա-
նոնաւորութիւնից։ Նա դեռ քերականութիւն չու-
նէր, և իւրաքանչիւր զրոդի քմահաճոյքը իրեն
համար կանոն էր։ Ռուսինեանը իր Ուղղախօ-
սութիւնը այդ անկարգ լեզուն ուզում է կար-
գի ու կանոնի տակ գնել։

Ամէնից առաջ մեռսինեանը զրաբարի դէմէ
է, նու ընդունում է զրաբարի վահմութիւնը, ձու-
խութիւնը, բայց գարձնել նրան ընդհանուր խօ-
սակցական լիզու, ինչպէս յոյս ունէին մոլուանդ
զրաբարեանները, հոմարում է յուսախարու-
թիւն: Եւ ինչպէ լարել ուժերը, աշխատանք թա-
փել այդ անկարելի բանին համար, մինչդեռ մո-
ղովուրդը բաղմատեսակ անհրաժեշտ պահանջներ
ունի: «Ան վահմ ու հարուստ զրաբառն անկարե-
լի է ազգին ընդհանրութեանը լիզու ընէլ... որ
Հայաղգի չ'ուզէ զրաբառն իր աղզին բերնէն
լսէլ. սակայն որ յառաջադէմ կ'ուզէ սուս յուսով
ինք՝ զինք խաբէլ անկարելի բանին համար՝ ու
անդին ընէլիք հարկաւոր բանը զանց ընէլ»:

Այսու ամենայնիւ մեռսինեանը բոլորովին
բարձիթողի չի անում զրաբարը. նու քայլ տո
քայլ հետեւմ է նրան, և ուր որ կարելի է
փոխ է առնում նրանից, առանց շիզուելու աշ-
խարհաբարի ընդհանուր կանոններից: Մեռսին-
եանի առաջնորդող սկզբունքն է միաձեռթիւն,
պարզութիւն և տրամաբանութիւն: Այս երեք օ-
րէնքների համաձայն մտցնում է լիզուի մէջ
բաղմաթիւ փոփոխութիւններ: Անկանոն հոլով-
ները, չորրորդ լծորդութիւնը և անկանոն բայե-
րը ջնջում է, ձգտելով մէկ հոլովման և մէկ խօ-
նաբհման գաղափարին: Ուզգակրութեան մէջ ա-
ւելի ուժ է տուլիս է և վ' տառերին՝ փոխանակ
է և ւ: —ութիւն վերջաւորող բասերը հոլովում
է օրինակի համար, «հայութիւն, հայութիւն,

հոյութէնէն, հոյութիամբ», յոդնակին զրում է էր, նէրս Դերանուններն անզամ ուզում է ենթարկել սովորական կանոններին. հոլովում է «նո, նտոր, նտիկ, նտով, նտոնք, նտոնց» և այլն: Նախապատռութիւն տալավ համառօտ ձևերին, կը ճատում է բառերը, սղում է նրանց. այսպէս օր. թուականները գարձնում է «մի, երկ, եռ, քառ, միորդ, երկորդ, եռորդ, բառորդ»: միւս բառերից յիշենք առնց (առանց), ուսմական (ուսումնական), բառցոյց (բառարան)» և այլն: Անցողականի վերջաւորութիւնն է ուցէլ. օր. հասուցէլ, ուսուցէլ (հասցնէլ, ուսուցանել): Բայերի մէջ անորոշի վերջաւորութիւնը պահում է անփոփոխ. օր. «փափաթիւով, փորձէլ, փորձէցին, սիրէլու» և այլն: Գրում է «խրաբանձիւր», ուրովհետեւ կործում է թէ կազմուած է «անձնիւր» բարից:

Այս լեզուն՝ որ մեռինեանը զնում է նոր հիմքերի վրայ, կոչում է արմէնէրէն (նոր հայերէն), մինչդեռ զրաբարը կոչում է հայերէն:

Տարեցոյցի մէջ մեռինեանը ընդունում է փրանսիական առաջին հասարակապետութեան տոմարը, ուր տարին սկսում էր մարտի 21-ից, իւրօքանչիւր ամիս ստանում էր նոր անուն՝ փոխանակ հին լատինական անիմաստ անունների, և ունինում էր միայն 30 օր: Մեռինեանը ձարագիկ կերպով հայերէնի է թարգմանում այս անունները և առաջարկում է ընդհանուր զոր ծածութեանտ Այս անուններն են՝ սկսած առլիւ-

թից՝ «բուսին», ծաղկին, մարդին, հնձար, տօթար, պաղար, կթան, թափօն, միզօն, ձիւներ, սառներ, մըրկերք:

Մուսինեանի բարեհարազական հուանդը այսպէս սաստիկ էր, որ մինչև անգամ չի խնայում հայերէն տառերին և զեղազրաթեան տեսրակում աշխատում է հասնել և բոստական (բատին) գայլչագրութեան, և հայերէն զրերին տալնոցա զեղեցիկ ձեւը:

Մուսինեանը մնում է Պարիզում մինչև 1851 թիւը և այնուեղ ամուսնութեալով մի Ալզասի օրիորդի հետ՝ մօրը ստիպմամբ վերադառնում է Պոլիս:

Պոլսում այս ժամանակ սկսում էր ազգային վերանորոգութեան գործը:

Երկու զլխաւոր հոսանք կամ կուսակցութիւն կար ազգի մէջ, առաջին՝ ամիրաների և իրկրորդ՝ ժողովուրդի կուսակցութիւնը։ Ամիրաները յենուած իրենց հարստութեան և իրենց ուշտապան թուրք փաշաների իշխանաւորութեան վրայ, իրենց ձեռքն էին առել ամէն ազդային գործ և ամէն ինչ տնօրինում էին իրենց քմահանոյքի համաձայն։ Նոքա հալածում էին արժանաւոր անձերին, և իրենց բարեկամներին միայն բարձրացնում էին պատրիարքական, տոտղնորդական և ուրիշ ազգային պաշտօններին։ Միւս կողմից ժողովուրդը, արհեստաւորների խմբակցութիւնները, զրգաւուած ամիրաների բոնակալութիւնից, կոիւ էին բարձրացրել նոցա դէմ և

վերջապէս յաջողիլ էին ազգային դործերի մաս
տակարարութիան համար զումարել տալ Երես-
նից ժողովը, ուր 16 ձայն ամբուաներինն էր և
14 ձայն հասարակ ժողովրդինը Երեսնից ժողո-
վին յաջորդեցին Հոգեոր և Գերազոյն ժողովնե-
րը՝ որոնք նիստ զումարելով Պատրիարքարա-
նում, վարում էին հայոց ազգային (քաղաքա-
յին) և կրօնական գործերը։ Պարիղի մտաւոր
ուժերը Պօլիս դարձան և սկսան ծառայել ազգա-
յին լուսաւորութիան Խթիւճիան հիմնեց Մա-
սիս թերթը, որ խոշոր գեր ունեցաւ հայ ազգի
վարչութեան, լեզուի ու կրթութեան դործի մէջ։
Հիմնուեցաւ առաջին Ռւսութեական խորհուրդը,
որի պաշտօնն էր յատկապէս հսկել հայ դպրոց-
ների և կրթութեան ծառալմտն վրայ։

Ռուսինեանը դառնալով Պօլիս, ընտրուե-
ցաւ անդամ Ռւսութեական ժողովի, ուր ունե-
ցաւ նշանակելի մտսնակցութիւն։ Այս միջոցին
հրատարակութեան տուաւ նա իր Ռւղղախօսու-
թիւնը (1853)։

Ռուսինեանի Ռւղղախօսութիւնը միծ յու-
ղում յառաջ բերաւ կրօնական ու պահպանողա-
կան դասակարգի մէջ։ Նրա մտցրած փոփոխու-
թիւնները հայերէն լեզուի մէջ, աշխարհաբարի
համար պահանջած իրաւունքները այնպէս տա-
րօրինակ թուացին, որ շատերը գրգռուելով նրա
գէմ և համարելով լեզուն իրքն կրօնական ան-
բանաբարելի ստացուածք, պահանջեցին պատ-
րիարքից նպավել Ռուսինեանին։ Այս բանա-

գրութիւնը դեռ տեղի չունեցած՝ Հոգեոր և Գեհ-
բագոյն ժողովսկրը զիջան մի քիչ և հրաման
արձակեցին որ Ազգային ուսումնական խորհուր-
դը մի յանձնաժողով կազմէ՝ Ռուսինեանի զիր-
քը քննելու և սրբագրելու համար Այս յանձնա-
ժողովին մասնակից էր նաև Ռուսինեանը:

1854 թուին՝ նոր ազատուած Յունաստա-
նը յանկարծ ապստամբութեան դրօշը բարձրա-
ցրեց Օսմանեան կառավարութեան դէմ, այս ա-
պստամբութիւնը զսպելու համար կառավարու-
թիւնը ուղարկեց նշանաւոր պիտական զործիչ
Ֆուատ փաշային, որին՝ իրրե անձնական բժիշկ
ընկերանում էր Ռուսինեանը Այսպէսով յանձ-
նաժողովի գործունէութիւնը ընդհատուեց:

Պատերազմը տեսեց 6-7 ամիս, և այսքան
ժամանակ Ռուսինեանը դործում էր բանտկում:
Պատերազմից յետոյ վերադարձաւ Պօլիս և սկը-
սաւ թարգմանել ֆրանսիացի յայտնի զրող
էմէ-Մարտէնի «Մայրիրի դաստիարակութիւնը»,
որը մինչև այժմ անտիպ է մնում: Քիչ յետոյ
հրատարակեց Տարեցոյցը (1855 թ.):

Ինչպէս Ռուզախոսութիւնը, նոյնպէս և Տա-
րեցոյցը սակաւաթիւ պաշտպաններ միայն ու-
նեցաւ. իսկ ամբողջ պահպանողական կուսակ-
ցութիւնը, միանալով ամերայական և կրօնական
դասակարգերին, ուաքի կանդնեց. Ազդային Հո-
գեոր ժողովը հոչակեց Ռուսինեանին հերետի-
կոս և առանձին ոլտրասաւզըով արգելեց այդ
զրքերի վաճառումը: Միւս կողմից հրաման ար-

ձակեց որ հայ տպարանները իրաւունք չունենան այսուհետեւ տպագրելու որևէ զիրք, առանց կանխաւ ստանալու Հոգեոր ժողովի հաւանութիւնը:

Այս նոր զրաքննութիւնը, տպագրական դործի կաշկանդումը, խօսրի ազատութեան բըռնաբարումը մեծ զրգութ առաջ բերին ազատական կուսակցութեան մէջ, որոնք միացեալ ուժերով ոտքի կանգնեցան՝ չոփ դնելու համար կղերի և ամիրաների ոտնձգութեանց: Յակորիկ Կրծիկեան, Սերվիչէն, Ռուսինեան, Տատեան, Օսեան, Պալեան և Աղաթօն այս կուսակցութեան պարագլուխներն էին: Բազմաթիւ խորհրդակցութեանց ու զաղոնի ժողովների մէջ վերջապէս կազմուեցաւ Տաճկահայոց Ազգային Սահմանադրութիւնը, 1848-ի ֆրանսիական յեղափոխութեան սահմանած սկզբունքների համաձայն, այն է տանհատական իշխանութեան սահմանափակումը ժողովրդական քուէով: Պատրիարքի նախագահութեան կանոնադիրը: Ամիրաները մէջ ընկան, ձղձգեցին, կառավարութեան տռաջ չարախօսելով՝ չթողեցին որ վաւերացուի, բայց վերջապէս երբ ժողովրդի բազմութիւնը պատրիարքարան խուժելով՝ ցած առաւ պատրիարքին, Տէրութիւնն էլ համակերպեց և տռաւ իր վաւերացումը (1860):

Նորակաղմ Սահմանադրութեան հոգին, նրա

ամենազործունեայ անդամը դարձաւ Ռուսինեան:

Սահմանագրութեան հաստատութիւնից միայն մի ամիս էր անցել. յանկարծ բանկում է Լիբանանի ապստամբութիւնը, Ռուսինեանը՝ որ ընտրուել էր Կայսերական քաջական ընկերութեան անդամ և Սպարապետական հիւանդանոցի բժիշկ, ստիպւում է ընկերանալ ֆուատ փաշային, որ Օսմանեան բանակի գլուխն անցած դնում էր զսպելու ապստամբութիւնը: Նապոլէոնի միջամտութեամբ չուտով վերականգնում է խաղաղութիւնը. Լիբանանը ստանում է կիսանկախ կառավարութիւն, քրիստոնեայ կառավարչով: Առաջին կառավարիչն է լինում մի հայ փաշայ: Կազմուում է մի յանձնաժողով, որի անդամ է նշանակում նաև Ռուսինեանը: Նրա պաշտօնն էր զտնել բռնի մահմետականացրած քրիստոնեաներին և դարձնել իրենց նախկին կրօնին: Ռուսինեանը յաջողութեամբ կատարում է իր վրայ ծանրացող պաշտօնը, և երբ ամէն ինչ խաղաղուում է, նու ետ է դառնում Պոլիսու Նաայս անդամ այցելում է Կիպրոսը և Կիլիկիան, ծանօթանում է այս երկրի կտրիճ հայերի հետ և նրանցից ներշնչուած դրում է «Երրոր բացուին» դեպեցիկ երգը:

Այդ օրուանից սկսաւ Ռուսինեան իր մեծագոյն գործունէութիւնը Ազգային վարչութեան մէջ. նա ամբողջապէս նուիրուեց ազգին: Երբ ներբին կորուների պատճառով Տէրութիւնը ջըն-

ջեց Սահմանադրութիւնը, ինքն էր մէկը այն
զլիստոր աշխատողներից՝ որոնք ետ խլեցին
նրան կառավարութիւնից։ Ինք եղաւ որ առաջ
ջին անգամ մացրեց մեր մէջ ապակեղբոնացման
զաղափարը և նոյնը ջանաց տարածել գաւառներում։ Քանի քանի անգամ նա ընտրուեց Ազգային ժողովի առենապետ, Սահմանադրական
օրինադրքի քննիչ, կազմից վարչական ժողովների ներքին կանոնադրութիւնը, եւրոպական սահմանադրական երկիրների ժողովական կարգ ու կանոնը մացրեց մեր մէջ, նոյա առենական բառերը ճարտար կերպով հայերէնի թարգմանեց և գործածութեան մէջ մտցրեց։ Բազմաթիւ են այն ճառերը՝ որ խօսեց Ռուսինեանը Ազգային ժողովաւմ՝ իր զաղափարների և սկզբունքների պաշտպանութեան համար Անուանի են սոցամէջ երուսաղէմի պատրիարքի ընտրութեան, էջմիածնի, Սսի և Աղթամարի հարցի, և Ազգային տուրքի առթիւ խօսած ճառերը։

Երեք հիմնական սկզբունք է տեսնեում Ռուսինեանի բովանդակ դործունէութեան մէջ։ Հակակղերականութիւն, ժողովրդաուիրութիւն և սկզբունքի մոլութիւն։ Մինչև սահմանադրութիւնը հայ մտաւորականներից շատերը հակառակ էին կղերական դասակարգին, երբ Սահմանադրութիւնը հաստատուեցաւ և դասակարգերը այլ ևս վերացան ու ամէն ոք օրէնքի տրամադրութեան ենթարկուեց, հակակղերականներն էլ զիջան և օրից օր հաշտութեան ու համագործակ-

ցութեան ճանապարհի մէջ յառաջդիմեցին։ Ռուսինեանը միայն մնաց մինչև վերջ էլ անողոք։ Ազգային ժողովում մի օր նա գոչում է եկեղեցականների երեսին, «Դուք, զուք, զուք էք հայութեան ամէն դժբախտութիւններուն ծնողը»։ Ընդհակառակը ժողովուրդի համար մի առանձին սէր, մի առանձին գուրզուրանք ուներ։ Ամէն անգամ երբ «Ժողովուրդ» բառն էր արտասահնում, նրա աշքերի մէջ մէկ ուրիշ ցոլը էր փայլատակում։ «Ժողովուրդ, զոչում է նա Ազգային ժողովում, դժւն ես տէրը, քու հրամանիդ պիտի հնապանդին ամէնքը»։

Ռուսինեանը սկզբունքի մոլի մարդ էր. նա մինչև որ չբացարէր մի որիէ զործի սկզբունքը, մինչև որ նրա զանազան մասերի վրայ կատարեալ համոզում չփոյացնէր, չէր ձեռնարկել նրա զործադրութեանը։ Բայց մի անգամ որ համոզուեց, այլ ես աշխարհիս ոչ մէկ զօրութիւնը, ոչ մէկ հանգամանք կարող էր նրան հոկանգնեցնել, կասեցնել իր մտքից։ Այս անյողդողդ սկզբունքին միացնում էր նա կամքի ուժ և ձարտասան լեզու։ Իր գեղեցիկ, կորովի ձառերի մէջ նա ոչ թէ սրտին, այլ մտքին էր խօսում։ Փաստերով, ապացոյցներով կռւում, պատճառարանում, համոզում էր իր ունկնդիրներին և աշխատում էր իր գրած սկզբունքը լիովին ընդունել տալ նրանց, առանց զիջումների։ Զէր թոյլ տալիս որ իր պահանջներից մի առու, մի կէտ անգամ փոխուի, յապաւախիւ

Այս խօսքիըով պէտք չէ կարծել թէ մուսինհանը յամառ էր. ոչ. նա լսում էր ուշադրութեամբ իր հակառակորդների բոլոր կարծիքները և երբ տհանում էր թէ նոքա անզօր են ջրելու իր սկզբունքը, այն ժամանակ իրն էր պաշտպանում։ Ահա թէ ինչպէս է բացատրում մուսինհանը իր այս գործելակերպը։ Հետեւեալ գեղեցիկ զբական հատուածում։

«Ես չ'եմ սիրեր ամենեին ոչ զոք խստիւ իմ կողմս բաշել. նախ՝ կողմ չ'ունիմ, եթէ կողմ մը կայ, անի բնծի համար՝ իրաւանց կողմն է, և ամենուն հետ իմ ալ յայն կողմը հասնիլ է փափաք. ամենայն ճանապարհ որ հան կը տանի՝ բարի է ինծի համար. առանց կրից, որպէս առանց նաև խապաշարման, ես ամենուն հետ կը քայլեմ. ամենուն ալ ցուցած ճանապարհնեն կ'երթամ» ցուցնողին առաջնորդութեամբը և անոր ձեռքէն սիրով բռնած. ճանապարհն խոչընդուները մէկզի ընելու, դժուարութեանց յաղթելու՝ ես ալ իմ կողմէս կ'օգնիմ ըստ կարի, զայս երկն ալ մինակ անոր չ'եմ ձգեր. և չ'եմ ձգեր զայն ձեռքը զոր մէյ մը բռնեցի՝ մինչեւ որ ցանկացեալ նողատակին չը հասնինք մէկտեղ։ Եթէ համարնիք, եթէ կրցանը իրաւանց տաճարին դուռը ձեռք առնուլ, կը մտնենք, և հոն՝ ես կը խոնարհմ արդարութեան երկրողագելի պատկերին և անոր լուսապայծառ տեսլեանն առջե, և զիս հոն տանօղ ձեռքը ջերմեանդ սրտիւ կը համբռուքիմ. Իսկ եթէ՝ Աստուած չ'ընէ, ոհեղ պողոտայի մը մէջ ընկնինք, զլուխնիս ապառաժի զայ կամ ոտքերնիս խորխորատի մը բերան, և ալ ճար չ'ըլլայ անդին անցնելու, ես իմ ու-

ղեկիցս հոն՝ այն գմնեայ յուսակտուր վի-
ճակին մէջ չ' իմ կրնար լքնել նորէն ձեռ-
բէն բոնած՝ ետ դառնալ կը յորդորիմ և
մէկ անգամ ալ իմ ճանապարհս փորձել
կ'աղաչեմ»:

Ռուսինեանը տեսական աշխարհի մարդ
էր. գործնակուն կեանքի յարուցած խոչընդու-
ներին, դարերի նախապաշարմանց և հնաւանդ
սովորութեանց վրայ բնաւ ուշադրութիւն չէր
դարձնում: Այս պատճառով է որ իր քարոզու-
թիւնները անընդունելի մնացին, իր յօրինած հա-
յերէնը բնքը միայն գործածեց, իր գործունէ-
ութեան մէջ նա շարունակ հակառակութեան
հանգիպեց և համակերպել չուզելով՝ վերջապէս
ստիպուեց հրաժարուել ազգային գործունէու-
թեան ասպարէզից (1871):

Այս լուսւթեան ժամանակն էր որ նա հրա-
տարակեց իր *Տարեցոյցի երկրորդ տպագրու-
թիւնը* (1872), աստղաբաշխական, տամարագի-
տական և երկրաբանական քննութիւններով,
Վիկտոր Հիւզոյի «Ռիւյ Պլաս» թարերգութեան
ուսանաւոր թարգմանութիւնը՝ իր հայերէնով
(1873), նշանակուեց Կայսերական Բժշկական
Համալսարանի փիլիսոփայութեան ուսուցիչ, որի
համար էլ կազմեց առանձին գաստադիրք: Այս
աշխատութիւնը այնպէս շտապ պատրաստեց նա
և այնքան յոգնեց նրա վրայ, որ հազիւ ուսար-
տած՝ ուղեղային կաթուած ստացաւ և մի զի-
շերուայ մէջ յանկարծաման եղաւ (1876 նոյ. 29):

Ռուսինեանը թողել է շատ ձեռադիր աշ-

խառաւթիւններ, որոնք մեծ մասամբ մնում են
անտիպ. այսպէս՝ ատենաբանութիւններ, ճառեր,
ոտանաւորներ, նամակներ, բժշկական բառերի
բառարան, թարգմանութիւններից՝ Լամալտինի
Դաշնակները, Մտածութիւնները և այլն:

Նրա ուսանաւորների մէջ ամէնից զեղեցին է Կիլիկիան, որ հեղինակը զրել է Կիլիկիոյ մէջ ճամբորդած ժամանակ, հայրենի հողի ներշնչումով: Այս երգը կազմուած է Փրանսիականի նմանողութեամբ, որի մէկ ուրիշ նուազ զեղեցիկ նմանողութիւնն ունի Պէտիկթաշլեանը՝ Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն յետ զանաշունչ ձմերայնուոյն: Կիլիկիան աղպային, տարածուած երգ է: Կիլիկիոյ հայերը՝ որ մեծ մասամբ տաճկախօս են, թարգմանել են նոյնը նաև թուրքերէնի (պիր աշըլսա եազ գարուլար) և երգում են հայերէնի նղանակով.

Երրոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձեկո,
Չքնաղ երկին մերս Արմենիոյ,
Երր փայլէ իւր քաղցրիկ օգեր,
Երրոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երրոր ծառերն հաղնին անը,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհն որ ինձ ետուր արե:

Տեսի դաշտերն Սիւրիոյ,
Լիառն լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկիրն Իզալիոյ,
Վենետիկ և իւր կոնտոլներ.
Կղզի նման չիք մեր Կիպրոյ,
Եւ ոչ մէկ վայր է արդարե,
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհն որ ինձ ետուր արե:

Հասակ մը կայ, մեր կենաց մէջ,

Աւը ամենայն իղձ կաւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տեսչ
Յիշտաւակաց իւր կարօտի.
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյ տալով վերջին բարի,
Երթամ ննջել յիմ կիւլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ

Թուսինեանը յաջող թարգմանիչ է: Թէհ
թարգմանութիւնները հայ զրականութեան պատ-
մութեան մէջ առ հասարակ տեղ չունին, բայց
Թուսինեանի թարգմանութեանց մէջ կան մի քա-
նիսը՝ այնպէս վեզեցիկ, այնպէս պարզ ու բնու-
կան, որ կարծես թէ ինընազիր լինէին:

Այս թարգմանութիւններից լաւազանը ժօ-
ղէքին Սուլարիի Փառատեհնչ անութչն է, որը
ամբողջապէս դնում եմ այստեղ իբր նմոյշ:

Մին եղվար հաղ ունէնայի՛ զիւր րլլար, զար կամ
թէ ձործոր,
Վազուկ ջըսով՝ թէհ քըչիկ, վըտակ ըլլար, ակ կամ
հեղեղ,
Մէջը մին ծառ կը տրնկէի՛ ծիրանի, ծոր կամ
թէ խնծոր,
Մէջը մին հիւդ կը շինէի՛ աղիւս, եղէզ և
կամ բազեղ:

Մասիս վերե մին սիրուն բայն՝ բըրդէ, փետրէ կամ
սիզահիւս,
Հանդիսա կուտար մին երգեցիկ՝ ճանրիկ, ճնճղուկ
կամ ծիծանիկ,
Հիւդիս ներսե հեշտ բնկողնիկ՝ ասկախ, օրրան
կամ պրտուանիւս,
Հանդիսա կուտար մին մանկուհայ՝ թուխ, կասկա-
ներ կամ խարտահչիկ:

Մին եղվարէն հւել չ'աւզեմ. շափս ըլլան ճիշտ թող
լոյս և սէր
Ամենազեղ կուտին զոզուրին՝ որ սիրոս ու աշո
յինքն պրտէր,
«Կանգնէն կաց զո՞ հոդ՝ կ'ըսէի՛ ահա ծընաւ նոր
աշաւուրչ.

հարցնէլու, ուր սրտեր կը կարդացվին: Ո՞ւր
էն այն օրէրը որօ զիշեր կը լլային և այն
զիշերները որ տիւ կը լլային և զեռ մեր
խօսքերը չ'էին սպառէր և զեռ մեր սրտե-
րը չ'էին յագէնար: Անցան այն երջանիկ
ժամերը, կորուսի այն ցանկալի խօսակից-
նէրս, զ'ոմանս ի յաւիտեան, աւաղ, և զոմի
ի պանդըթատութեան... շատ եկաւ բախտին
մեր երանութիւնը, բայց չ'անցաւ ու չ'անց-
նիր սրտէս անոնց յիշատակը՝ միակ սփո-
փանքս, աղքատին մխիթարու Կրկնակ հա-
ռաչանքդ ու Տիմոթեայ (իր թղթակիցնե-
րից մէկն է) ձայնն որ կը լսեմ երբ եր-
բեմ, կարթնցնեն յիս այն յիշատակնէրը
ու կակիծնէրս կը նորոգին: Ի՞նչպէս չ'ըլ-
լամ առանձնամոլ, երբ կամուրջէն անցնիմ
ու դառնամ ու այն խուժանին մէջ ձեռք
մը չ'ելլայ ձեռքս սեղմէլու, ձայն մը ձայ-
նիս և սիրտ մը սբորիս պատտախանէլու:
Շատ էն մարդիկ, լայն է աշխարհս, մոր-
դիկ, աշխարհ, երկինք տաղտուկ էն ոչքիս.
Ճզգիտէմ ի՞նչ է ուզածս, սա կըզգամ որ
հոգւոյս նեղ կը թըւի իր ջնջին ծրարը և
զանի պատուէլ կը փութայ. բան մը չ'եմ
աեսնէր որ զիս զրօնէ, բան մը որ զիս
աշխարհիս յարէ. չիք մօտս բարեկամ մը՝
որուն սիրտ բանամ. մարդոց արհամարհու
ծիծաղին նիւթ չըտալու համար, այս, մար-
դոցմէ հեսի և գուցէ վայրենացեալ՝ ևս
միւս ևս անբախտ կոչեալ ի սեղան կէնին՝
շիրմին հանգիստը կըսպասիմ....:

Մի տար բարեկամ և չ'եմ հաւատար որ
կարենաս աալ իմ երկար լոււթիւնս ան-
տարբերութեան կամ թմրաւթեան մտեր-
մական զգացիցս. ոչ ամեննին, այլ ծուլու-
թեանս տուր քիչ մը կուզիս նէ, բայց շատ
մը շփոթութեան մտացս տուր, յուսահա-
տութեանս, հոգւոյս այն բայքայեալ վիճա-

կի՞ն՝ զոր զիրը ու զրիչ չեն կարօղ ըսի
բացատրել. արգեօք հոգին կը նկարվի,
զգայք կը զծվին. ցաւը կը զգացվի, ձայ-
նը կը լովի, բայց թղթի վրայ չեն առ-
նվիր:

Դու կը հառաջես, բարեկամ, ես կը
հեծեծամ. զրէ միշտ ինծի, կրկնէ յաճախ
հառաջանքդ. որպէս հեշտառթիւնը կրկնու-
թեամբ կը սպասին, նոյնովէս և թախծու-
թիւնք կրկնութեամբ կը մեղմին. ինծի հետ
նամակնէրդ մի համբէր, իս տղատ թող երբ
կարօղանամ զրէլու. վարէ իս իրքն հիւանդ
կամ իրքն զեղծ մանուկ. այսափիկ ալ ինք-
նամուռաթիւն ներէ ծեր բարեկամիդ՝ որ
քեզ պինդ կը սիրէ»:

Սակայն Ռուսինեանի մեծաղոյն արժանիքը
կազմում են իր օրէնքները և այս օրէնքների
առթիւ խօսած բազմաթիւ ճառերը, որոնք զըտ-
նում են Ազգային ժողովի տահնագրութեանց
կամ զանազան թիրթիրի մէջ և որոնց համար
Ներսէս պատրիարքը տուել է Խուսինեանին
«Հայոց Օրէնսդիր Սօլօն» տիտղոսը՝ Ճառերից
զլիաւորը «Ազգային Հանգանակութիւն», արգ-
ուել է առանձին զրքով և Ռւզախօսութեան
լիգւով (1865). Այսաեղ Ռուսինեանը խօսում է
Ազգային տուրքի մտարն: Ազգային տուրքը՝ պե-
տական հարկերից անկախ այն գումարն է՝ որ
Տաճկառաանի հայ ժողովուրդը բարոյապէս պար-
տաւոր է վճարել պատրիարքարանին, հայ ազ-
գային վարչական պաշտօնէութեան ծախսերը
հոգալու համար: Ռուսինեանը Ազգային տուրքը
հաստատում է պարտքի և իրաւունքի սկզբուն-

բի վրայ, որ Ազգային Սահմանադրութեան կանոնագրի տուաջին և հիմնական օրէնքն է: Ազգային տուրքը օրինաւոր պարտք է և ոչ թէ նուչը: Իշխանութիւնը ի նկատի ունենալով անհատների նիւթական կարողութիւնը, արդարութեամբ իւրաքանչիւրին ինկած բաժինը պիտի որոշէ, և անհատը այլ ևս իրը պարտք պիտի վճարէ այդ բաժինը և ոչ թէ իրը ողորմութիւն կամ բարեգործութիւն: Տուրքի բաշխման գործողութեան մէջ իրը գտաւուոր է նշանակում խիղճը, որով պիտի որոշուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը. մինչդեռ աւելի արդար պիտի լինէր, եթէ հաստատուն վիճակազրութեան վրայ հիմունէր տմէն ինչ: Ըմբուռների, այսինքն Ազգային տուրքը չվճարողների համար իրը պատիժ որոշում է ազգային իրաւունքներից զրկում:

Խուսինեանի գործիրը, ինչպէս ասացինք, մեծ մասամբ անտիպ են, միւսները ցրուած այսու այն թերթի կամ ժողովածուի մէջ: Դոցամբողջական հրատարակութիւնը ապագայի գործ է:

2. ՄԿՐՏԻՉ ԳԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(1828—1868)

Մ. Մամարեան—Հայկական նամականիր. Զմբռու-
նիս 1872, էջ 213—219.

Ա. Երիցեան—Խմ ձահօթութիւնը Պ. Պէտիթաշ-
լեանի հետ. Փորձ, 1877, № 14, էջ
186—197.

Հ. Ա. Երեմիան—Հայ Հռովմէական զրականու-
թիւն Բազմավէպ, 1900, էջ 531—4:

Պ. Ալթունեան—Մ. Պէտիթաշլեան (քննադատա-
կան փորձ). Մուլճ 1902, № 11:

Լ. Յ. Վասարան Թիֆլիսի հրատարակութեան:
Ю. Веселовский—Армянские поэты.

Ա. Զօգանեան—Մ. Պէտիթաշլեանի կեանքն ու
գործը. Փարիզ 1907 (ընդարձակ գործ,
որից արտասանուած մտենիր ունին Անա-
հիս 1903, թ. 2—3 և Մուլճ 1905,
№ 5 7):

Մեծ շարժութերը մեծ գործիչի պէտք ու-
նին. իսկ ամէն մի մեծ գործիչ պիտի մեայ ան-
զօր, եթէ չգտնամին որտեր՝ որ նրա ձայնին
արձագանգ տան, և բազուկներ՝ որ նրա գործին
գործակից լինին:

Դարերի գերութեան մէջ ստրկացած հայու-
թիւնը ցնցել թուրքական անշարժութեան մէջ
ոչ միայն ազգային ինքնագիտակցութիւնը, այլ
և մարդկային արժանապատութիւնը մոռացած
հային ազգային ինքնուրոյնութեան գաղափար
ներշնչել, նրա վարչական ազատագրութեան
գործը պատրաստել, դա այնպիսի մի մեծ շար-

ժում էր, որ չէր կարող մէկ անձի աշխատութեամբ յառաջ գալ: Այս պատճառով 50-ական թուականների շարժման գլուխը մենք տեսնում ենք մի ամբողջ խումբ ազգային գործիչների, Ռուսիանեան, Օտեան, Պալեան, Տատեան, Աղաթօն, Աէրվիչէն, Պէշիկթաշլեան, Ծերենց և այլն, որոնցից ոմանք զուտ վարչական գործունէութիւն են ցոյց տուել, միւսները վարչական ու դրական միանդամայն:

Պէշիկթաշլեանը վերջիններից է:

Մկրտիչ Պէշիկթաշլեանը ծնուել է 1828 թուին, Պոլսի Օրթաղիւղ թաղում. նա հայ կաթոլիկ ընտանիքից էր, աղքատ ծնողների զաւակ: Մանուկ հասակում կորցրեց իր հօրն ու մօրը՝ ժառանգական թոքախտից՝ որ բոյն էր գրել նոցտ ընտանիքի մէջ: 11 տարեկան հասակում որբիկը տարուեցաւ Պաղուայի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, ուր շուտով ցոյց տուաւ իր զրական ընդունակութիւնը: Վարժարանն աւարտելուց յետոյ՝ միարանների յատուկ հրատէրով՝ մտաւ Վենետիկի Մխիթարեան վանքը, աւելի կատարելագործուելու համար: Այսուղ մնաց մի քանի ամիս և յետոյ ուղղակի վերադարձաւ Պօլիս:

Իտալիան միծ ազդեցութիւն ունեցաւ Պէշիկթաշլեանի վրայ. զեղարուեստի այս հայրենիքը աւելի կրթեց, նրբացրեց ու կատարելագործեց նրա բնաձիր ճաշակը: Եւրոպական գրականութեան գլուխ-գործոցները, թատրոնը, նկար-

Հութիւնը, երաժշտութիւնը, գեղարուհստից հոյակապ թանգարանները և վերջապէս եւրոպական բարքերը, կենցաղավարութիւնը, բաժան բաժան եղած Խոտացոց ընդհանուր ազգային քաղաքականութիւնը, աղատասիրութիւնը և ջերմ հայրենասիրութիւնը լցրեցին Պէշիկթաշլեանի հողին համանման գգացումներով:

Մենք ճանաչում ենք Պէշիկթաշլեանին իրարև գրադէտու բանասահզծ միայն, բայց Պէշիկթաշլեանը մի առաջնակարգ ազգային գործիչ է, որ խօսուր դեր է կատարել հայ ազգի ընդհանուր դաստիարակութեան, աղնուացման, քաղաքակրթութեան, մէկ բառով եւրոպացման համար:

Մինչև այս ժամանակ մեր ժողովրդի մէջ տիրում էին կոպիտ ասիական բարքերը։ Մենք մի աղդ չեինք, այլ մի համայնք, իրարու հակառակ և խրաբ մէջ իսկ անմիարան երեք կրօնուկան հասարակութիւններից բազկացած։ Լուսուրչականները հայ չեին համարում իրենց այլազաւան եղբայրներին։ կամուկները իրենց ֆրանկ էին համարում, իսկ բողոքականները՝ անգլիացի կամ ամերիկացի։ Հայ լեզուն չունէր ընդհանուր գործածութիւն։ կաթոլիկը խօսում էր զուտ թուրքերէն, ամօթ համարելով գործածել հայերէնը՝ որ լուսաւորչականի լեզու էր ընդունում, լուսաւորչականը խօսում էր մի այնպիսի հայերէն, որի երեք քառորդը թուրքերէն էր։ Զկար ազգային միութիւն, քաղաքային ինք-

նաճանաչութիւն։ Զկար գեղարուեստ, ոչ հայկական թատրոն, ոչ հայերէն երգ։ Հայի թատրոնն էր թուրքերի նէյալը, հայի երգերն էին թուրքերէն անբարոյական շարքիները կամ հայերէն շարականները՝ որոնց իմաստը չէր հասկանում և որոնք առօրին կեանքի, խնջոյքի, սիրոյ ու գուարճութեան համար շինուած չէին անշուշտ։ Զկար միութիւն, մէկ զաղափարով տոգորուած ու նրա յաջողութեան համար աշխատակցող ուժերի համախմբում, ընկերութիւններ՝ որոնք առանձինն վերցրած անդամների փոքրիկ ու անարժէք միջոցները իրար վրայ բարդելով կարող լինէին հասնել մեծագոյն նպատակների իրադուման։

Շարժումը պէտք է Եւրոպայից գար։ Մեռած ասիացին չէր կտրող իր միջից ստեղծել այդ բարեհնորսկութիւնը։

Եւ ահա Եւրոպական զաղափարներով մնուած, իտալական զաստիարակութեան մէջ արդէն Եւրոպացի դարձած Պէշիկթաշլիանը գոլիս է մեր մէջ այս բոլորը բարեփոխելու և նոր աղղային կեանքի սկզբունքները քարոզելու և տարածելու։

Նա ընարում է ուսուցչական ասպարէզը եթէ կար մեր մէջ ամենաապերախտ մի պաշտօն, դա՝ այդ ժամանակ, հայ ուսուցչութիւնն էր։ Հայ ուսուցիչը մերժուած էր հաւասարապէս ամիրաններից՝ որոնք միայն փողն էին պաշտում, և ժողովրդից՝ որ չզիտէր գնահատել

ուսումը։ Բայց եթէ յանցաւոր էին սոքա իրենց անտարբերութեան պատճառաւ, նոյնչափ և առելի յանցաւոր էին նաև ուսուցիչները՝ որոնք չէին ճանաչում իրենց արժանապատւութիւնը, կարող չէին անտարբերների մէջ յառաջ բերել սէր դէպի ուսումը և գիտութիւնը, նիւթական չնշին վարձատրաթեան փոխարէն իրենց զրիչը վաճառելու պատրաստ, շողորորդ հացեատակներ էին, ամերանների ստրուկ։

Պէշիկթաշլեանը ջնջեց այս կեղար հայ ուսուցի երեսից, և այն արհամարհուած ասպարէզը միջոց դարձրեց իր գաղտփարները աարածելու համար ազգի մէջ։

Ամէնքը տեսան ու ճանաչեցին այս ջնաշխարհիկ մարդուն։ Ինչպիսի բարի, աղնիւ, համեստ, պարզասէր ու անշահանսէր բնաւորութեամբ անձ էր նա։ Իրրե իսկական ողեպաշտ՝ նա արհամարհուամ էր նիւթը և ապրում էր միայն հոգու համար։ Դաշտում թէ տան մէջ, մենակթէ հանգիսում՝ նա ապրում էր վերացած իր զեղարուեստական հմայքների մէջ և իր աղնիւ հոգու ցոլքերը ափուում էր ամէնքի վրայ։ Իր անունը փառաբանում էին բոլորը, բայց նա գովեստների առաջ անտարբեր էր։ Ամէնքը սիրեցին նրան։ Հաստրակ ժողովրդից սկսած մինչեւ ամէնքից բարձր դասակարգը, աղէտ և ուսեալ հաւասարուպէն գնահատում էին նրան։ Թէև մարմնով տկար, ժառանգական թոքախտաւորի յաւաճուն տկարութեամբ, բայց կորովից էր հոգին։

ձայնը յատակ, քաջահնչիւն. վսիմ ճարտասանութիւն, գեղեցիկ լեզու ունէր. երբ նա խօսում էր՝ ձայնը ամէնքի որտում արձագանգ էր զտնում, ազգի լայն սիրով համակռւած շեշտերը խորսնկ տպաւորւում էին հոգիների մէջ. նրա տրամարանութեան առաջ ամէնքը համոզւում էին: Զկար մի ընկերական հանդէս, ուսումնական մի ժողով կամ ազգօգուտ մի հաւաքոյթ, որ չփնտոէր նրա մասնակցութիւնը և նրա մասնակցութեամբ նոր փայլ չստանաբրւ նրա տուաջ լայն բացուեցան դըպրոցների և ամիրաների դաները. ազնուականները պարծենուում էին նրան ուսուցիչ ունենալով իրենց տան մէջ. որ ընտանիքի մէջ որ մտաւ՝ նոյն ընտանիքի սիրելին, մտերիմ մէկ անդամը դարձաւ: Բայց յատկապէս սիրելի էր Օտեան-Պալեան շրջանակին, որոնք մեր ամենաբարձր ազնուականները, եւրոպական գաղափարներով վարժուած ազգային զործիչներ էին միաժամանակ, և զրեթէ պաշտում էին Պէշիկթաշլեանին:

Ուսուցչական ասպարէզը լաւագոյն միջոցն էր Պէշիկթաշլեանի համար շփուհլու ամէնքի հետ, մտնելու ամէն տուն տուանց գուանանքի խորութեան և այսպէսով իր գաղափարները տարածելու թէ կաթոլիկի, թէ լուսաւորչականի և թէ բողոքականի մէջ:

Պէշիկթաշլեանի քարոզութեան մեծագոյն նպատակը ազգային միութիւնն է: Մեր ազգի երեք կրօնական բաժանութերը համարելով չափազանց վնասակար՝ ազգային ամբողջութեան

համար, նա քարոզում էր միութիւն և եղբայրութիւն. նա քարոզում էր թէ կրօն, լեզու և ազգութիւն իրարից տարբեր բաներ են և թէ կաթոլիկ, բողոքական ու լուսաւորչական միևնոյն հայ ազգի անդամներն են: Իրեն առաջին կորիցը այս միութեան նա իր բոլոր ուժերը գործ դրաւ և իր ընկեր Մրապիսն Հեքիմեանի հետ հիմնեց Համազգեաց ընկերութիւնը (1846), որին մասնակցում էին երեք համայնքներից էլ սննիութիր և որի նպատակն էր լուսաւորութիւնը, կրթութիւնը, գիտութիւնը և արուեստները տարածել Հայոց մէջ՝ միահամուռ ուժերով: Ընկերութիւնը բացու լսարան, ուր խօսում էին յայտնի անձնառութիւններ՝ ազգասիրական եռանդ արծարծող նիւթերի վրայ: Այս լսարանում խօսեց Պէշիկթաշլեանն էլ իր երկու ազգասիրական ճառաերը: Ազգի մէջ երկու ազգասիրական այս միութիւնը երգեց Նա «Եղբայր հմբ մեր» զեղեցիկ երգով՝ որ այնուհետեւ ընդհանուր ազգի սիրած մէկ երգը գարձաւ:

Կաթոլիկ հայոց մէջ Պէշիկթաշլեանը տարածում էր հայերէն լիզուն: Կաթոլիկները, ինչպէս ասացինք, ատում էին հայերէնը՝ իրր լուսաւորչականի լեզու: Հասարակ ժողովուրդը խօսում էր թուրքերէն, ազնուականները աշխատում էին խօսել ֆրանսերէն կամ յունարէն: Պէշիկթաշլեանը իր ամբողջ ազգեցութիւնը գործ գրաւ այս սովորութիւնը վերացնելու, և մաքուր գրական հայերէնի գործածութիւնը տարածելու, սիր-

բելի լնծայելու։ Իր աղնուական աշակերտներից
են օրինակի համար՝ Միքայէլ Փորթուղար փաշա
(բանասէր) և օր. Դահանհան (տիկին Տիւոար
փաշա)։ մեծանուն գրադիտուհին։

Համարելով թատրոնը իրը կրթական նշա-
նաւոր գործօն՝ լեզուի, բարոյականի և ազգային
զգացմունքի տեսակէտով, Պէշիկթաշլեանը յարեց
թատրոնական դորձին։ Այս ժամանակ հայերը
չունէին թատրոն։ Նէրիմեանը՝ որ հայ թատրո-
նի հիմնադիրն է, գեռ չեր կազմակերպած իր
զերասանական խումբը, գեռ ներկայացումները
աշակերտական զրուանքի կոմ հարուստների
առանձին զուարձութեան շրջանակի մէջ էին։ Պէ-
շիկթաշլեանը շտու աւելի տուած տարաւ զործը
1856 թուին նա պատրաստից կաթոլիկ հայերից
սիրողների մի ստուար խումբ, զերասանական
արուեստը սովորեցրեց նրանց և սկառ խաղալ
Օրթագիւղի կաթոլիկ հայոց զորբացի սրահում։
Առաջին երկու ներկայացումները գրաբար էին.
Պէշիկթաշլեանը տեսնելով որ ժողովուրդը համ
շի առնում դրաբարից, դրեց իր տուածին ողբեր-
դութիւնը Կոսնակ, աշխարհաբար լեզուսվ. սրան
յաջորդեցին միւսները, ինքնազիր կամ թուրդ-
մանական, որոնք բոլորն էլ մեծ համակրութեան
արժանացան հայ ժողովրդի կողմից և սմանը
մինչեւ այժմ էլ ներկայացում են։ Օրթագիւղի
ներկայացումները լինում էին շաբաթական երեք
անգամ, ինքը Պէշիկթաշլեանն էլ էր մամնակ-

ցում, վերցնելով մինչև ահղամ գլխաւոր դերերը
և ցոյց էր տալիս մեծ ընդունակութիւն:

Օրինակը արագութեամբ տարածուեց. կազ-
մուեց թատերասէր հասարակութիւն. և թատ-
րոնի գոյութիւնը պահանջ դարձաւ Սորա վրայ
էր որ Հէքիմեան, Պալեան Յակոբ պէյ և ուրիշ-
ներ հիմնեցին առաջին հայկական թատրոնները
Պօլոի գանաղան թաղերում և դերասանական ար-
ուեստը՝ որ միշտ դորոցի ու եկեղեցու
զերահակողութեան տակ էր մնացիլ, ազատա-
դրուեց ու դարձաւ անկախ ասպարէզ:

Պէշիկթաշլեանը տեսաւ իր դործի յաջողու-
թիւնը. սիրողների տեղ տեսաւ այժմ իսկ սկան
դերասաններ, որոնք ըեմը իրենց արուեստն էին
դարձրել. այլ ևս իր գոյութիւնը աւելորդ հա-
մարեց ու յաջողած դործիչի երջանիկ սրտով
հնացաւ այս ասպարէզից:

Մի ուրիշ գեղեցիկ դործ, որին նուիրուեց
Պէշիկթաշլեանը հոգով, երաժշտութիւնն էր Հայ
ժողովուրդը չունէր հայնրէն երգ, այն երգը՝ որ
մէկ կողմէից մարուր զրոկան լիզու պիտի տա-
րածէր և միւս կողմէից ազգային ողի պիտի զար-
թեցնէր մեր մէջ։ Եւ ահա այս նպատակով Պէշիկ-
թաշլեանը զբեց ու թարգմաննց բազմաթիւ եր-
գեր, սիրային, ազգային, նկարագրական, ծանօթ
լինելով եւրոպական երաժշտութեան, ինքը իւ
ձեռքով շինեց, ուրիշներին շինել տուաւ կամ
յարմարեցրեց նրանց առանձին եղանակներ և
տարածեց ժողովրդի մէջ։ Այս երգերից նշանա-

ւոր են Եղբայր ևմք մեր, ի բիւր ձայնից, Ոչ ի՞նչ
անուշ, Մնասցես բարեաւ, Դու զով խնդրես, Ոչ
փող զարկինք, Մինչև մահուն անյիշատակ ի շի-
րիմ և այլն և այլն, որոնց թիւը 33 է, Ինքն է
կապմել մինչև անգամ Բամ փորստանի եղանակը:

Հայելէն երգի կարօտ հայութիւնը սիրեց
այս երդերը, բերնէ բերան թաշելով տարածուե-
ցան նորա ամէն կողմ և ապրում են մինչև այ-
սօր՝ յաւերժացնելով մեծ բանաստեղծի անունը:

Այս ժամանակ կաթոլիկ հայոց պատրի-
արքն էր Անտոն Հասուն կոչուած ճրէշը, որ իր
լատինամոլ կուսակիցներով հակառակ էր կանո-
նած ազատական շարժման, մէկ կողմից ուզում
էր իր ձեռքն առնել բոլոր վարչական պաշտօն-
ները, ժողովուրդը դարձնելով մի անխօս հօտ,
իսկ միւս կողմից աշխատում էր համայնքի մի-
ջից ջնջել ամէն ազգային ձգառում: Այս կուսակ-
ցութեան համար շատ խորթ էր Պէտիկթաշեանի
և նրա ընկերների յառաջ բերած շարժումը: Ի՞նչ
գործ ունէր կաթոլիկ հայը լուսաւորչական ու-
րաղոքական ներձուածող հայերի հետ: Հասունը
ամէն կերպ աշխատեց քայլայելու Համազգեցց
ընկերութիւնը, և երբ վարչական միջոցները
անկարող եղան, զրագարտեց տէրութեան առաջ
թէ այդ ընկերութիւնը հիմնուած է յեղափոխա-
կան նոպատակներով և այսպէս յաջողից փակել
տալ:

Պէտիկթաշեանը չյուսահատուեց: Նրա նա-
խածեռնութեամբ Համազգեց ընկերութեան փա-

խարէն հիմնուեց Բարեգործական ընկերութիւնը, որի նպատակն էր երկրագործութիւնը տարածել Հայաստանի մէջ։ Այս անմեղ բառելի մէջ թագուած էր տակայն աղքային-քաղաքական մի մեծ նպատակ, որիբազործութիւնը դարգացնելով Հայաստանի մէջ, պատրաստելով հայերի մէջ դիտական դէնքերով զինուած հողագործներ, ընկերութեան բուն միտքն էր տարածել այն դադարարը թէ ազդի ոյժը նրա հողն է, զօրացնել հայ տարրը հայ հողի վրայ և հայ գիւղացին զօրացնելով՝ ազգի հիմքերը ամրացնել։

Հասունի ճանկերը յաջողեցան այս ընկերութիւնն էլ յօշոտել։

Անկարելի է մի առ մի յիշել Պէշիկթաշլեանի կատարած գործերը ժամանակակից զանազան ընկերութեանց, կաթոլիկ համայնքի վարչական բարենորոգման ժողովների մէջ և վերջապէս Զէյթունի 1862-ի ազգամբութեան առթիւ: Բաւուկանանանք առելով թէ Պէշիկթաշլեանը 50-ական թուականների մեր ամէնից նշանաւոր աղքային գործիչներից մէկն է։

Բայց Պէշիկթաշլեանը հակառակ իր համբաւին, հակառակ իր վայելած սիրոյն և այն մեծ պատիւներին՝ որ շաայլում էին նրան ազնուականները, ապրեցաւ թշուառ նիւթականը չէր որ պակասում էր նրան, նրա ցաւը հոգհկան էր: Նա սիրեց իր տշակելուու հիներից մէկին (ազնուական օրիորդ Վահանեանը), բայց իր սէրը չփոխարինուեց, առնջուեց նա այս ցաւ

ւով. Նա դարձաւ մռայլ, լուս, մտածկուա, ուրախութիւնը թռաւ նրա սրտից. և վերջապէս ժառանգական թոքախտը երեան ելաւ։ Տարուց աւելի տառապեց նա, գամուած իր անկողնում. բայց իր մահիճը ուխտատեղի դարձաւ. ազգի ամէնից նշանաւոր բժիշկները, ազնուական տիկիններ ու օրիորդներ, գրագէտներ, ազգային գործիչներ՝ բոլորը շրջապատեցին նրան և ամէն միջոց ձեռք էին առնում թշուառ հիւանդի վշտերն սփոփելու։ Մի բարերար՝ անունն անյայտ պահելով՝ 50 ոսկի ուղարկեց նրան. իր օգտին ներկայացուեց Արշակ ողբերգութիւնը, իսկ Հէրիմեան՝ իր Սմբատ ողբերգութեան առաջին ներկայացումը նրա նպաստին նուիրեց։ Սակայն այս բոլոր խնամքները ապարդիւն անցան. և երբ աշունը վրայ հասաւ, վախճանուեց բանաստեղծը 1868 նոյեմբեր 29-ին։

Մոլեռանդ կաթոլիկ կղերը՝ որ նրա կենդանութեան ժամանակ այնպէս հալածել էր նրան, անողոք գանուեց նոյն իսկ նրա մահուան բոպէներին և մերժեց մատուցանել քրիստոնէական վերջին մխիթարութիւնները։ Միայն մի ազատամիտ բահանայ գտնուեց, որ բարեկամների միջնորդութեամբ՝ կատարեց վերջապէս յիշեալ պարտաւորութիւնները։

Մահուանից յիսոյ էլ կաթոլիկները չուզեցին նրան թաղման արժանացնելու Այն ժամանակ ներսէս պատրիարքը՝ որ առանձնապէս սիրում էր Պէտրիթաշլեանին, յայտնեց կաթոլիկ պատրի-

արքարանին, որ եթէ նորա յանձն չեն առնիլ
ձրիաբար և ամենայն փառաւորութեամբ կա-
տարել մեծ բանաստեղծի յուղարկաւորութիւնը,
ինքը պատրաստ է այս պարտականութեան:

Այսպառնալիքի վրայ կաթոլիկ կղերը զիջաւ:

Պէշիկթաշլեանի յուղարկաւորութիւնը կա-
տարուեց աննման շքեղութեամբ. դաւանական
տարբերութիւնները լուսացին եղբայրութեան երդ-
չի շիրմի առաջ Նա թաղուեց Ֆէրիդիւղի աղ-
գային գերեզմանատան մէջ և նրա գերեզմանը
դարձաւ գրագէտների ուխտատեղի:

Պէշիկթաշլեանը իր կհնդանութեան ժամա-
նակ մի առանձին բան չէ հրատարակել, բացի
միւերկու ոտանաւորից, որոնք տպուած են Սէր
և Բազմավէսպ թիրթերում՝ Հրանտ ծածկանու-
նով: Նրա մահուանից 2 տարի յետոյ՝ Ծերենցի
նախաձեռնութեամբ՝ Մուրատ-Ռաֆայէլիան ըն-
կերութիւնը հաւաքից նրա ցանուցիր գործերը
և ամփոփից մի հատորի մէջ (Մատենագրու-
թիւնը Մ. Պէշիկթաշլեանի, Պօլիս 1870): Այս
հատորը պարունակում է վաթսուն տաղ, չորս
ճառ և ինը թատրերգութիւն: Տաղերը երկրորդ
անգամ՝ հրատարակուեցան Թիֆլիսում և երրորդ
անգամ Պարիզում, Զօպաննեանի խնամուտ հրա-
տարակութեամբ (1904), իսկ թատրերգութիւն-
ները առանձին հատորիկներով՝ հրատարակուում
են այժմ Պօլսում:

Պէշիկթաշլեանի 60 տաղերից ինը թարգ-
մանութիւն կամ նմանողութիւն են, միւսները

ինքնազիր. Նոյնպէս բսանը աշխարհարար, իսկ
մնացեալը գրարար:

Պէտիկթաշլեանը զուտ քնարական բանաս-
տեղծ է. իմաստասիրուկան խնդիրներ, կեանքի
և մահու խորհուրդը, ընկերական և համաժարդ-
կային խռոր հարցեր նիւթ չեն դառնում իր
խորհրդածութեան. Նա մի բարի, հանդարտ, հեղ,
անմիη սիրտ է, որ տեսնում է երկնքում մի
բարերար Աստուած, բնութեան մէջ մի որդեսէր
մայր, որ իր պարզեներով, իր հմայիչ գեղեց-
կութիւններով պարարում է մեզ: Աէր ահա Պէ-
շիկթաշլեանի քնարի նիւթը մէկ բառով. սէր
դէպի բարեկամութիւնը, սէր դէպի կրօնը, սէր
դէպի ազգն ու հայրենիքը, սէր դէպի բնութիւ-
նը, սէր դէպի կոյսը: Ահա սրտնը են Պէշիկթաշ-
լեանի բանաստեղծութիւնների առարկան, որոնց
վրայ աւելացնում է մի քանի մանկական ոտա-
նաւորներ և եղերգներ:

Բարեկամական տաղերը այն ձօնիրն են
որ տնում է բանաստեղծը Մխիթարեան վար-
դապետներին. աշակերտական երախտազիտու-
թեամբ լցուած՝ նրա զրիչը շատ անգամ ընկ-
նում է խռոր չափազանցութիւնների մէջ. հա-
սարակ վարդապետը երբեմն դառնում է Ազգաւ-
յին փրկիչ և Մայր Հայաստանը դիմաւորում է
նրան՝ իր նոր ազատարարին: Այս երգերը
լաւ տպաւորութիւն չեն թողնում ընթերցողի
վրայ, հակառակ իրենց մէջ տեսնուած արուեստի
կատարելութեան:

Ազգային և հայրենասիրական տաղերի մէջ
Պէշիկթաշլեանի գրիչը շատ վիր է բարձրանում:
Բանաստեղծը լցուած է անհուն խանդավառու-
թեամբ դէպի իր հայրենիքը: Գօլսեցի բազմա-
թիւ գրողների նման նա չի ճանաչում նրան աշ-
ձամբ, այլ այն լուսաշող պատկերի մէջ՝ որը
ստեղծել է իր երազների, իր երեսակայութեան
հմայքով: Գեղեցիկ է նա. վեհափառ կիրապարան-
քով դրախտավայր, որի նախնիքը մի մի դիւ-
ցազն են եղել, որ աշխարհներն են նուաճել, ազ-
գերն են սասանեցրել: Բայց ուր է նա այժմ. նրա
փառքը գնաց սրավար, խսպառ հանգաւ անհե-
տացաւ. և հիմայ, աւերակների մէջ է բնակում
նա՝ մերկ ու ցրտասարսուու, և ի զուր դողդոջ
ձեռներն է տատանում անցորդներին, ինչպէս մի
մարդ մեծափարթամ, որ մարդադաւ ճանապար-
հում աւազակների ձեռքն ընկած, պերճ զար-
դերից կողոպտուած, մահացու վէրքերով խոց-
ուած՝ փոշիներում արիւնլուայ պառկում է, նուաղ
ու աղեխարշ հծծիւն միայն արձակելով: Այս է
դիւցազների ազգի փառքի յետին արձագանգը...:

Այլ ուր այժմիկ սրավարեալ, ասա, երկիր իշ հայրենի,
Ուր բախտդ և փառք ամենապանծք անցին՝ ի սպառ
անհետացան:

Արդ մերկացեալ ցրտասարսուու աւերակեաց բնակեալ ի մէջ,
Հայրազար անցաւորաց զողդոջ զմեռուդ տատանես.
Որպէս այր մեծափարթամ ի մարդագաւ ճանապարհի
Աւազակաց մատնեալ ի ձեռս, պերճ ի զարդուցն կողոպուտ,
Մահացու հարեալ վիրօք արիւնազանգ կայ ի փոշւոջ,
Հծծիւն նուաղ աղեզորով միայն ոզորմ հնչեցուցեալ,
Այս է ազգին դիւցազանց յետին փառացն արձագանք...:

Բանաստեղծը յուսահատ չէ սակայն. մութի

միջից նա տեսնում է հեռաւոր արշակոյսը, այդ
արշակոյսին պիտի հասնի ազգը ուսման, դաս-
տիարակութեան և եղբայրական միութեան շնոր-
հիւ: Եղբայրութիւն.., ահա բանաստեղծի սիրուծ
բառը, աւելի սիրուն և անձկալի քան բնութեան
երգը, քան կոյսի քնարը: Միասին պիտի հա-
ւաբուենք, միասին պիտի գործենք, մեր ար-
ցունքն ու ժպիտը իրարու պիտի խառնենք, և
Մայր Հայաստանը՝ որ պիտի աեսնէ իր որդի-
ներին իրար հետ միացած, պիտի բուժուի իր վեր-
քերից, արցունքները պիտի չորնան, Հայոց գաշ-
տերը կեանք պիտի առնեն:

Ի քիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգը թաշին սիրողարար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Չունին մի ձայն այնքան սիրուն,
Քան զանձկալի «Եղբայր» անուն:

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեր,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղզին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի «Եղբայր» անուն:

Երր արեոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Արտին խորունկ վերքն զաժան
Քաղզը արտասուաց բուժին ցողով.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի «Եղբայր» անուն:

Մէկաեղ լացինք մենք ի հնում...
Եկէք զարձեալ յար անքածան
Խառնենք զարսօնը և զինդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի «Եղբայր» անուն:

Մէկտեղ յոդնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Զհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց գաշտեր.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ “իբուն
Քան զանձկալի «եղբայր» անուն:

Հայրենասիրական երգերի մէջ կրտեկոտ շարք
են կազմում Զէյթունի չորս երգերը (Հայքաջորդի,
Մահ քաջորդւոյն, Թաղումն քաջորդւոյն և Հայ քա-
ջուհին), որոնք արիւնի փրփուրն ունին և ազա-
տութեան կորիւն են յայտարարում թուրքին դէմ:

1862-ին ծագեց Զէյթունի ապստամբու-
թիւնը: Աղիզ փաշան 62,000 զօրքով գնաց Զէյ-
թունցոց վրայ, բայց 2,000 հոգի կորցնելով, ետ
փախաւ: Հաշտութեան գործը կատարելու համար
երկու պատգամաւոր ուղարկուեցան Պօլիս: Պօլ-
սում մի ձմեռնային ցուրտ երեկոյ՝ պատգամա-
ւոր ծերունի Մովսէս քահանան պատմում է պա-
տիրազմի անցքերից մի աղեխարշ դէսլք: Քաս-
մեան Մելքիսեդ անուն Զէյթունցի կտրիճը մեծ
քաջութիւններ գործելուց յետոյ՝ երկու ծանր
վէրք ստացած՝ ընկնում է պատերազմի դաշ-
տում: Չեռքով սեղմած իր վէրքերը՝ որպէս զի
աղիքները դուրս չթափուէին, նա մի կերպ հաս-
նում է Փրկչի լեռը, ուր վրայ են հասնում եր-
կու բրդեր: Նա մեռած է ձեանում: բրդերը կըտ-
րում են ականջները և նու լուռ ու անշարժ տա-
նում է այդ ցաւերը: Վերջապէս զիշերուայ ա-
հաւոր լուռեթեան մէջ՝ տեսնում է իր մօրը՝ որ
դիակների մէջ ման գալով փնտում էր իր որ-
դուն: Փոխադրում են տուն և առողջացնում:

Պէշիկթաշլեանը լսում է այս սրտաշարժ պատմութիւնը և միւս օրը պատրաստում նոյն չորս երգերը, սրսնք սովորական ոտանաւորներից բարձր, դիւցազնական քերթուածներ են:

Առաջինը՝ Հայ քաջորդին, նմանողութիւն է Վիկտոր Հիւզոյի «Տղան» բանաստեղծութեանը, բայց մի նմանողութիւն, որ Զօպանհանի բացատրութեամբ, աւելի սիրուն, աւելի բնական ու սրտայոյդ է քան Հիւզոյի մի քիչ բանազրասիկ և արտառոց մանրամասնութիւններով ինձողուած տաղը: Հիւզօն առասպելական անխմանալի քաններ է առաջարկում աւելքակների մէջ նստած յոյն երեխային, իսկ Պէշիկթաշլեան՝ սրտի մօտիկ հաճոյքներ:

Ապառածուտ լերան մը կող,
Ցեցեալ ի քար զերեզմանի,
Աչք մերթ յերկինս և մերթ ի հող՝
Խաբտիշազեղ կայր պատանի,
Ո՞վ զու որդիդ լերանց հովտաց,
Խնչն այդպէս սիրտ է ցաւած:

Կուզեն որ մէծ փոթորկեալ ծով
Մատուցոնէ քեզ միշեթար՝
Կոհակաշարժ իւր լարերով
Երգնալ ի շունչ մըլիկազմար:
Ո՞վ զու որդիդ լերանց հովտաց,
Խնչն այդպէս սիրտ է ցաւած:

Կուզեն որ քեզ անհղաշուր
Խնջայ կամարն տստեղց անթիւ,
Եւ ընութիւն պայծառ զարդուք
Ժպտի ծաղկամբ և զեփիւոիւ.
Ո՞վ զու որդիդ լերանց հովտաց,
Խնչն այդպէս սիրտ է ցաւած:

Կամ փափկագոյն այլ սփոփտնք,
Միթէ կուզեն մօր քաղցուենի
Աւ սիրունոյ անուշ զգուանիք,

Որ քու կոկիծդ փարատի.
Դեռ ինչ կուզես, ո՞հ, մի ձածկեր...
— Կուզեմ վասօդ և զնտակներ:

Երկրորդ երգում՝ Մահ քաջորդւոյն, պատա-
նին վիրաւոր ընկել է դաշտում. մայրը դիակ-
ների մէջ վինտուում է նրան լալազին ու վիրա-
ւորը տեսնուում կանչուում է նրան իր մաս, թուր-
քերի կերած ջարդը սւամուում, ու վերջին համ-
րոյրը տալով՝ իր շունչն է փչում:

Դոգ զնի ինդրես, մայր իմ անոյշ,
Եւկ, մի զողար, մօսեցիք հոս.
Անդաց աշօք գիտէ զորդիդ
Ու իւր վէրքերն արդւնահոս:
Քրքաց մայրեր թող լան՝ ու դուն
Աւրախ լուրեր տար ի Զէյթուն:

Կարմիր կայլակը ցայտին վէրքէս,
Սակայն, մայր իմ, նայէ չորս զին,
Զարիւնընուշա Թուրքերն տես
Հազարներով փռուած զետին.
Կերաւ զանոնք սուր մեր՝ ու դուն
Աւրախ լուրեր տար ի Զէյթուն:

Մանշեցին ինչպէս վիշտոց
Ու մեր վրայ յարձակեցան.
Ո՞գ հայրենիք, ի հուր ի բաց
Քո համար մեր սիրաք վասեցան.
Կարմիր ներկան ձորք մեր՝ ու դուն
Աւրախ լուրեր տար ի Զէյթուն:

Վերջին համբոյք տամ քեզ, մայրիկ,
Հասուցանես զայն սիրունոյս,
Վերջին անզամ զրկեմ մեր հող
Ոյր արդ կիջնամ ի ծոցն անլոյս:
Թաշ մը տնկէ վրաս՝ ու դուն
Աւրախ լուրեր տար ի Զէյթուն:

Երրորդ երգի մէջ՝ թաղումն քաջորդւոյն,
որ անդիւցի բանստանեղծ Աւոլֆի նմանողու-
թիւնն է, լուռ ու անշուք թաղում են քաջոր-

դուն. զիշերային մութի մէջ հրացանի կոթերով
փորում են փոսը, ու առանց զագաղի կոմ պա-
տանքի, փաթաթած զինւորական կարմիր վե-
րաբեռն մէջ, հողին են յանձնում նրա մարմինը:

Ո՞չ փող զարկինք, ո՞չ աբձազանգ լեռնասոյդ
Սարէ ի սար չարշառուկ տարին լուր.
Ու շերգեցինք ողբոց երգեր որտայոյզ
Երբ պատանւոյն բացինք մայլ փոխին դուռ:

Դիշերական մունջ ստուելներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով դհող փորեցինք.
Լուսին միայն զողդոջ շողայր մեր զիլին,
Սուդ էր պատեր զդաշտ, ըլուր և երկինք:

Գէտք չէր զագաղ և ոչ ճերմակ պատանքներ,
Որով զօցուէր ազատորդի Զէյթունցին.
Նա յիշ մարտին կարծես յոդնած կը հանգչէր,
Ու վերաբեռն կարմիր բաւէր իւր անձին:

Զորբորդ երդի մէջ երեան է զալիս Հայ
քաջունին, զէյթունցի կարիճ օրիորդը՝ որ սու-
րը սեղմած կուրծքին՝ կոռւի մէջ է մտել. Հայ
քաջերին ասպարէզ է կտրգում:

Խնչպէս մղեալ ի փոխորկաց
Քլորին ժայռից մեր հասարներ,
Հապա, այսպէս ի մէջ թրբաց
Իյնանք թաւալ օրհասարել:

Ազատութիւնն երգն է այս, որ Զէյթունի
ժայռերից Հայաստանի սարերը պիտի ծաւալի
ու նորա փրկութիւնը պիտի պատրաստէ:

Դու մէկ օր մ'ալ յանհուն թեհը
Պիտի թռչիս ի Հայաստան,
Մէկ ձեռքով զայն կանգնես ի վեր,
Միւսով զլորես թաւրքըն կոբծան:

Նկարագրական բանստեղծութիւննց մէջ
ամենից յաջողակներն են Աշունը, Առ դեմիւն

Ալէմտաղիի, Գարուն, ՑԱլէմտաղն այն գեղեցիկ
են, այս բոլորի մէջ ոակայն կոյսը կամ հայրե-
նիքը միասին հիւսուած են, ի՞նչ վոյթ թէ Աշու-
նը չունի ծաղիկներ, թիթեռը չի թռչկոտում,
սոխակը չի երգում վարդերի վերայ, կայ կոյսը,
որ զարունն է շնչում իր անձից, Նրա վարսերը
ծաղիկների փնջերն են, այտերը վարդեր, Նա
շուշանն է ճերմակ, երբ գեղածածան խոպոպիքը
կախուած՝ օրօրուում են նորա վզի վրայ:

Բանաստեղծը զնուում է Ալէմտաղ՝ անհոգ ու
մոլար ժուռ զալու, վտակի, կանաչութեան, զե-
փիւսի շնչով զրօննելու.

Բայց քան զամեն հռվիկ քնքուշ
Հըշտակ մի անդ կը թևածեր,
Ու քան զամեն երդերն անուշ
Այն նաղեւոյն ձայնիկն հնչեր:

Թոփր ինծի, անա մոալլ
Անտառին մէջ իջաւ զիշեր,
Կանչէ պլպոււ լուսնին ի փայլ.
Բաց անոնցմէ շոնինը շնկեր:

Սա հավանիքն անուշարոյը
Տեսնեն զմեղ թի բնդ թեով,
Ասզիս ծաղիկ, անդին համրոյը
Փունջ փունջ սիրոյ շնծայելով:

Երբ բնութիւն անխօս կենայ,
Մանկանացուք ձայն չին հաներ,
Լուս է ամեն ինչ որ չուրջ կայ,
Աւելի անը խօսին սրտեր:

Գարուն երդի մէջ՝ կոյսի տեղ հայրենիքն է
հրապուրում բանաստեղծի սիրուը. անուշ անուշ
փչում է հովիկը, ծառերի մէջ երգում է թըոշ-
հակը, ականակիտ հոսում է վտակը, բայց նա
մերժում է նրանց, սրովհետեւ հայրենիքինը չին.

Թէպէտ թոշնիկն ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վատակն Հայոց
Նոճիներու մէջ կը սոզայ,
Նորա հառանձք են Հայրենիաց,
Նորա չերթան սրաէս ի բաց:

Սիրային ոտանաւորների մէջ Պէշիկթաշլետ-
նի բանաստեղծութիւնը հանում է իր գերազոյն
կատարելութեան: Երեակայական սէրը չէ որ նա
երգում է. այլ իրական զգացումը՝ իր հմայքով,
իր յոյզերով, իր յոյսերով և յետոյ խորունկ յու-
սահատութեամբ: Ակզրում նա կարծում է թէ իր
զգացմունքը արձագանդ է դտել և զրում է իր
կենուաթրթիո առաջերը, ինչպէս ձեմք, Ո՞ւր էր
թէ զեփիւոիկ, Առ զեփիւոն, ՏԱԼԷմտաղն այն
զեղեցիկ, Գնացէք իմ տաղք են: Ահա մի կտոր
ձեմքի զուարթ տներից:

Թոշնոյ մը պէս կուսիկն անուշ,
Տուած մողերն հովուն ի ծուփ,
Կը թոշտի ընդ քար ընդ գուշ,
Դարէ ի դար, Թուփէ ի թուփ
Բացէք, հաճոյք, փափուկ թներ,
Տարէք զմեդ բլուրն ի վեր:

Բայց շուտով տեսնում է բանաստեղծը թէ
սխալուած է. օրիորդը նշանւում է մի այլ երի-
տասարդի հետ. բանաստեղծի կեանքը դանա-
նում է. սկսում են իր յուսահատ երգերը: Այս
յուսահատութիւնը տեսնում է օրիորդը և խըդ-
ճալով իր որաշտելի ուսուցչի վիճակի վրայ, մեր-
ժում է նշանածին և ուխտում է չամուսնանալ:
Նորից է ծազում յոյսը բանաստեղծի սրտում և
նա երգում է յոյսի ու տարակոյսի միջև ծածա

նող իր զեղեցիկ հրզերը. Ներեա ինձ կոյս, Թոյլ
առւր, Աւստի յանկարծ.

Աւստի յանկարծ ծագէ այս լոյս՝ իշմայոջ որտիս խաւար,
Զերթ արեւուն շող թափանց ի թուխ ու տառ զերեզմանաց:
Յնչյո զեղանի, ուշիթի զուարթաթուիչ զու թիթենիկէ,
Քանիցու արդեօք թեածեալ զմելամաղձիկ իմ որբախիւ,
Հարար ի բախուն իմ անողոք, և բնքնեալ բո ծիրանիք
Հանդերձ զարզուքդ անդամանդեայ աւաղ յերկիր թօթո-
փեցան..

Հէք թիթենիկէ, արդ անկենդան անկեալ զնիս յիմ որտիկէ,
Եւ կորուսեալ զամենայն՝ ծածկիմ ոպւոյս ի վին մռայլ.
Զաշս փակեմ չաւսանել եթէ զիարդ պարեն աստեզը,
Զիմրդ ծաղկունը փառնչ կապեն և կամ բնութիւն նազի

յիւր զան.
Իրեն զղիկ մի կիոպարի ևս խոնարնիմ ի զերեզմանն
Ցուսից իմաց և բաստից և լուսաթոյր երջանկութեան:
Սակայն ուստի ծագէ յանկարծ լոյս ի խաւար իմ որտիս...
Ե՞կ, ո կուսիկ, որ ի փշուտ յուղի կենացս երենցար,
Հրաշատեսիկէ երեռյթ, և զանապարհն իմ լցուցիր
Խնկով վարսիցդ և երեսաց, լուսով բրացզ և նայուածաց,
Մինչչե անցեալ եկ, ո կուսիկ, չուշանափայլ քո զուլանէդ
Կախեմ մանեալ զտաղս իմ զայս՝ ընզելուզեալ յայն մի

արտօնուր.

Ազա անց զնա թսիր, ո կոյս, ևս մացից յամայոթեանս,
Զի աննշան միջատի չիք թոյլ յերկնից աստեզս թեեւ:

Վերջապէս տեսնում է բանաստեղծը իր բու-
լոր յօյսերի խորտակումը, կհանքի առկայծ ցոլ-
քերի մէջ՝ նա երգում է իր վերջին յուսահատ
երգերը. Քնար և շիրիմ, Ցեախին հառաչք, Մերձ
ի մահուն եղերեցեալ, Մերձ ի ման զրուած, այս
երգերը իրենց խորութեամբ, յուսահատութեամբ,
հոգու ալքերից պոկուած ճիշի զառնութեամբ
նմոնը չունին մեր գրականութեան մէջ: Յուսա-
հատ բանաստեղծը վերջին անգամ հիանում է
կոյսի պտուկերով, տալիս է նրան հրաժեշտի ող-
ջոյնը, խօսում է իր մօր և իր եղմօր ուրուա-
կանների հետ, ջախջախում է քնարը, իջնում

գերեզման, բայց դերեզմանի մէջ անդամ չկարողանալով մտունալ կոյսին, թափէ տալիս շիրմի հողը, նրան է կանչում, զուցէ այժմ զանելու համար այն սէրը՝ որին ի զուր էր սպասում:

«Դէպի քեզ եմ ոլացնում, ով կոյս, վերջին ողջոյնս, վերջին հրատոչոր կարօսու. թայլ տուր որ այս վերջին անգամն էլ նայիմ քեզ, ովքիդ զմայլիմ, աչքերիդ լոյսին մէջ լողանամ, խոպոպներիցդ վայր ծածանիմ, ինչպէս ծածանում են նրանք այտերիցդ վայր, յետոյ բաժանուիմ նոցանից, սրտակտուր բաժանուիմ քիզանից, քո ոտների տակ դնելով իմ երջանկութեան պատկը՝ որ քո քնրուշ ձեռքից ու զթութիւնից ընդունեցի, որ սրտիս կրակովը պահեցի, աչքերիս ցողովը ոռողեցի և որ այժմ իր գեղեցկութիւնից ու իր լուսափթիթ թերթերից թափուր է: Առ, նա քո ընծան էր, տւադ, տես, այնպէս է ինչպէս ինձ էիր տուել. բաժանուում եմ քեզանից և դու անձառ նայուածքովդ չպիտի հետեւիս ինձ, տեսնելու համար թէ ուր է դնում այն դալիկանար որբ պանդուխտը. բաժանուում եմ քեզանից և դու գլուխդ տղաւնու նման շարժելով՝ վուվուներ չպիտի արձակիս իմ ետեւից թէ «ուր իս դնում, ով թշուաս»: (Յետին հառաջը)

«Հեծիր, քնար, ինչպէս սօսափիւնը գիշերային ցուրտ քամիների. տուր ձայնիս ծաւալանալ՝ դուժաւոր ջայլերի նման. զիրկս արի ու մբմնջիր քո վերջին մրմունջը, բանի դեռ չեմ փշրել քեզ ու թեկորներդ անցորդների ստերի

տակ կոխան տուելու Որովհեակ լուսնի շողերի
նման՝ որոնց փաթաթուել է ցանկանում ման-
կիկը, կեանքի դուրսեկան բարիքները իմ ձևո-
քերից թօթափեցան. այն բոցանշոյլ հրատները՝
որ իմ աշխոյժն էին վառում, հանգեցան. հա-
սու ու զիշերը՝ ուր իմ զիմաց տաբածում է
սպիտակ ճանապարհու Մենակ պէտք է զնամ ա-
մայութեան ճանապարհից. էլ զէպի Եղիմ չոլի-
տի դարձնեմ բիրերո՛ որ այլ ևս արցունք չու-
նին Անդարձ տքսորեալը ինչ պէտք ունի նուտ-
դաւոր երգերի, փշութիր, բնար,

Ես լուս ցաւեր խնդրեմ և լուս գերեզմանը
(Մերձ ի մահուն եղեր.)

Դիմեմ յուշիկ ի գերեզման, այն հանգաոց զիս ոչ խարէ
Առ սիրելիօրս վաղամեռ, անդ ի տեղի ինձ տասնձնակ
Հանդեաց և եռ զո՞ւ անոտառում, գէթ անդանօք չեմ անորիկ:
Այս, վայրն է առանձին և ավանդեր իջոնեմ անդ.
Եւ երբ հոդին մենեւոց զայցէ զանիւնն իմ խլանի,
Սոյիտակն իմ ճակատ ճմենական մրցեաց ի մուշնչ
Ի բաց զպատանոն արտացէ, և բազմելով շիրմիս զերայ՝
«Ե՞կ, զոհեցից առ նա, Եկ, չեմ նոյն յորմէ խորշեիր դու.
Տես զիարդ զեղեցկացոյց զիս ման, արար զիս տարփելի:
Միթէ զարձեալ տաիցես զիս և անզրազոյն բան դժիրիմ...»

(Մերձ ի մահ զրուած)

Մերժուած սիրոյ գառնութիւնը այնպէս
սաստիկ է աղզել բանաստեղծի սրտի վրայ, որ
նա գերեզմանից այն կողմ էլ յոյս չունի և իր այս
ողոքիչ ձայնին արձականգ չգանհիլով, դոչում է.

«Ինչն նուազ ձայնիս պատասխան չես տա-
լիս, ևս ողջ չեմ. ինչո՞ւ վակում ևս աչերդ՝ ինձ
չտեսնելու համար. ևս ողջ չեմ. ինչո՞ւ դէմքդ խո-
ժու մի կողմ ևս շրջում, ևս չեմ եկել ձեր զիշերա-
զրոս զդուանքներին արգելը դնելու, ոչ էլ մե-

սելութեան ու դամբանի բոլոր գօրութեամբ՝ սիրոյս անրաւութեանը փոխարէն քո սէրը պահանջելու. ինչ որ կենդանութեանս ինձ զլացար, միթէ մահուանս ոլխոի շնորհես Լսիր, Հրանոյշ, զալիս եմ հարցնել թէ երջանինկ ևս ու զո՞ւ. բոցատերե աշխոյժ ու խանդ՝ ռաներիդ տակ փթըթում են դարձեալ. զուարթութիւն և խնծիղ դեռ փայլակում են գէցքիդ վրայ. աւելի վճիռ շողում են աչերդ՝ ինձ պատահելուց այլ ևս զերծ. քո որտի մէջ թողած յիշատակիս չորարեկ տերիները շատ հեռու վանեցի՞ր, որպէս զի անարգի ու աղատ՝ նոր բազմանքներ մտցնես այնտեղ. ճանապարհիդ վերայ իմ զերեղմանին պատահելով՝ անփոյթ ցատքեցի՞ր նորա վերայից՝ մէկ ուրիշի ծոցը ոլանալու համար. զու՝ որ կենդանի ես, մոռացմբ նրան՝ որ մահուան մէջ իսկ, Հրանոյշ, յիշում է քեզ յաւիտեան...։ Մշատառչոր անեղ բոցի սաստկութիւնը չի հանդարտում. աւելի արագ քան աստղերը և հրաշէկ զնդի սայւը՝ տիեզերքի անոլորտ ասպարէզում տրշաւում է և իր ոլացըի մէջ այն բոցն աւելի վառւում բորբոքւմ է։ (Յետին հասաչը)

Այսպիսի հոյակապ էջեր են նաև Պէջիկթաշլեանի եղերգները, որ զըել է իր մի քանի մասքիմ բարեկամների մահուան առթիւ. Դոցամէջ խօսում է սիրոդ սրտի մօրմոքը, մերթ ոլարդուկ բառերով ու անսեթենիթ ձեւերով իր զառնութիւնը պատկերացնում, մերթ սաւառնում, վերանում, անզրաշխարհի երանութիւնները յի-

շեցնում, և մերթ նմանների ու սղաւը Հայրենիքի օդնութեան մէջ սփռվանք լինառում։ Շատ գեղեցիկ է օրինակ ծովի վերայ վախճանուած Ազնիւ Լութֆեանի եղերգը, «Եհց մի տուն բերում եմ այստեղ իրը նմոյց»։

Ուր ևս, Ազնիւ, տեսանք երթալդ,
Ուրախ զարձիզ չառինք մենք լուր.
Քեզ զրկելով ճամբայ զրինք,
Դրկերնիւ բաց կ'սպասենք զուր.
Ո՞չ, ամենուն տիտուր ձայնիւ
Կը հարցնենք, ուր է Ազնիւ։

Պէշիկթաշլեանի տաղերը, ինչպէս տեսանք,
միծ մասամբ զրաբար են Աշխարհաբար տա-
ղերը, թէ միշտ համեմուած զրաբարի ձևերով
ու զարձուածներով, ունին թրթոռն, աշխոյժ,
վառվառն նկարագիր Գրաբար տաղերը՝ ներ-
կայացնում են քանաստեղծի աւելի կառարեալ
զարձերը, հեղինակը, իրու Միթթարեանների
սան, նայել է նրանց վրայ իրսև բարձր զրա-
կանութեան և տինաեղ է զրել իր բովանդակ ար-
տեստը։ Դժբախտութիւն է մեղ համար այս, ո-
րովհետեւ աշխարհաբար զրականութիւնը այսպէ-
սով զրկուած է մնում իր մի քանի հոյակապ
էջերից։ միւս կողմից զրաբարը՝ ինչքան էլ որ
պարզ ու սահուն լինի Պէշիկթաշլեանի զրչի տակ,
այսու ամենայնիւ ծանրացնում է լեզուի ըն-
թացքը, իմաստները մթնեցնում և ընականու-
թիւնը մռացնում։ Ինչքան աւելի զուրեկան պի-
տի լինէին նրանք, եթէ նոր լեզուով զրուած լի-
նէին։ Զօպանեանի հրատարակութեան մէջ, ուր

Պէշիկթաշլեանի քոլոր զբարար տաղերին կից
զբուած է նոցա աշխարհաբար թարգմանութիւնը, զեղեցիկ կերպով ապացուցւում է մեր տածը:

Աշխարհաբար տաղերը նոր եւրոպական տաշաչափութեամբ են, իսկ զբարար տաղերը հին հայկական չափով, ինչ որ տալիս է նրանց աւելի ծանրութիւն ու վեհութիւն, և աւելի է յարմարում նիւթի լրջութեան:

Պէշիկթաշլեանը մեր նոր զբականութեան մէջ ամէնից բարձր արուեստագէան է, ոտանաւորի պահանջած բոլոր արտաքին կողմերը, հատածների կանոնաւորութիւնը, յանդերի ճոխութիւնը, մանաւանդ երաժշական շնչարի ճշտութիւնը, ամենուրեք յարգուած է, իր զրիչը առատ է պատկերներով։ Եւ թէի շատ անդամ տեսնւում է նրա մէջ եւրոպական խոշոր զբողների նմանողութիւն, բայց այս նմանողութիւնը հետեւկ կոյր մի բան չէ, այլ իւրացրած արուեստի արտայայտութիւն։ այս պատճառաւ Պէշիկթաշլեանը արժանացել է «Անմաման նմանող» տիտղոսին։

Բացի տաղերից՝ որ Պէշիկթաշլեանի զլուխ գործոցն են կտղմում, բանաստեղծը ունի նաև մի քանի ճառեր և թատրերգութիւններ։

Ճառերը չորս են, խօսուած Համազգեաց, Մուրատ—Ռափայէլեան բնկերութեանց և Օրթողիւղի թատրոնի մէջ։ Արանք չեն ներկայացնում տռանձին արժանաւորութիւն։ հասարակ կրթիչ ճառեր են՝ որ նպատակ ունին արծարծել հայ-

րինասիրութիւն և յորդորել դէպի յառաջդիմութիւն՝ ազգային միաբանութեամբ և զիտութեան լուսով։

Թուարերգութիւնները ընդ ամէնը ինն են. Կոռնակ, Արշակ Բ, Վահան, Վահէ պատմական ողբերգութիւնները, երեք ուրիշ ողբերգութիւն խոալերէնից ու Փրանսերէնից թարգմանուած (Ալֆիէռի իտալացւոյ Սաւուդ, Վոլթէռի Մանկինարու, Բրուսու և) և երկու փոքր կատակերգութիւն (Կատակերգութիւն Աւազակաց և Երեք Քաջեր), երկուսն էլ նմանսղարար զրուած։

Կոռնակի նիւթը առնոււած է Տրդատից յետոյ Հայաստանում տիրող սննիշխանութեան շըրջանից, Բզնունեաց Կոռնակ եղիոնագործ նախարարը Մանաւողեանց նախարար Ներսէսի դէմ եղրայրասապան կուի է յայտարարուամ։ Հաշտութիւն խօսելու համար Ներսէսը դիմուած է Կոռնակին, բայց շղթայի է զարնոււմ Կոռնակի անձնուէր խորհրդականը՝ Զաւէն՝ քանիցս աղերսուած է նրան Ներել, բայց ի զուր. և գառնացած այս անիրաւութեան դէմ, բանտ է մտնում, արձուկուած Ներսէսի շղթաները և միասին փախչուամ են. վրայ է հասնուած Կոռնակ իր բանակով՝ ջախջախելու համար Զաւէնի հետ Ներսէսին ու նրա երկիրը։ Նոյն միջոցին Խոսրով նստուած է Տըրդատի զանը և Վահան Ամասունի զօրավարին ուղարկուած խաղաղութիւն սփուելու և ազգադաւուարեալմեները վերջացնելու Հայաստանից։ Վահանի ստիպմամբ հաշտուում են Կոռնակ ու Ներ-

աէս. բայց դաւաճան կոռնակը խնջոյքի մէջ զաղանի թոյն տալով ներսէսին ու նրա երկու փոքրիկ որդիներին՝ ջնջել է ուզում Մանաւաղհանց սերունդը։ Հեղիկ ու ծոլակ մնանում են, իսկ ներսէսի թունաւոր բաժակը սխալմամբ կոռնակն էր խմեր։

Արշակ ԲՇ հինգ արարուածով ողբերգութիւն է։ Արշակ Հայոց թագաւորը Պարսիկներից յաղթուելով՝ իր Սիսակ որդու հետ ապաստանում է մի անտառի մէջ, այստեղ նա մտաքերում է այն անիբաւ ու անգութ գործերը որ իր թագաւորութեան ժամանակ գործել էր։ Սիսակ աշխատում է միսիթարել նրան՝ յայտնելով թէ ապագայ լաւագոյն կառավարութեամբ կարող եր մոռացնել անցկալը։ Պարսիկները լսելով Արշակի թագստի տեղը՝ գալիս են նրան բանելու։ Պատերազմում հայերը յաղթում են։ Արշակ և Սիսակ գերի ընկնելով՝ տարւում են Շապուհի ծօտ, որ յանդիմանելուց ու անարգելուց յետոյ հրամայում է բանտարկել Արշակին Անյուշ բերդում, իսկ Աիսակին արքունի բանտում։ Շապուհի որդին Որմիզդ, որի կեանքը փրկել էր Արշակը պատերազմի մէջ, երախատագիտութեամբ ու սիրով լցուած՝ բաց է անում բաները նրա առաջ։ Սիսակը մի խումբ կարիճներով վազում է Անյուշ՝ ազատերու համար իր հօրը, բայց զբարխստ ուղղին անձնաւալան հօր վերջին բոպէներին է միայն համնում։

Ամանն օղբերգութիւն երեք արարուած

ծով՝ ներկայացնում է ՚լահան Մամիկոնեանի առաջին ապստամբութիւնը. ՚լահանը իր Զարեհ որդու և նախարարների հետ ապստամբութեան դրօշն է քարձրացնում Ատրվշնասպ մարզպանի դէմ. Գարջոյլ գաւաճան նախարարը Պարսից կողմն անցնելով՝ Հայոց խորհուրդները մտանում է նրանց Վահան և Զարեհ մի խոր ցաւ ունին իրենց սրառում. Վահանի որդին Սուրէն՝ սիրահարուելով Ասթինէ անունով պարսիկ օրիորդի վրայ, թողել է իր ընտանիքը և Պարսից կողմն է անցել բայց նա դաւաճան չէ. նա այլուում է հօրը, եղրօրը և հայրենիքը սիրով. ծնկաչոր իր հօր առաջ զութ է աղերսում. թող հայրը ներէ նրան, թող ընդունի առաքինի սրարսկունուն իրք իր հարսը, և նա Վահանի ամենահռւասարիմ զինուորը կը դառնայ: Բայց ի զուր են աղաշանքները. Վահանը անողոք է, նա չի ուզում երբեք պղծել իր ընտանիքը պարսկունու սիրով: Եւ Սուրէնը կորագլուխ նեռանում է Պարսից բանակը: Պատերազմը վճռուում էր Վերջին գիշերն է: Մթութեան սարսափն ու պարսիկների դաժան սրերն արհամարհելով՝ Զարեհ անցնում է զադտնապէս Պարսից բանակը և եղրօրը գտնելով՝ վերջին անգամ աղերսում է նրան թողնել թշնամիներին, մոռանալ Պարսկունու անարժան սէրը և հօրը գիրկը վերադառնալ: Բայց սէրը հաւատարիմ է. Սուրէնը չի դաւաճանում Ասթինէին: Պարսիկները լուսմ են ու վրայ հասնում. Զարէնի սուրը գիտիկների թուրքներ է քարձ-

բացնում, բայց վերջապէս նա բանում է և շղթայի զարնուում։ Նոյն բոպէին տեղի է ունենում Վահանեանների գիշերային յարձակումը։ Սուրէնը արձակում է եղբօր շղթաները և երկուոր միասին կոռուի մէջ են ննաւում 400 հայ բաջերի առաջ 3000 պարսիկների բանակը ցիրուցան է լինում։ Ատրվճնասապ փախչում է ու դաւաճան Գարջոյլը բանուելով գլխատում է։ Վահանը գտնում է իր քաջերին, բայց Սուրէնի միայն դիակն է գրկում։ Թշնամինների արիւով շաղախուած։ Զարեհի կեանքն ազատելու համար նա իր կուրծքը վահան էր գարձրել ու հարուածին զոհ գնացել։

Վահէն՝ ողբերգութիւն Յ արարուածով, ներկայացնում է Հայկազանց վերջին թագաւորի կեանքն ու Հայկազանց տէրութեան կործանումը։ Արտաւազդ՝ Վահէի պաշտօննեաններից մէկը՝ հասարակ ծագումով մի մարդ՝ որ իր քաջութեան ու իր ընդունակութեանց շնորհիւ հասել էր իշխանական աստիճանի, սիրահարուելով Վահէի դուստր Արուսիակի վրայ, խնդրում է նրա ձեռքը։ Կատաղում է Վահէն՝ իշխանի այդպիսի յանդգնութեան վրայ, որ մոռանալով իր ստոր ծագումը, համարձակում է աչք ձգել արքայական ընտանիքի վրայ, և բանտարկում է նրան։ Արուսիակը ուրանում է աշխարհային կեանքը և տառուածներին նուիրելով իրեն՝ Սոսիաց անտառներն առանձնացած՝ դառն արտմութեամբ անց է կացնում իր օրերը։ Իսկ Արտաւազդը յաջո-

զում է փախչել բանտից, մանում է Աղեքսանդր Մակեդոնացու բանակը, իր բաջութեամբ հասնում զօրապետական աստիճանի և վրէժխընդրութեան կատաղի բոցով վառուած՝ առաջնորդում է մակեդոնական բանակը Հայաստան, Վահնէից վրէժ լուծելու և Արուսիակին տիրանալու համար։ Պատերազմը բորբոքում է, բանակներ է որ ջարգւում են։ Մակեդոնական մի գումարտակ պաշարում է Սօսեաց անտառը՝ Արուսիակին ազատելու համար։ Բայց նա իր ու հայրենիքի այսքան թշուառութեանց վրայ այլ ես չուզեց ապրել ու աչքերը փակեց յաւիտեան։ Խորտակուեցան Մակեդոնացի բանակները, Վահնէն էլ վիրաւորուեց ու մեռաւ՝ անդիտակ հայրենի գահի կործանման։ Իսկ Արտաւազդը՝ դաւաճանութեան ամօթը ճակատին, խղճահարութեան զգացմունքը սրառում ու կորցրած Արուսիակի յիշատակը հոգում, թողնում է այլ ես մակեդոնական բանակը ու անդէն կանգնում հայերի առաջ՝ մահուան մէջ հոգու հանգիստը վնասուելով։

Պէշիկթաշլեանի ողբերգութիւնները պատկանում են դասական դպրոցին և պարունակում են այս կարդի ողբերգութեանց պակասութիւններն ու առաւելութիւնները։ Նիւթ առնելով պատմական շրջանը՝ դժբախտաբար հեղինակը չէ կարողացած ուսումնասիրել նոյն շրջանը, որով իր տեսարանները ոչ մի տարբերութիւն չունին ներկայ կեանքից։ Հեայ բարքերի ուսումնասիրութիւն, ներկայացուած տիպերը սովորական

Նկարագիրներ են. զլխաւորապէս պակասում է դործողութիւնը, որ զբեթէ միշտ բեմից դուրս է կատարում, իսկ բեմի վրայ մնում են հրաշունչ ձառներ, դեղեցիկ տաենարանութիւններ:

Այս ողբերգութիւններից երկուաը (Կոռնոկ և Վահան) թոյլ զրուածքներ են, իսկ Արշակ և Վահէ աւելի յաջող Շատ գեղեցիկ հրասուած է Վահէի նիւթը. բայց կանացի դերի բացակայութիւնը փչացնում է ամէն ինչ: Եկեղեցական բարոյականը հրամայում էր որ բեմի վրայ կին չգտնուի. այս պատճառու էլ Պէշիկթաշլիանը ստիպուել է եղծել իր խաղերը. Կոռնոկի մէջ կին ամեննեին չկայ. Արշակի մէջ հեղինակը ուղեցել է ներկայացնել Շապուհի դուստրը՝ որ սիրանարւում է Սիստկ արքայորդու վրայ, այս սիրոյ պատճառով անսաստում է հօր կառքին և բաց անում բանտի դռները: Բայց Պէշիկթաշլիանը ստիպուել է Շապուհի զատեր տեղ գնել Ռոմիզդ որդուն, այնպէս որ սիրոյ տեղ երեան է զալիս երախտագիտական զդացմունքը և ամէն ինչ զատնում անբնական*): Վահանի և Վահէի մէջ կան կնոջ զերեր, բայց երկուան էլ բեմից դուրս են: Ի՞նչ հրաշալի տեսարաններ կարելի պիտի լինէր ստեղծել, օրինակ եթէ Արտսեակը երեար բեմի վրայ. սիրոյ երդումը Արտաւազգի և Ֆրա մէջտեղ, նոցա բաժանումը,

*) Արշակի երկըորդ խմբագրութեան մէջ Պէշիկթաշլիանը Ռոմիզդի տեղ զնում է Ռոբսանէ: Շապուհի աղջիկը և այս կերպարանքի տակ էլ բեմ հանում: Եթէ բախտաբար տպագրուածը առաջին խմբագրութեամբ է:

Առաջ անտառում՝ երբ կոյսը իրեն առտուած՝ ներին է նուիրում ու սէրը հոգու խորքում թաղած՝ դիշերային մթութեան մէջ Արտաւազդի յիշատակին հետ խօսում, վերջողէս նոցտ հանդիպումը, Արտաւազդի վերջին խօսքերը Արտաւակի դիակի առաջ են: Այս բոլորը սակայն չկան, վատ հասկացուած բարոյականի պատճառաւ:

Պէշիկթաշլիանի թատրերդութեանց խոշոր առաւելութիւնն այն է՝ որ, մինչդեռ նրա ժամանակի թատրերը գրաբար ու ոտանաւոր էին, սրանք աշխարհաբար են ու արձակ. լեզուն ձոխ ու պիրճ է, հանդիսաւոր խօսակցութիւնն, գեղնացիկ պատկերներ, երաժշտական ճաշակ փայլում են նրանց մէջ: Պէշիկթաշլիանի ժամանակ Եւրոպայումն էլ թատերական սիրուած ոճը բարձր դաստկանն էր, որին հետեւում է նաև Պէշիկթալեանը:

Պէշիկթաշլիանը ունի նաև երկու կատակերգութիւն: Կատակերգութիւնն Աւազակաց շատ թոյլ գրուածք է և կատակերգական բնոււորութիւնից բոլորովին զուրկ: Մի քանի աւազակներ՝ սրոնք կարծիս մի մի զաղափարական մարդիկ են, փախցնում են մի հարուստ ժառանգորդի՝ նրա հարստութիւնը ձեռք բերելու համար, բայց պատահմամբ անտառում մոլորուած զինուրական ջոկատի ձեռքն ընկնելով, բռնւում են Շատ աւելի յաջող ու ծիծագաշարժ է Երեք քաջեր: Մի ազնուականի ծառան մեռնելով՝ երեք հսղի ներկայանում են և իրենց քաջութիւնը զո-

վարանելով ցանկանում են վարձուել պարսկ նրանց կեղծ պարծանքը խայտառակելու համար հրամայում է զաղանապէտ Կոտրատիսսին մեսել ձեանալ, Շանախտովին նշանակում է մեսելի պահապան, իսկ Ամենաակուլոսին սատանայ: Եէս զիշերին սատանան դալիս է, մեսելը յարութիւն է առնում և երեքն էլ միմեանցից սարսափած օգնութիւն են աղաղակում: Տէրը դալիս է և նրանց վախեռտութիւնը խայտառակում:

3. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(1851—1872)

Առուշան. — Պետրոս Դուրեան, Քննական ակնարկ մը իւր կեանքին և զործին վրայ. Պոլիս 1911.

Ա. Զօպանեան.—Դուրեանի թատրերգութիւները.

Մասիս 1893, էջ 39—40:

—Պետրոս Դուրեան (կենսագրական և ըննադատական ուսումնասիրութիւն). Թիֆլիս 1894:

Էքսէրնեան Բ.—Կենսագրութիւն Պետրոս Դուրեանի.

Պոլիս 1894:

* * *—Պետրոս Դուրեան. Զմէկեան Օրացոյց 1895, էջ 114—127:

Իւրի Վեսելովսկի.—Հայ յունակո բանաստեղծը Լուժայ 1902, № 3, էջ 201—209:

Ալ. Ռուբէնի.—Հեծեծանքների երգիշը. Մուրճ 1903 № 3, էջ 112—136:

Պետրոս Դուրեանը աղքատ երկաթագործի

որդի էր. ծնուեց 1851 թ. մայիս 20, Պոլսի իւս-
կիտար թաղում: Վեց տարեկան էր, երբ մասւ
իւսկիտարի ձեմարանը, ուր 9—10 տարի մնա-
լով, աշակերտեց հին կրթութեան ներկայացու-
ցիչներին և սովորեց աւանդական ուսումը՝ Նա-
րեկի և պրաբար Քերականութեան վրայ: Իր ու-
սուցիչների մէջ պէտք է յիշել բացառապէս Արտ-
ովիոն Թղթեանին և Յակոբ Պարոնեանին, որոնք՝
յայտնի գրագէտներ լինելով, թողել են իրենց
գլուխմբ Դուրեանի վրայ:

Դեռ աշակերտ էր Դուրեանը, երբ սկսեց
զրել 13 տարեկան հասակում զրեց իր առաջին
ուսանաւորը, վաղաճառ արամութեամբ համակ-
ռւած մի երգ, որ թէե թոյլ, և իրը այն չի ան-
ցել իր տաղերի հաւաքածոյի մէջ, բայց դարձ-
եալ զգալ է տալիս նրա հանձարի վիթթումը:
16 տարեկան էր, երբ զրեց Վարդ և Շուշան
թատրերդութիւնը, իսկ Սև Հողերը սկսաւ իր
դպրոցական վերջի տարիներին: Զենք յիշում այն
բազմաթիւ թատրերը՝ որ Դուրեանը թարգմանել
է Փրանսերէնից՝ աշակերտական շրջանին՝ Վար-
դովիան գերասանական խմբի համար:

Դուրեանը եղել է գեղեցիկ, առոյզ, առողջ,
ուրախ, կատակասէր, բայց բարի, համեստ ու
առաքինի պատանի. նա ունեցել է լաւ ձայն և
նկարչական ընդունակութիւն. առում են թէ նո
կը լինէր երգիծարան, եթէ կեանքի հանգամանք-
ները այլ կերպ լինէին: Բայց բախտաւորու-
թիւնը նրա համար չէր:

Նա ծնուած էր բանաստեղծ, հոգին լցուած բարձր նիբշնչումներով, իսկ դաժան կեանքը, ընտանիքի ազբատութիւնը, օրուայ հացը հայթայթելու պէտքը քաշում էին նրան դէպի կօշտ նիւթականը ։ Նա մինչև իսկ կարողութիւն չունեցաւ իր ուսման ընթացքը շարունակելու և իր մտաւոր ընդունակութիւնները դարձոցնելու։

1867-ին նոռ Ճեմաբանը աւարտեց և իր աղքատ ընտանիքին օգնելու համար՝ աշակերտ մտածի սեղանաւորի մօտ։ Բանաստեղծ ու սեղանաւոր չէին կարող յարմարուել իրար հնա, ուստի Դուրեանը մի տարի ծառայեց ու թողեց այդ գործը։ Երան առաջարկեցին ծառայի պաշտօն՝ մի յայտնի մարդու, մօտ, բայց նա մերժեց իրքի սուոր գործ։ Մի ժամանակ անդորր մնալուց յետոյ՝ դարձաւ Օրագիր թիրթի խմբագրի օղնական, յիսոյ ձեռք բերեց մի քանի ժամանակը զաներ, որոնցից էլ զրկուեց մի տարի յիսոյ և զարձիալ մնաց անզործ։ Այս ժամանակ նա սրչեց գրքերով առգրել։ Նորակազմ Հայկական թատրոնից դիմեցին նրան և առաջարկեցին դրեւ Արտաշէս Ա., Աշխարհակալ ողբերգութիւնը, որի համար ստացաւ 100 ոսւրլու չափ վարձատրութիւն։ Այս ողբերգութիւնը լաւ ընդունելութիւն գտաւ, որից հեղինակը քաջալերուելով՝ շարունակելից գրեւ նորանոր թատրերգութիւններ։ Երեք տարուայ մէջ Դուրեանը գրեց 9 ողբերգութիւն, թարգմանեց Գրանսերէնից գանազան թատրերգութիւններ, որոնց մէջ յիշւում է յատկապէս

Վիկտոր Հիւզոյի «Արքայն զրօննու» անտիպ թատրօնութիւնը: Բայց այս զրուածքները, թէև հայթայթեցին հեղինակին փառքի բաղկներ, և քանի քանի անգամ ժաղովուրդը ծափերով ողջունեց Նրանց, բայց նիւթականի կողմից առաջինի յաջողութիւնը չունեցան, որովհետեւ թատրոնի սկիզբ միշտ զրկեցին Նրան: Դուրեանը վերջապէս յանձն առաւ լինել գերասան, չնայած որ ինքը գերասանութիւնը համարում էր անրարոյական գործ: Բայց նու այսուհետ էլ զրկուեց, նոր հետ թշնամացան և ոսճիկները չվճարեցին: Դուրեանը յուսահատուեց ու թողից:

Այսահեղ սկսում է Դուրեանի թշուառ ու տառապալի կեանքը: Իր ազբատ ընտանիքին օգնելու բուռն ցանկութիւնը, իր անգործութիւնը՝ երիտասարդական այդ կայտառ հասակի մէջ, իր զրական գառն ու ապարդիւն աշխատութիւնները, գերասանի քայրայիշ կեանքը, վերջապէս հոգեկան տաճաճնքը, անյոյս սէրեր, բանաստեղծական երևակայութեանց ու անյազ իզգերի նուազումը այնպէս մաշկցին Նրան, որ նու ստացաւ թոքախտ: 1871-ի սկիզբները աւերիշ հիւզնդութիւնը արդէն կրծում էր նրա սիրալ, և այնուհետև կեանքից յուստհատ, սիրոյ մէջ թշուառ, սրաից հիւանդ Դուրեանը տպընեցաւ իրը մարմնացիալ մելամազձութիւն: Իր մտերիմ ընկերներ՝ Վարդան Լութֆեանի կամ Ծանֆէսճեանի հետ ման էր զալիս անտառներում, ծովի հղերքը, Չամլըճայի բարձունքների վրայ, և տիսւը նո-

ճիների ստուերներում առանձնացած՝ երազում,
լալիս, դրեթէ մահուան հետ աղքում ու գրում
իր անչափ տրառում արիւնոտ տաղերը:

Մի տարի տանջուեց նաև 1872 թ. յուշ
նուարի 21-ի գիշերը՝ 21 տարեկան հաստկում
վախճանուեց այնպիսի սրտառուչ մահով, որի
նկարագրութիւնը ամէնից քարացած սրտերից
անգամ արտասուբ է քամում:

Վազամեռիկ բանասահզծը թէհ քաջալերու-
թիւն չգտաւ իր կեաներում, բայց շատերը զզում
էին նրա հանձարը, միայն նկատի ունենալով նրա
անուսում լինելը, չէին համարձակում համեմա-
տութեան գնել այն ժամանակի այնպիսի զրող-
ների հետ՝ օրոնց անունն էլ չի մնացել այժմ:
Բայց հենց մահուան օրից ամէն ինչ վոլխուեց
նրա յուղարկաւորութիւնը կատարուեց վառա-
ւոր հանգէսով, եկեղեցական ամենաճոխ զարդե-
րը յատկացրին այդ աղքատ երիտասարդին, հա-
կառակ մեր հկեղեցու օրէնքներին՝ իր կտակի հա-
մաձայն՝ նա թագուեց նուազածութեամբ, չորս
հազարից աւելի ժողովուրդ՝ չնայած օրուայ անձ-
րեին՝ յուղարկաւոր էր նրան Գերեզմանի վրայ
արտասանուեցին բազմաթիւ դամբանականներ՝
որոնք սկիզբ դրին Դուրեհանի վառքին: Կազ-
մուեց յանձնաժողով՝ հբատարակելու համար բա-
նաստեղծի դործերը, որոնք մի հատորի մէջ ամ-
փոփուած՝ լոյս տեսան մի տարի յետոյ՝ եւսկի-
տարի ընթերցասիրաց ընկերութեան չնորհիւ:
Այս գրքի հասոյթով կանգնեցին Դուրեհանի շի-

րիմը, որ մինչև այսօր էլ տանջուող սիրահարների ուխտատեղին է։ Նոցա վշտի հասածները և հրացման բացագանչութիւնները դէպի թշուառ բանաստեղծը՝ ուսացնում են նրա շիրմի սպիտակ մարմարը, անձրես թափւում է և այդ տառապանքի ստուերները սրբում նուազեցնում։

Դուրեհանի գործերի առաջին տպագրութիւնը (1872 Պօլիս, էջ 493) բաւական պակասաւոր է, նու պարունակում է միայն նրա տաղերը և 5 թատրերգութիւններկորդ անգամ հրատարակուեց Դուրեհանը (Պօլիս 1893)՝ գրաքննութիւնն թոյլ տուած ստումաններում։ պարունակում է երգերի մի մասը և երկու թատրերգութիւն, դուրս են հանուած ազգային-հայրենասիրական տաղերը՝ որոնք միւս հրատարակութեանց մէջ չեն մտել։ Սրանից յետոյ Դուրեհանը ունեցաւ երեք ուրիշ տպագրութիւններ կովկասում, բայց բորբն էլ երկրորդ տպագրութեան վերայից և այն էլ միայն տաղերը։ Անցեալ ատրի Պօլում սկսուն հրատարակուել Դուրեհանի տաղերը և թատրերը՝ առանձին գրքոյկներով։ Առաջին տպագրութիւնը պատրաստելու ժամանակ՝ հրատարակիչները ձեռագիրը յանձնեցին Պարունակի և Սիմոն Ֆելէկեանի ըննութեան, առաջինին տալով թատրերգութիւնները և երկրորդին՝ տաղերը։ Նորա կարծում էին թէ գրուածքները հրատարակութեան արժանի չէին և պէտք էր ենթարկել հայկարասնների սրբագրութեան։ Պա-

բանեանը՝ անաղարտ յիս զարձրեց ձեսովիրը.
իսկ Թէլէկեանը յանդզնեց իր ուզոծ փոփոխու-
թիւնները մայնել ատղերի մէջ։ Դուրեանի երկ-
րորդ տպագրութիւնը՝ կտարուելով բուն ձե-
ռագրի վերայից, տպատուած է այս սրբապղծու-
թիւնից։

Դուրեանի գործերն են՝ թատրերգութիւն-
ներ, նոմուկներ, մի վեպ և ատղեր։ (Պ 2261)

Թատրերգութիւնները՝ որոնք ինն են թուով։
իրենց հեղինակութեան կարդով սոքա են. Վարդ
եւ Շուշան կամ՝ Հովհիք Մասնաց, Սեւ Հողեր
կամ Յետին զիշեր Արարատնան, Արտաշէս Ա.
Աշխարհակալ, Անկումն Արշակունի հարստու-
թեան, Առաստակութիւնը Փարսկաց ի Հայու-
թամ Աւերումն Անի մայրաբաղարին Բագրա-
տուննաց, Կործանումն Հովմայ, Շուշանիկ,
Տիգրան Բ. եւ Թատրոն կամ Թշուառներու Մա-
ցանից երերը՝ Կործանումն Հովմայ, Շուշանիկ և
Տիգրան Բ. գեռ անտիպ են, Արտաշէսը ապուցց
Լումայի մէջ, իսկ մասցեալ հինգը Դուրեանի առ-
աջին հրատարակութեան մէջ (Թատրոնն ու Վարդ
և Շուշանը նաև երկրորդ հրատարակութեան
մէջ)։

Մինչև Դուրեան գրաւած բոլոր թատրեր-
գութիւնները (Հեքիմեան, Գէշիկթաշլիան ևն)՝
զասական հեղինակների հետեւզութեամբ զրբ-
ուած ողբերգութիւններ են. Կոռնէյլ, Թասին,
Ալֆիկառի այդ հեղինակների վարպետներն են։
Դուրեանի ուսուցիչը՝ Մատթիան Թղթիան՝ առաջ-

զին անդամ լինելով մացնում է մեր մէջ վիալաւ կան (առմտնաթիկ) ուղղութիւնը և քեմ է քարձուացնում իր նոր խաղերը։ Դուրսկանը՝ որ կարգացիլ ու աեսել էր իր ուսուցչի այս խաղերը, ներկայ էր եղել նոյն իոկ վիալակոն գողրոցի նշանաւոր գլուխների՝ Հիւզոյի, Շիլլէրի և Շէքսպիրի թատրերութեանց, Թողնում է նոյնալէս դասականներին և հետեւում է վիալական գողրոցին։ Այս կարգին են պատկանում իր թատրերութեանց ամենամեծ մասը։

Բայց Դուրսկանը մացնում է մեր մէջ երկրորդ՝ աւելի խոշոր նորութիւնը. դա իրամաշտ գողրոցն է։ Զգաց Դուրսկանը որ «հասարակութիւնը ձանձրուցած է գերասանին կոկորդը պատուղ և թատերատեմներու զլուխը ուռեցնող խոշզերէն»։ և այն զառանցական խաղերով զո՞ն չըլլոր... և եթէ ընտանեկան անցքերու վրայ յօրինուած նորանոր թատերախաղեր ներկայացուին, ժողովուրդը շատ կ'ախորժի անոնցմէ և իր բաջարիրութիւնը չը զլանար... վասն զի ինքն ալ տեսարանին վրայ ելնող անձի մը համապատկերը կը գանէ իր վրայ, և հեղինակին ճաշակին կամ հմտութեանը շնորհիւ քիչ կամ շատ օդուտ կը բազէ անկէ»^{*)}։ Դուրսկանը դառնում է իրապաշտ գողրոցի հայրը և այս ուղղութեամբ զրում է Թատրոն կամ Թշուաներ թատերախաղը։ Արանով նա մտնում է կեանքի իրական ասպարէզը, ուր այնքան նիւթ կայ զիսելու և քննե-

^{*)} Թատրոն կամ Թշուաներ, Արար. Բ, տեսիլ Ա.

լու, ուր այնքան ընկերական, հասարակական հարցեր կան արծարծելու, զատելու: Բայց թատրոնը լինում է Դուրեանի վերջին թատերախաղը, մահը վրայ է հանում և արդիլում է նրան իր նոր ճանապարհի մէջ առաջադիմելու, իսկական թատերագրի ուժերը դարձացնելու:

Հակառակ այս բոլորին՝ Դուրեանը թատերագիր չէ. նրա բոլոր թատրերգութիւնները անշաղող են, պակասում են նրանց մէջ զործողութիւն և հոգեբանութիւն՝ որ թատրերգութեանց մէջ փնտուած ամէնից աւելի էական բաներն են: Տեսաբանները առհասարակ անբնական են, սէր, խարդաւանանը, ոնիրներ, թոյն, անձնասպանութիւն իրարու հետ շաղկապուած՝ անլուծելի հանելուկներ են սարքում: Հեղինակը յաջողում է զլխաւորապէս այնտեղ՝ ուր սիրային տեսաբաններն են պարզում: այստեղ երկան է զալիս սիրով այրուող՝ բանաստեղծ Դուրեանը, որ իր սրտի պատկերն է նկարում: իր ամէնից քնրոյշ զգացումները, իր ամէնից անոյշ բառերը սիրահարների բերանն է զնում: Գեղեցիկ են այդ էջերը իրեւ արձակ բանաստեղծութեան հատուածներ, իրենց մաքուր աշխարհաբարով, իրենց պատկերալից լիզուով, իրենց նկարուն ոճով, բայց հէնց այս պատճառով էլ յարմար են աւելի շուտ ընթերցանութեան, բան ներկայացման:

Այսպիսի սիրային էջերով հարուստ է Դուրեանի առաջին թատրերգութիւնը՝ վարդ եւ Շո-

շան, որը գրել է 1867 թուին, 16 տարեկան հասակում։ Դա չորս արարուածով երգախառն թատրերութիւն է, որի նիւթը թէկ տղայական, միամիտ մի բան, բայց լիզուի, բանաստեղծական արտայայտութեանց և զգացմունքների փափկութեան կողմից սքանչելի է։ Առւրմակը մի եղանագործ մարդ է, որ իր հօրը՝ Վահրամ նախարարին սպանելով՝ կողոպառմ է հարստութիւնը և անառակի ու աւազակի կեանքով ապրում։ Ազարակապան Պարէտի կինը Մարիամ՝ հրապուրուելով նրանից՝ թողնում է ամուսնուն և փախչում նրա հետ. բայց շուտով լքուած Առւրմակից, իր նորածին որդու՝ Գեղամի հետ սահմատում է մուրացկանութեամբ ազրել։ Պարէտը մի որդի ունի՝ Վարդ և մի որդեգիր աղջիկ՝ Շուշան. նոքա սիրում են միմեանց այնպիսի քընքոյշ, այնպիսի անմեղունակ սիրով, որ «ծաղկին ու զեփիւոին սէրն» է կարծես։ Հիանալի է այս երկու անմեղ էակների սիրային խօսակցութիւնը, որից մի նմայշ գաղափար պիտի առ Դուրեանի թատերական արձակի մասին։

Վարդ. — Յոզեֆար, սիրելի Շուշանու, եթէ կուզես, ուա տուուակին քով նստինք քիշ մը։

Շուշան. — Թանի որ քու հետքեմ, սիրելի Վարդո, զիսես որ երբէք չեմ յոզնիր։

Վարդ. — Շուշան, երբ առաջին անգամ սէրը փափէիկ մատներովը կուրծքս բաղիկց, ևս միայն կերեակայէի զիրկ մը և քնրուշ թիկը... կըսէի ինքնիրենս... Երբ պիտի զայ այն երջանիկ վայրէկեանը յորում սիրուհւոյ մը հեշտ ձայնը պիտի մըմնջէ ին-

ծի, «զրկէ զիս Վարդ», և ահա քու զիրկդ եմ, Շուշան, երջանիկ է այն ծաղիկը որ քու շրթամացդ վըրայ կը թառամի, երջանիկ է այն հողմիկը, որ քու ձակատդ կը շոյէ, երջանիկ է այն ճառագայթը որ քու մազերուդ մէջ կը նոււղի, և ամենէն աւելի երջանիկ է այն որ զբեկ կը սիրէ ի բոլոր որտէ:

Շուշան.—Ա՞հ, յիրաւի Բնչ քաղցը է այն սէրը, Վարդ, սէրը կենաց զարունն է որ մեր սրտին մէջ կը փթթի, և համրոյը անոր զեփիւնն է որ մեր սիրաբորսիք սրտերը կը զավացնէ... անս, Վարդ, բոլոր բնութիւնը սիրով կը խայտայ... լուսին՝ սէր կը ցօղէ, ծաղիկը սէր կը բուրէ, հողմիկը սէր կը շնչէ, թռչունը սէր կը զեղգեղէ, տերելը սէր կը սօսափէ, տռուակը սէր կը մրմջէ, ան, ամեն ինչ սէր.. սէր...

Վարդ.—Շուշան, սրչափ քաղցը ես, քու սրբակիդ ծալքերը շուշանայ թերթերուն պէս ամքիծ են, քու նայուածքդ արշալուսոյն առաջին ճառագայթին նման քաղցը է, քու շունչդ առաւօտեան զեփիւոքն շափ հեշտալի է... ան, եթէ զու շըլլայիր, փուշերով ժամկուած վարդի կոկոն մը պիտի ըլլայի ես և զես չի բացուած ոլիտի թառամէիր:

Շուշան.—Դիտցաւ Արարիշը որ մենք առանց երարու չի պիտի կարենայինք ապրիւ, ուստի իրարու զիրկ նհանեց զմեզ, և հիմա սէր կը շնչենք միտաեղ, այնուէս չէ, Վարդ, միշտ պիտի սիրենը զի բար, ինչտէս որ ծաղիկն ու զեփիւոք միշտ զիրար կը սիրեն... ան, անս Բնչապէս ուժգին կը բարախէ սիրտու, կարծես թէ կուրծքն ծակելով քու սրտիդ քով թռչիւ կուզէ, մասեցիր ինձ, սիրելիդ իմ Վարդ միշտ զրկէ զիս, անս, լուսինը Բնչապէս կը մպտի մեզի, կարծես թէ նա ալ աստեղազարդ կամարէն

մեր զիրկը թուշի կուզէ, Կա ու զմեղ կը սիրէ, մեր
վրայ կը հսկէ, մենք ուր երթանք, ինքն ու մեզի
կը հետեւ:

Աճրագործ Սուրբակը տհանելով Շուշանին,
առևանգում է Նրան մի անձանօթ քարայրի խո-
րը, ուր անպատուած Շուշանը դիմում է անձ-
նասպանութեան: Սիրոկորոյս Վարդը հեռանում
է հայրենի տնից և օրերով յուսակտուր թափա-
ռում՝ իր Շուշանին վնասելով և գանում է Նրան
մահուան վիրջի ըոսդէներին: Այսահեղ վրայ են
հասնում մի կողմից Մարիամ և Պարէտ՝ որոնք
իրենց Վարդին են վնասում, միւս կողմից գա-
զանացած Սուրբակը՝ որ Վարդից վրէժ է ու-
զում լուծել: Բայց Մարիամի դաշոյնը խրում է
Սուրբակի սիրութ և վերջ ատլիո նրա եղեռնա-
զործ կեանքին:

Սեւ Հողեր կամ Յետին զիշեր Արարատ-
եան՝ ողբերգութիւն է երեք արարուածով և մի
վերջարանով: Լանկթիմուր՝ թաթար գազանը՝
աշխարհներ տւերելուց յիշոյ՝ Սեբաստիոյ վրայ է
գալիս. Սեբաստիոյ ծերունի իշխանը՝ Նորայր,
նրա ազջիկը Նազինիկ և Նազինիկի ամուսինը
Վաղինակ՝ որ Հայոց զօրսավարն է, բաջութեամբ
դիմադրում են: Վաչէ զօրավարի մատնութեամբ՝
Սեբաստիան առնւում է և սկսում սոսկալի կո-
տորածը. Լէնկթիմուրի վրէժինողբութեան զոհ է
զնում հենց մատնիչ Վաչէն և նրա հրամանով
շղթայի է զարնուում, և նա թափասում է յուսա-
հատ ու անօգնական. նրա հայրը Ներսէն և կի-

Նը Երանեակ՝ անիծելով մտանիչին՝ հեռու են փախչում. գաղանացած Վաչէն իր կնոջ վերայ էլ է ձեռք բարձրացնում, բայց երկնքի կայծակը շանթահար է անում նրանու Լէնկթիմուր շղթայում է նաև Նորայր իշխանին, բայց հրապուրուելով նրա գուստը Նազենիկի գեղեցկութեամբ՝ առաջարկում է ընտրել տիեզերակալ Լէնկթիմուրին կամ դասապարաեալ Նորայրին և կամ Հայրենիքը Նազենիկը հայրենիքն է ընտրում. Լէնկթիմուր զգածուած՝ գաղարեցնում է կոտորածը և հետանում Սերաստիայից:

Վերջարանի մէջ կայ մի գեղեցիկ այլարանական պատկեր. բեմ են բարձրանում Հայաստան, Յոյս, Սէր, Անմիութիւն և Թշուասութիւն. Աւերակների մէջ՝ փշեպատկ զլխով, շղթայական նստել է յուսանատ Հայաստանը. Թշուասութիւնը՝ մի ձեռքին սև դրօշ, միւս ձեռքին տապար՝ կանգնել է նրա զլխի վերել. Անմիութիւնը նրա ոխերիմ թշուամին է. բայց յանկարծ ծագում է Յոյսն ու Սէրը. Անմիութիւնը կործանուում է, Թշուասութիւնը անհետանուում և աւերակների միջից վերականգնում է Հայաստան:

Անկումն Արշակոնի հարատութեան՝ վեց արարուածով թատրերգութիւն է. Աներկայացնում է Արտաշէս Գ-ի կեանիքը և Արշակունի հարըստութեան անկումը: Արտաշէսը անրարոյական, ցոփ ու հեշտամոլ մի թագաւոր է, որ տէրութեան ու ժողովրդի հոգսերը թողած՝ իր վաւաշոտ կրբերին յագուրդ տալ է աշխատում. նա

լքել է իր մօրը՝ բարի և առաքինի Զարմուհուն՝ Հայոց մայր թագուհուն և իրը՝ զժի՝ պալատից գուրսէ վճռաել. նա լքել է և իր կնոջ՝ գեղցիկ և բարեպաշտ Հերանոյշին՝ Հայոց թագուհուն, որ պալատի մի առանձին սենեակում մեռակեացի կեանք է վարում, իր պարկեշտ արքայորդու՝ գեղցիկ և քաջ Հրաչեայի հետ. Ամբողջ պարագը և նախարարների բազմութիւնը ներկայացնում է իրը հաճոյքի ու զուարձութեան անձնատուր մի մարմին. Պակաս անկեալ չէ նաև հոգեորականութիւնը. Սուրմակ երէց՝ որ նախկին պալատական է և իր դաւադրութեանց մէջ բոնուելով՝ ազատուելու համար գաղտնապէս հոգեորական կոչում է ստացել, այժմ այդ սքեմի տակ թագնուած՝ զործում է ամէն անօրէնութիւն. Բարէլ ծերունի զինւորի աղջիկն է զեղցիկ և բարեպաշտ Շահանդուխաը. Շահանդուխա և Բարէլ անձկալից սիրով սիրում են միմիանց. Արտաշէս տեսնելով նրան՝ ուզում է իր կինը դարձնել, նա բանտարկում է Բարէլին և օրհնած ջրի մէջ թոյն խտոնելով՝ սպանում իր կնոջը՝ Հերանոյշ թագուհուն. Շահանդուխաը յափշտակում է պարտ. բայց Արտաշէսի ազաշանքները, հարստութեան ու փառքի հրապոյշները ի զուրդեն անցնում. նրան անձնատուր շինելու համար Շահանդուխաը թոյն է խմում և իր սիրելի Հրաչեայի հետ միանում մահուան զըրկում. Սուրմակ երէց, Բարէլ և Հերանոյշի հայրը՝ Փառներսին վրէժինդրութեան բոցով վառուած՝

դաւագիր բանակ են կազմում և նախարարների
հետ միացած պնում են Պարսից թագաւորի տ-
ռաջ բողոքելու Գալիս է Սոհակ կաթուղիկոսը,
բայց նրա յորդորներն ու աղաչանքները ոչ ոք
չեն բում, միայն Բարելն է որ ի ոէր հայրենիքի՝
գաւագրութեան մէջ երդմազանց գանուելով՝ վաս
չկռչուելու համար՝ վաշոյն իր կուրծքն է խը-
րում. իսկ գաւաճան նախարարները համում են
իրենց փափազին, և Արտաշէս ու Սոհակ զըրկ-
ուելով իրենց գահից՝ կործանւում է Հայոց Ար-
շակունի թագաւորութիւնը:

Առաստակութիւնք Պարսկաց ի Հայո կամ
Ասերումն Անի մայրաբաղարին Բագրատուննաց,
հինգ արարուածով՝ պատմական ողբերգութիւնն է:
Տուղրիւ յարձակում է Անիի վրայ. Գագիկ՝
Կարսի թագաւորը և Թաթուլ դիմադրում են:
Տուղրիւն յաջորդում է Արփասլան Աղկան՝ պար-
սիկ իշխանը՝ սիրահարուած Անիի իշխան Բա-
գարատի աղջկայ՝ Զարմուհու վերայ, բանակի
բոլոր գաղտնիքները հազորգում է հայերին և այս
միջոցով յաջորդում է հայերին՝ վանել թշնամու-
րուր յարձակումները: Զարմուհու վերայ սիրա-
հարուած է նաև Ապրասմ Անիի զօրքերի հրա-
մանատարը, որ գայրացած Զարմուհու մերժու-
մից, մատնում է քաղաքը թշնամունու Կոտորածը
սկսում է Անիում, որին զոհ է դնում և Ապրասմը

Այս թատրերդութիւնը ամէնից թոյնն է
Քուրեանի զործերի մէջ և հաստրակ պատմական
ոճից դուրս՝ զրեթէ ուրիշ ոչինչ չունի:

Արտաշէս Ա. (Լումայ 1899, գերբք Բ. էջ 1—54) հինգ արարուածով ողբերզութիւն է, Առաջին արարուածում երեսում է մեծափառ Արտաշէսը՝ որ պատրաստում է Արևմուտք արշաւելու, և այս առթիւ շնորհներ է բաշխում իր նախարարներին. բոլորը գնն են բացի Արշէզից, որ Արտաշէսի զինակիրն է եղել երկար ժամանակ, բայց իր հաւատարիմ ծառայութեան փոխարէն ոչ մի վարձատրութիւն չի ստացել. Երեւն է զալիս մի գնչունի (Որմզդուխտ) և Արշէզին բաց անում մի սարսափելի զաղոնիքը Այդ գնչունին մէկ աղքատ պարսկունի էր, Արտաշէսը սիրել է նրան, խոսանալով թագունի դարձնել երբ կը ժառանդէ հայրենի գահը. բայց շնուռ է մոռացել իր խոսառութը: Լքուած պարսկունին իր նորածին մանկիկին յանձնել է Արտաշէսին ու ինըը սկսել է վարել թափառուկան կետնքը: Մանկիկը մեծանում է և զառնում Արտաշէսի քաջ զինակիրը. զա Արշէզն է: Որմզդուխտ և Արշէզ երդուում են վրէժ լուծել թագաւորից: Բ. որարուածը պատերազմի յայտարարութիւնն է Լիւզիոյ Կրիսոս թագաւորի գէմ: Դ արարուածում Արտաշէսը իր բանակառելունն է: Որմզդուխտը ստուերի պէս ներկայանուում է նրան և զերջին անգամ պահանջուում կտտարել իր խօսառութը. Արտաշէսը մերժում է, վրէժինդիր կինը զիշերանց ծածուկ մտնում է բանակառեզը՝ դաշնուանը անելու թագաւորին, բայց մութի մէջ սխալմամբ իր որդուն՝ Արշէզին է սպանում: Դ

սրարուածին նաւամարտն է, Որմզդուխտը փախ-
չում է Հայոց բանակից և լողարով անցնում Կրե-
ստի մօսւ և արարուածում յաղթական Արտա-
շէոը Կրեսոսի պալատումն է, Կրեսոս և Որմզ-
դուխտ գերի են շղթայակապ ու մահուան են սպա-
սում, Արտաշէոը ներում է, Որմզդուխտին ար-
ձակում, իսկ Կրեսոսին բանտ պցում Կէս գիշե-
րին՝ Որմզդուխտը դաւաճտնութեամբ կոիւ է
ձկում Հայոց երկու բանակների մէջ, զաղանա-
բար մտնում պարատը, Արտաշէոին սպանում,
յիառյ մտնում բանտը, Կրեսոսին արձակում, և
մինչդեռ երկուսով դուրս էին զալիս Լիւզիական
ուժերը կազմակերպելու, վրայ է համնում Հա-
յոց սպարապեաը և երկուսին էլ խոզիսպում:

Դուրեանի վերջին թառերախաղն է Թատրոն
իամ Թշշուառներ, որ 5 արարուածով ոզ-
քերգութիւն է: Դուրեանը ձանձրացել էր արդէն
վիստական ուզգութիւնից և տեսել էր թէ կեան-
րին աւելի մօմիկ լինելու համար՝ հարկաւոր է
դիմել իրազաշտ զալրոցին: Եւ ահա այս ուզգու-
թեամբ զրում է Թատրոնը՝ Մեծանարուսա վա-
ճառական: Մուրսաւովը ամբոսզ հարսուս թիւնը
կորցնելով այժմ Թագմա անունով ծածկաւած
զաղտնի: մուրացկանութեամբ է ապրում: Իր աղ-
ջիկը Վարդուհի՝ որ լաւանեկի զեղեցկութիւնն
ունի և իր որդեգիրը Եղուարդ՝ որ զրագէտ է,
օրսապին սիրով սիրում են իրար և իրենց հօր
մուրացկանութեան անծանոթ թշտառութեան մէջ
ապրում են իրենց սիրով երջանիկը Հարսուս

վաճառական Նահապետաֆը տիսնելով վարդու-
հուն, առաջարկում է նրա հօրը՝ 50 ոսկով ծա-
խել աղջկայ որագիւղ նրան Մուրացելան հայրը
համաձայնում է և իր որդիական սիրուն զո՞ւ է
զարձնում անոնիդ աղջկան Եղուարդը լաւլով հօ-
րը կարօտ վիճակը՝ գերասանութեան է սկսում.
թշուառ Վարդուհին հետեւում է նրան. և իրենց
թշուառ ոչըրք հօր գուածանութիւնը, աղջկոյ
անպատճաթիւնը ողբերգութեան վերածած՝ բեմ
են հանում և ողբերգութեան վերջարանը իրա-
պէս գործադրելով իրենց վրայ՝ թոյն են ընդու-
նում և հանգիստականների բուռն ծափանարու-
թեանց մէջ մեռնում են երկուան էլ:

Խնչպէս տեսնուում է, Թատրոնի զաղավարն
է միայն յաջող՝ իրեւ տաաջին փորձ իրա-
պաշտ ուղղութեան, ապա թէ ոչ զործը յաջող-
ուածներից չէ Այսակ երեան են զալիս ոչ թէ
կեանքի երկոյթներ, այլ բոլորովին պատահական
զիալուածներ, սրոնք շատ անբնական են: Դուք-
եանը՝ որ ժամանակի ոգու համաձայն՝ սիրող է
վիպական բարդութեան, չի գոհանում գես այս-
քանով, և վերջին արարուածում կըկնապատիկ
կնճռուառում է զէղը: Դուքս է բերուած որ Նա-
հապետօֆը Մուրատօֆի սրդին էր և նախկին
զրամանենգ, որ իր կեղծ ոսկիներով վարձառ-
քել է հօրը և ոտեւ՝ զիմելով ստիկանութեան՝
բանտ է ուզարկում նրան: Այսպէսով իրարից
անծանօթ՝ եղբայրը պղծում է քրոջը, հայրը
մատնում է սրգուն: Այս բոլորը առելորդ ու շին-

ծու բաներ են Որքան թոյլ է դուրս բերուած
նաև Թռվմայի ոճիրը և Վարդուհու ցաւը. Հայր և
աղջիկ բոլորովին ստոն են այդ զարհութելի ոճ-
րի առաջ, կարծես թէ մի սովորական դէպք լի-
նէր. ոչ զայրայթ, ոչ դիմագրութիւն, ոչ կիրք և
ոչ ցաւ: Ենզծ ոսկիների ցաւը շատ աւելի մհծ է
երևոմ քան պատուի բռնտրարութիւնը: Նորից
այստեղ էլ ամէնից յաջողած մտսերը նրանք են
ուր պատմում է Վարդուհու և Եղուսրդի մա-
քուր սէրը:

Դուքեանի վէտը՝ որ ինքնակենուադրութեան
նման մի քան էր, կրում էր Վուսիորեան զիշեր-
նիը վիրնազիրը. դա մի ընդարձակ զործ էր, բայց
մնացել է կիսատ և այժմ էլ կորել է:

Նամակները (Թուով 13 հատ, մէկը զբա-
րար) Դուքեանի գեղեցկազոյն արձակ զրութիւն-
ներն են. գոքա նամակներ չեն և չունին էլ նա-
մակի հասարակ ընտանի լեզուն, այլ քերթուած-
ներ, նամակ պատկերներով գունագեղուած քերթ-
ուածներ, որոնց մէջ հիւանդ բանասահղծը իր
տառապոզ սրախ ցաւն է նկարում: Նա նկարում
է մեր առաջ իր զգացմունքներով զեզուն սիր-
ութ, յուսահատ դառնութիւնը լցուած հոգին,
կեանք անյաջողութիւնները, յուսախար երազ-
ները և այն սոսկալի ցաւը՝ որ կրծում էր նրա
սիրաթ, երբ նա թոքախառվ ատնջուած դրեթէ
զերեզմանի եղերքում կանգնած դիտում էր իր
առաջ բացուսդ ու վիճը: Զվայշիել սէրը ու թաղ-
ուիլ զերեզմանի այդ վէի մէջ, ու զերեզմանից

յետոյ մօռացունել ամէնքից, անյիշտատակ կորչել,
ահա թէ բնչն է աւելի սարսափեցնում բանապա-
տեղծին:

Մեռնիլ թորմ ու երազոտ, մեռնիլ առանց
մարմարեայ ճակարի վրայ խորշոմ մը ձգելու, առանց
շուրթեր ճամբոյրով մը բորբոքելու, առանց հոգին
ժպիտով մը հրդեհելու, մեռնիլ...

Իմ հոգին յառած է զարկանար և անհուն աշ-
խարհի մը, զոր երկինք կը կոչեն... ահ, բարեկամ,
կուզեմ զզալ թէ երկինք մը կայ, վասն զի դժուար
է ինձ հաւատալ թէ աշխարհ մը կայ ինձ համար...

Կուրծքին տակ հրարուխ բանկած է, կը ակներ
կեռան և կայրեն զիս, այս կը ակը երկնքի կը ակըն
նման է, որ չի մարիր և շպիտի մարի մինչեւ որ
չսպառէ ամէն ինչ:

Կարծես թէ զերեզմանին մէջէն կը խօսիմ
ալ մարը մօնենու վրայ եղող ճառագայթ մ'եմ, քայ-
րայում մ'եմ:

Ահա ևս կի՞ջնեմ կամ մաս ևմ իջներու այն սե-
յառակ անզունդին մէջ՝ որոյ անունը զերեզման
կը ունի: Արդեօք ինչ պիտի ըսին ինձ զերեզմանէն
անդին: Ունա թշուառ երիտասարդ մը, որ աշխարհ
եկաւ, և միայն իր մեռնեն զզաց ու մեռաւ:

Գիտեմ, թիշ առենէն պիտի մեռնիմ: ար-
ցունքի անդ՝ զազազիս վրայ երկու խօսք, հառա-
շանքի տեղ՝ երկու չունչ աղօթք հոգւոյն համար, և
վշար անդ՝ երկու փունչ ծաղիկ զերեզմանիս վրայ:
ևս ալ մեռած պիտի շըլլամ, միշտ զալար ու կեն-
դանի պիտի մեռամ:

Դուրեհանի բարձրագոյն արժանիթը կազմում
էն Տաղերը. սորտ 38 հատ են, մի քանիսը
զրուած 1867—70 թուերին, իսկ ամենամեծ մասը
1871—ին: Այս սոտանաւորներից եօթը՝ ազգային
հայրենասիրական երգեր են, երկուսը կը օնա-
բարոյական, մետցեալը անձնական ու սիրային:
Առաջին երկու խմբի երգերը համեմատութեամբ
երրորդին՝ բառական թոյլ են, բացառութիւն է
կազմում միայն «Եղծք առ Հայտատան» զզայուն

ստանաւորը՝ որ կարող է մրցել Դուրիանի ամենալաւ ստանաւորի հետ և իրը երգ՝ երգում է Տաճկահայոց մէջ:

Երբոր ցողին փաղփուն շիթեր զիշերուան
Առաք՝ թիրթի՝ ձագկի վրայ կը տեղան,
Եւ երբ երկինք աստղեր շողան մթափար,
Ցայտեն արցունք՝ կայծ իմ աշերը խաւոր.
Ի՞նչ, Հայաստան, քեզ մոռնամ...

Երբէք, այլ ո՛կ նոճի մըլլոր, քեզ շնոք տալ:

Դուրիեանի սիրային տաղերը՝ նրա զլուխ-
գործոցները, նրա անունը անմահացնող ամէնից
վահօն էջերն են. Հայ զրականութիւնը չունի նրան-
ցից աւելի փայլուն դոհարներ: Յիշենք մասնա-
ւորապէս Իցիւ թէ, Սիրեցի քեզ, Սիրել, Լճակ,
Թրրահին, Ներա հետ, Դրժել, Սկ՝ ոկ', Հեծեծ-
մունք, Հծծիւնք, Տրտունջը, Զզջում, Իմ ցաւը,
Իմ մանը, Այս բոլորի մէջ բանաստեղծը երդում
է իր զիշտն ու իր սէրը, երկուսն էլ իրարից
անբաժան, որովհետեւ Դուրիեանի սէրը ուրիշ բան
չէ, բայց եթէ սիրոյ յուշը, չվայելած սիրոյ
գառնութիւնը: Այդ սէրը չունի իրական, մարմ-
նական զոյն. Նա մի բոլորավին վերացական,
երազային, ոլլատոնական անուրջ է, որ չզիտէ
նիւթի կոշտութիւնը, ուամիկ զդացմունքներ: Նա
բխում է ուղղակի հոգաց՝ մարտը ինչպէս ման-
կան հոգին, անարատ ինչպէս նորաբաց ծաղկի
թիրթը. եթերային սիրոյ ներբողն է այն, որ չի
տեսնում, չի շօշափում, չի մտածում, չի խոր-
հրդածում, այլ միայն զգում ու թրթում:
«Իցիւ թէ» Դուրիեանի հնազոյն տաղն է

(1867 թոից). սիրային յափշտակութեան ու
հիացքի արտապյայտութիւն.

Ո՞հ, ի՞նչ ես զու, սէր, երկնի, հուր կոմք ժղիւ...
Չունի երկն աշացդ կայծերն ու կապոյտ,
Վարդը չունի քու լանջդ ամբիմ՝ լուսափթիմ...
Չունի լուսին վարդերն չիկնու այտերուդ:

Բայց հիացքին յաջորդում է խոկոյն վիշտն
ու արցունքը՝ այսպիսի մեղմ տողի մէջ ամփոփ-
ուած, որ կարծես ճռուագայթն էր ցոլաց ու
անցաւ.

Գիշերն երկնի կայծից՝ լուսնոյն սիրագէմ,
Ցերեկն արհաց՝ ծաղկանց ժամփիս... մէկուն զէթ...
Իսկ ըեղ համար ես արցունքով կաղօթեմ,
Դու չես շնորհեր նայտածը մինձ հուր աշերէդ:

Կոյսին հոգելու համար սիրահարը ցանկա-
նում է լինել հուսով զեփիւռ, լացող վարդ, վճիռ
առու, շաղուն ճռուագայթ, ու այս ամէնից յիշոյ՝
եթէ նա արդէն սիրաը տուել է մէկ ուրիշին,
ցանկանում է լինել մինչև անզամ նրա զերեղ-
մտնի քարը, կոյսին հպելու, նորա շունչը լուր-
լու, երազով:

Այլ ոչ, անզամ, եթէ տուիր մէկուն սէր,
Եցի՛ թահոսը զերեղմանին բարն լինիմ,
Եւ զու թօշնած զատ չոչչէ չուքչու... արտասուել-
թեղ հոգելու համար հարկ լոկ զու շիրիմ.

Վերջին առզը դժրախտաբոր շատ աննիր-
զաշնակ է:

«Սիրեցի քեզը» սիրոյ մերժումն է բանառ-
տեղծը արշալոյսով հանդիպում է կոյսին, որ վար-
դի թերթերն էր վեռում. սիրում է նրան, հողին
նրանով շղթայում, և այնուհետեւ ուր որ դնում
նրան է տեսնում. տերեների մէջ նրա ձայնն է
խօսում, առուակի մէջ նրա դէմքն է փայլում,

զիփիւսիր միջից նրա մնչիւնն է լուռամ և նորանից աղաստուել է ուզում, վարդի թերթերի տակ ծածկուած այդ գրանիտէ սրտից. նրա մխիթարութիւնը գերեզմանն է:

Դրկեմ սրտովս արդ ցուրա հաղ,
Ի աւ շզիպիմ քեզի թող,
Կոյս մէ նաև գերեզման...
Կայ խորոշէկ սիբու մանոք նման...

«Սիրել» և «Երժել» իրար հակադիր ուստանաւորներ են. առաջնի մէջ բանաստեղծը՝ հետացած մարդկանցից, ուզում է սիրել միայն աստղերը, ծաղիկները, վասկը, զիփիւսը, զրկել բնարը. բայց կոյսը հրապուրում է նրան միշտ իր նայուածքով, իր ժպիտով, իր շրջազգեսափ շըրշինով, իր փափսցով. վերջապէս սթափւում է բանաստեղծը, ճանաչում է նրան իրքե զեղ ու կրակ, անապակ ինչպէս վտակը, անմեղ ինչպէս զեփիւսը, հաւատարիմ ինչպէս բնարը, և հրաժարում է մհնաւոր կեանքից:—Երկլորդի մէջ բանաստեղծն է որ դիմում է կոյսին, ուզում է սիրել միայն նրա ժպիտը, նրա աշերը, նրա խոկմունքը, միշտ մօտը լինել լոել նրա սրտի թընդիւնը, շնչել նրա հոգին, շօշափել նրա վարերը, բայց կոյսը ձանձրացած միրժում է նրան՝ Սթափւում է վերջապէս բանաստեղծը, տեսնում է իր երազների մոխրացումը, կտյծակնանար է լինում հոգին. այնուհետեւ մի խորշ միայն կայ՝ որ չի ծաղրում նրան, զա գերեզմանի լուս փոսն է:

«Լճակը» յաւսահատ սիրահարի խօսակցութիւնն է հանգարտ լճակի հետ. նրա մէջ զտնում է

իր նուսնին, իր մակրմին. ինքն էլ լճակի ովեա
սիրում է զրաւուել, լսել ու խոկալ.

Որբան աւնիս գու ալի՞
Ճակառս այնբան խոկ աւնի.
Որբան աւնիս գու Փրփուր,
Սիրս այնբան խոց աւնի ըփւր:

Բայց լճակը չի կարսղ հասնել բանաստեղծին, որովհետ նրա հողին անհուն քաց է: Այսուհետեւ առ պատմում է իր վիշտը, մարդիկ նրան ձանաչ եցին, չսիրեցին, նրա քնարն արհամարտ հեցին. ոչ ոք չուզեց խմանալ թէ ինչու նա մխում է, ինչ կայ զրուած նրա սրատմէ: Իր այս դառնութեան մէջ նա ժայթքում է յանկարձ՝

— Հօն հըզեն կայ, ոչ մատեան:

«Թրբունին» արեւելան գեղեցկուհու նկարագրութիւնն է անհնման արուեստով, ծաղկալից պատկերներով, քնքուշ նոււղայնութեամբ. նկարագրութիւնը անցնում է արագ, անդանդադ, խուսափուկ, զախենալով կարծիս նիւթակուն հոլումից ու նկարելով բոլորովին իդէալական մի երևոյթ:

Երեկոյ է, բացավառ է հորիզոն:

Կառը մը կանցնի զազազի ովէս յամբընթաց.

Գեղաւնի մը ընկողմանում արովի հոն.

Վերջալուսի աղջիկ մ'է սա, ով Աստուած:

Եթէ հայի,

Կըսես — «Հիմա կը մարի»:

Նոյիլ կուզէ, բայց աւելի կը հոււաղի.

Սիրոր խունկի ովէս կը միսայ սիրավառ.

Նէ շուկրու բոյրերու է թագունի,

Խոնջ թիմեսնիկ մ' որ կը ինցրէ ծաղիկ բառ.

Եթէ շարժի,

Կըսես — «Հիմա կը թոշի»:

Լանջն է յուզեալ՝ Ազիկանի մը նման.

Կուզէ սիրել... նամքոյրի մ' հոս նուազիւ.

Մաշին, խոմքին, խոնջած բնկնիւ զերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիւ.
Եթէ չիկնի,
Կըսես—«Հիմա կը բռնկի»:

Արևելեան զեղունին չէր կտրող սրանից ա-
ւելի ճիշտ պատկերով նկարուել:

«Ներա հետ» Դուրեանիւ միակ ուրախ ոտա-
նաւորն է՝ ուր նկարագրում է սիրոյ վայեթը.
Բայց այդ սէրն էլ այնքան անմեղ, վարանուա,
ամաշկու ու լսին է, որ տնհնար է հաւատալ
թէ նա իրական բան լինի: Երիկոյին է այդ սի-
րոյ ժամը. նորա հոսում են միմիանց մօտ, խոսի
վրայ. չին խօսում միմիանց հետ. բանասեղձը
հիանում է կոյսի երեսին ողլողացող ճտուագայ-
թով, թոթովում է, դոզզողում, խօսքը նրա հա-
մար «հատնիլ» է:

Չերք տարու կուրծին, հան
Սիրոյ երկին մ' որոստք.
Թօշնեցայ զիրկն ևս իրրն
Համբայը մ' անհանձ դալիկանոր.
Թոթովիցի... զոզացի...
Ասի համբայը անհամար.
«Խոսինք» բառւ—ո՞հ, խօսի՛ն.
Հատնիլ է լոկ ինձ համար:

«Սի՛ սի՛»ը սիրականի մանն է պատմում.
Խոկապէս սուզավ ու սեավ հումակուած մի տաղ
է այն, սկզբում՝ կտրճ տողերով պատմում է իր
անցեալ երջանկութիւնը, ու նրան խոկոյն հա-
կաղուում ներկայ դառն զիմանկը.

Երբեմն հողիս ասողի մը բոց
Եւ թիթեանի մունէր թեհը.
Վերջալոյսի նման ամսոց
Երազնէր՝ հուը ճակաս գառէր.
Արդ սասոյցնէր զառն արտօսրի
Կը բարանան կուրծիս ներքեւ,

Եւ բարզը ամսոց սկամորմի
Կուղեն խեղդել սիրու ու արի:

Նա յիշում է իր սկամհայ սիրունուն, որ
մի անթե հրեշտակ էր. Նա այժմ մհոնէ է. զը-
նում է գերեզմանի մօմ՝ իր վերջին մնաս բա-
րեր տահրու: ԱՇ մահը, ոչ յուղարկաւորութիւնը
չեն նկարագրուած. Նա այդ բոլորը համարում է
մի երազ՝ որ մզում է նրան ոև վոսի տառչ:

Մե երազ մը օր մը դողպոջ
Մղեց զիս սե վոսի մ'ասջին,
Ուր քար կարած՝ սիրու ի թնդոջ
Քաղազի մ'աշըս յառած էին:

Աւազ, ներա վարդքն ու աստղերն
Լուս պիտի տար կալ այն ոև վոս.
Ճուրտ համբոյր մը տաի ճակալն.
Ներա վերջին ձանեն էր, ափսոն:

Թաղում են նրան, թի թի նետուած ոև
հողերը կոսպիտ կերպար թնդում են զաղազի
վրայ. ծածկուում է վոսը և վոսի հետ ծածկուում
է աշխարհը բանառունդի տառչ:

Եւ լոեցի յայնժամ թի թի
Մե սե հողեր կոչու թնդեցին
Տիուր քօղքին վրայ վայտի...
Դժոխը մ' անէծը այն ոև օրին:
Այն ցուրտ հոգերն յիմ զատարի սիրու
Լցուցին, վոսն զացելուն հետ
Եւ այս աշխարհն ալ անժազիտ
Գոցեցին իմ առջե յաւէտ...

«Հեծեծմունքը» իր մտերիմ ընկեր թօքախ-
տուոր վարդան Լութֆետնի մահուան վրայ է
զրուած: Նա յիշում է այն սրտազին ժամերը՝
որ անց էին կացնում միտսին Զամլընայի սորի
վերայ՝ Վասփորի հրաշալի համայնալատկերը զի-
տելով և իրար մէջ լուս մխալով:

Ո՞հ, կը յիշես, Զամլընայի
Ապրը նստած յուս մխայինք,
Ուր չուք տային մեզի նոճիք,
Մե հովանցը վշտահարի:

Չէինը խօսեր, խօսըն մեր հոգւոց
Անհաւութիւնը կը ողջձեր.
Մենք զերթ երկու աժդայն բացեր,
Երարու մէջ կայրէինք սասկ:

Մեր հոգիքը նոճիներու
Թուի թիթեաներ էին արտում,
Մե ձձէինը, սակ անհանում
Նոյէինը միւտ երկու հունու:

Այժմ հարցնում է նրան թէ դառւ երկըն-
րում այն երջանիւթիւնը՝ որը զուր էին փրնա-
ռում երկրի վրայ.

Ո՞հ, եթէ հոդ ձասի մը շուք
Կայ, և նորու քով մէկ վտակ,
Եթէ կայ հոդ ուր անտպակ,
Կայ տպատ ոգ, ազտառթիւն,

Ո՞հ, կը թօթիւմ ես այս ազտա
Զորձն հոգւոյն՝ կետնքս՝ մինչ իսկ այսօր,
Հոդ կը հազնիմ, հոդ սպաւոր...
Ո՞հ, ազանիրս, Վարդան, կան հոդ....

«Հծծիւնք» դարձեալ մէրն է երգում, բայց
ինչպիսի նորը բացատրութեամբ, ինչպիսի
քնքոյց զգացմանըներ է զնում: «Ինչպէս զե-
փիւուր» որ աերեներն է շարժում, զու թուար
որտիս ծալքերը թօթուելու. իմ ազիքներից զու
քաշեցիր բնարի կրտեէ թելը. իսկ այժմ վախ-
չում ես զու ինձնից սիզի նման, ատիխ ես ըռ
շուքը միայն իմ քնարին. զիսաւորի նման հե-
ռաներն ես ման զալիս: Նա մինչեւ անդամ նու-
խանձում է զեփիւսին ու ասազերին. հեռու է
վանում նրանց կոյսի նոյուածքը միայն ինքը
վայելիու համար:

Գայ սիւզն ազատ քեզ այցելու,
Նային քեղի աստղերն ազատ,
Սառեւրին մէջ մինակ ու զատ
Ես կը զազամ քեզ մատելու:

Ո՛հ, թող երթայ սիւզն իր ծագկոց,
Նային աստեղը թող յԱվելան,
Եւ թող մէկ մ ևս ու զարկանամ
Քու նայուածքից մէջ կրակուրոց:

Դուրիանի ամենասիրջին տապերն են Տըր-
առնջք, Զջջում, Իմ ցաւը և Իմ մահը: Գերեզ-
մանի եզրին կանգնած բանաստեղծի վերջին իշխն
է Իմ մահը, նիւթական մահից նա չի սարսա-
փում. Հողակոյտի մէջ թազուած՝ նու զեռ կեն-
դանի է համարում իրան, անյիշատակ միայն է
միայն համարում իսկական մահ.

Եսկ աննշան եմէ մեայ
Երկրի մէկ խորշն հոգակոյտն իմ,
Եւ յիշատակու աւ թառամի.
Ա՞չ, այս առեն ես կը մենիմ:

Պէտք է նկատենիք որ Դուրիանը, մասամբ
իր խառնուրդի պատճուռաւ, մասամբ էլ հան-
գամանքների թերմունքով մասնակցութիւն չէ
ունեցած ազդային զործունէութեան որեւէ ձիւդի
մէջ. նրա մի քանի մասնաւոր զասերը կամ մի
քանի գերտասանական փորձերը չենք կարող հա-
շուի առնել. այս ահասկեամից Դուրիանը շատ
ցածր է միում իր մամանակակից ուրիշ շատ
զրագէաններից, ինչպէս Ռուսինեանը, Պէշիկթաշ-
լիանը, Օտեանը, Ծերենցը են են, որոնք նշա-
նաւոր ազգային զործիչներ են միանգամայն:
Այս հանգամանքը տհանում էր նաև Դուրիանը.
Երիտասարդ հասակի մէջ՝ զամուած անկողնում,
մահուան սարսաւոր ճակատին, նա զգում էր որ

ողիսի անցնի աշխարհից առանց մի գործ կատա-
րելու և այն էլ այնպիսի ժամանակ՝ երբ ազգային
վերածնութեան և ուղեառութեան էր, երբ ամէն մարդ
աշխատում էր զոնէ մի փորբիկ չափով ժամանակ-
ցել հայրենիքի նութական կամ բարոյական վե-
րածնութեան գործին Ահա այս յիշողութիւնն է
որ Դաւրեանը պատկերացնում է «Իմ ցաւը» բա-
նաստեղծութեան մէջ։ Եթա համար ցաւ չէ ծա-
ղիկ հասակի մանը, սիրուց զրկուած, երազնէ-
ր/ց չյազեցած, կեանը չվայելած զերեզման մըտ-
նել ցաւ է այն որ նա կարող չեղաւ որիէ օգ-
նութիւն մատոցանել իր թշուառ Հայրենիքին։

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Ցամար գանել ազրերըն յամայր,
Ցամրիլ ծաղիկ հասակի մէջ,
Ո՞հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Զերմ համրոյրով մը գեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատըն դալիւնար՝
Հանգչեցնել հողէ բարձին,
Ո՞հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Թեռ չզրկած էակ փունչ մը
Ժպուէ, զեզէ, հուրէ չաղեալ,
Գրկել սա ցուրտ հողակոյտը,
Ո՞հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Քաղցր երազով մը յզի մրափ մը
Չանզորուած զլուխս մրրկանար,
Նոնիլ հողէ վերմակին տակ,
Ո՞հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Հողնիլ հիւզին մուր անունը,
Շձել նորա մրուր ողն յար,
Միշտ ցաւիլ միանզամյն,
Ո՞հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Հէք մարզկութեան մէկ սոսք դռն՝
Հայրենիք մը սէնիմ թշուառ,
Չզնած անոր՝ մեռնիւ աննշան,
Ո՞հ, այս է սոսկ ցաւ ինձ համար։

Դաւրեանի ամէնից ուժով, ամէնից կրո-

կոտ գրուածքը Տրտունջքն է. նա երգ չէ, նա
հրաբուխի յանկարծական ժայթքումն է, յուսա-
հատ կեանքի վերջին ուժգին բողոքը:

Վերջին բողէներին հասած հիւանդը նախա-
պէս հանդարտիկ մնաք բարով է ասում ու պատ-
րաստում երթալ երկնքի աստղերի շարքը մըտ-
նելու:

Է՛, մնաք բարով, Աստուած և արև,
Որ կը ոլովլաք իմ հոգւոյս վերն...
Ասող մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից.

Այստեղ սկսում է տակաւ սրտի բորբոքը.
Բնչ են ասաղերը, եթէ ոչ անրիծ ու թշուառ հո-
ղիների անէծքները՝ որոնք գնում են երկնքի
ճական այրելու, բայց Աստուծոյ զարդերն են
դառնում:

Աստղերն ի՞նչ են ոը եթէ ոչ ամբիծ
Եւ թշուառ ոգւոց անէծք ողբազին,
Ոըք թոքն այրել ճական երկնքին.
Ալ այն Աստուծոյն՝ շանթերու որմատ՝
Յաւելուն դէսքերն ու զարդերն հրատ...:

Այս յանդկնութիւնը կասեցնում է բանաս-
տեղծին. նա կշում է իր խօսքերի ծանրութիւ-
նը, և սպասում է որ Աստուածութիւնը ահա կը
շանթահարէ նրան, կը փշրէ հիւլէի այդ յանդու-
գըն խորհուրդը.

Այլ, ոհ, ի՞նչ կըսեմ... շանթահարէ զիս,
Աստուած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս,
Ոը ժպրնի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,
Երնել տատղերու սանդուխըն անալի...

Այս զղջումից սիրտ առած՝ նորից հանդար-
տիկ հարց է տալիս Աստուծուն, լոյսի, ծաղիկ-
ների, ծովի ու երգի Աստուծուն, այն Աստու-
ծուն՝ որ մահը տուաւ նրան այս աշխարհում,

հարց է տալիս թէ ի՞նչ է պահել նրան այն միւս
աշխարհի մէջ, անշուշտ շողի, բոյրի ու աղօթքի
կեանքը: Այս է սպասում նրանից:

Ողջոյն քեզ, Առաւած գողգոչ է ակին,
Շողին, փթիթին, արւոյն ու վանկին,
Դու ոք ճակատի վարդն ու բոցն աշերուս
Խլեցիր թթթում շրթանց, թոփին հոգւսյա,
Ազա տուիր աշացս, հեր տուիր որտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը պահած ևս եարի,
Կեանք մ անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի:

Իսկ եթէ ոչ, եթէ կեանքը մի երազ է՝ որ
այստեղ անհետ ովիտի կորչի... այս մտածմուն-
քի առաջ կատաղում է բանաստեղծը, շանթեր է
արձակում, փրփրում:

Զայրոյթի ու կատաղութեան այս թափից
յետոյ, արդէն յոդնած, թուլացած, ուժասպառ-
ուած, հառաջում է բանաստեղծը. Նրա ձայնը այլ
ևս չունի նախկին հզօր շեշտը, երբ որտաման
պէս գոչում էր, դղրդում. ընկճուած ու թոյլ է
ճիմա. ողորմուկ ձայնով երկնրից, աստղերից
կեանք է աղերսում, ապրել է ուզում: Ինչպէս
գեղեցիկ է վերջին հզօր բառերից այս թոյլ ձայ-
նին փոխանցումը:

Ո՞հ, կը զողզոջեմ, տժզոյն ևմ, տժզայն,
Փրփրի ներսս զժոխըի մհանգոյն...
Հառաջ մեմ նեծող նոներու մէջ սե,
Թափելու մօտ շոր աշնան մէկ տերեւ...
Ո՞հ, կայծ տուէր ինձ, կայծ տուէր, ապրիմ...
Ի՞նչ, երազէ վերջ զրկել ցուրտ շիրիմ...
Այս ճակատաղիրն ի՞նչ սե է, Աստուած,
Երգեօք զամբանի մըուրնի է գծուած...
Ո՞հ, տուէր հոգւսյս կրակի մի կաթիւ
Սիրել կուզեմ զեռ ՚ու ապրիւ ու ապրիւ.
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկեր,
Կայծ տուէր, կեանք՝ ձեր սիրահարին հեր:

Բայց բնութիւնը անողոք է, նրա ձայնը
չեն լսում, զիշերը նրա դագաղն է, աստղերը մե-
ռելի ջաներն են, լուսինը սպասում է նրա մա-
հին՝ նրա գերեզմանի վրայ լաց լինելու համար։

Դարսնն ոչ մէկ վարդ ճակախս գալկահար,
Ոչ երկնի չողերն մպիտ մինձ չեն տար.
Դիշերն միշտ զագաղս, տատղերը ջաներ,
Լուսինն յար կոււայ խուզարկէ վներ.
Կըլլան մարգիկ որ լացող մը չունին.
Անոր համար ևս զրաւ այդ լուսին,
Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան,
Նախ կեսնըը վերջը լացող միբ վրան։

Սոցանից էլ յոյսը կտրած՝ բանաստեղծը
դանօրէն յիշում է այն երջանիկ անցեալը, երբ
աստղերը, սոխակը, զեփիւոը, վտակը, թաւուտ-
ները, տերեներն ու ծաղիկները ուր էին ներ-
շնչում նրան, նրա սիրոյ կրտկները արծարծում։

Ի զնուր զբեցին տատղերն ինձի «ուշը»,
Եւ ի զնուր ուսոյց ըլլուն ինձ «սիրել»,
Ի զնուր սիւզեր «ուշը» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զնուր թաւուաներ լսեցին իմ շուրջ,
Զազանապահ տերեր չափն երբէր չունչ,
Որ շխռովին մերագրը վոհմ,
Քոյլ տուին որ միշտ զնէ երազեմ,
Եւ ի զնուր ծաղկունք՝ փթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանց խորան...

Այժմ նու արդէն հասկանում է որ այդ բո-
լորը ծաղը էին նրան... Եւ վերջին յուսահա-
տութեան մէջ բանաստեղծը արձակում է իր ա-
մէնից դառն խօսքերը։

Առասարակ Դուրիանի անունը մեր մէջ
զուզընիւոց է զնում Պէշիկթաշլեանի հետ. բայց
շատերը, զոնէ հին սերնդի մնացորդները, առաջ-
նակարգ տեղը տալիս են Պէշիկթաշլեանին, իսկ
Դուրիանին համարում են երկրորդ։ Այս դատաս-

տանը ուղիղ չէ: Հները առարկում են թէ Դուր-
եանը կրթուած չէր և հայերէն չգիտէր: Դուր-
եանը իրօք որ բարձր կրթութիւն չունէր, Պէ-
շիկթաշլեանի չափ կարդացած չէր. նրան ծանօթ
մատենազրութիւնը պարունակւում է Լամարտի-
նի, Հիւզոյի և ուրիշ մի քանի զուտ ոռմանտիկ
ֆրանսիական հեղինակների մէջ. բայց նոյն իսկ
այս անկրթութիւնը մեծացնում է Դուրեանի
արժանիքը, որովհետեւ նա այսպէսով նկրկայա-
նում է մեղ իրեն մի ինքնարոյս հանձար, որ ա-
ռանց ուրիշից օրինակ վերցնելու, առանց իր
միտքը ուրիշների վրայ կաղապարելու, կարողա-
ցել է արտադրել այսպիսի գեղեցիկ զրուածքներ:
Ասելով թէ հայերէն չգիտէր հները ակնարկում
են այն հանգամմանքը՝ որ Դուրեանը զրաբար չի
զրել: Դուրեանը զրաբար զիտէր և մի քանի ոտա-
նաւոր էլ ունի զրաբար լեզուով. իսկ եթէ միւս
ոտանաւորները նա զրում է բարձրանում, որովհետեւ
կարողացել է արհամարհել ժամանակի կեղծիքը,
զգացել է թէ զրաբար ոտանաւորները այլ ևս
կեանք չունին և թէ բնական լեզուով զրելու ա-
ռաջին զաղտնիքը աշխարհաբար զրելն է: Դուր-
եանը աշխարհաբար բանաստեղծութեան հայրն է.
Նրա աշխարհաբարը ոչ միայն Պէշիկթաշլեանի
ու Ալիշանի, այլ և նրա ժամանակակից ու յա-
ջորդ բոլոր բանաստեղծների լեզուից աւելի մա-
քուր է: Այս բանաստեղծների լեզուն՝ զրաբարի
ու աշխարհաբարի այնպիսի մի տղեղ խառնուրդ

է շատ անդամ, որ ոչ կարելի է գրաբար կռչել
և ոչ աշխարհաբար, գրաբար հոլովները, գրաբար
շարադասութիւնը, ի և զ նախդիրները ազատ
գործ են ածւում նոցա մէջ։ Դուրեանը չունի
այսպիսի բան. և եթէ կան հաղուագիւտ բացա-
ռութիւններ՝ գրանք էլ միմիայն յանդի ու չա-
փի համար ենու—Լեզուի կողմից Դուրեանը շատ
բարձր է Պէշիկթաշլեանից։

Այս առաւելութիւնը չի կարելի տալ սա-
կայն Դուրեանին՝ արուեստի կողմից։ Դուրեանը
զգացմունքի բանաստեղծ է. Պէշիկթաշլեանը ար-
ուեստի։ Դուրեանը չգիտէ խորհրդածել, երկար
ու բարակ դասաւորել իր մտքերը, գրածը կոկել
յղիել. նա մի աղքիւր է՝ որ մի անդամից դուրս
է ցայտում հողի խորքերից, կամ մի հրաբուխ՝
որ յանկարծակի ժայթքում է երկրի անդունդնե-
րից։ Պէշիկթաշլեանը մի վճիտ առուակ է, որ
հանդաբարտիկ ու դլզլուն հոսում է մաքուր աւազի
վերայով. նա գիտէ յարդարել իր գրութիւնները,
փնտուել բառերը, ընտրել ամէնից գեղեցիկը,
չափի, ձեի, շեշտի տակ դնել, կոկել, ոտանաւո-
րի արտաքին ամէն պայման լրացնել։ Դուրեանի
մէջ տեղ կը գտնենք սխալ շեշտեր, բառե-
րի մէջ հատուած (օր. Գերեզմաննոցին ցուրտ
ծառեր), ը յանդ ևն։ Սրանք այնպիսի պակա-
սութիւններ են՝ որ բանաստեղծը կարող էր շատ
հեշտութեամբ ուղղել եթէ արուեստի վրայ մի քիչ
աւելի ուշադրութիւն գարձնէր։

Այս ասելով պէտք չէ կարծել թէ Դուրեանը

արուեստի կողմից թերի, անձաշակ բանաստեղծ է. ընդհակառակը նրա արուեստը ունի այնպիսի կատարեալ կողմեր, որ մոռանալ են տալիս բոլոր մանր պակասութիւնները: Դուրսանը անփոխարինելի է պատկերների առատութեան, բազմազանութեան, մանաւանդ նորութեան կողմից. չկայ մի տող նրա ստանաւորների մէջ՝ ուր մի որ և է նոր ու դեղիքիկ պատկեր չներկայանայ: Այս կողմից անհամեմատ են «Սիրել» և «Դրժել», որոնց առաջինի ծաղկաւէտ պատկերների դէմ ցցւում են երկրորդի դաժան պատկերները. այսպէս առաջինում՝ «բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ, բուրայ մը իսօք, խուրձ մը վարս, եղիմ մը շունչ, եթիր մը արոփի, փունջ մը բոց», իսկ երկրորդում՝ «գոխիք մը անէծք, գիշեր մը սուզ, անդունդ մը հառաչ, ովկէան մը արտունջ, ամազրոտ մը սասաւ»: Այս պատկերներից խրաքանչիւրը մի ամբողջ տաղ արժէ. Բնչքան բացատրութիւն կայ սեղմուած օրինակի համար «բոյլ մը նայուածք»ի կամ «գիշեր մը սուզ»ի մէջ. այսպիսի պատկերաւորութիւն մեր բանաստեղծներից ոչ մէկը չունի:

Դուրսանը սբանչելիօրէն գիտէ յարմարեցնել ստանաւորի չափը իր զգացմունքների երանգի հետ. Նրա սիրած չափն է 4—4 կամ 4—3, որ քնարական բանաստեղծութեանց մէջ շատ անուշ տպաւորութիւն է թողնում. մի քանի ստանաւոր միայն ունին 4—4—3, իսկ Տրաունջը 5—5: Ոտանաւորները առհասարակ կարճ են, ու

բովհետև քնարերգութեան մէջ ամէնից ձանձրաւի բանը երկարութիւնն է, որ թմրեցնում ըթացնում է զգացմունքը։ Դուրեանի սասանաւորները սովորաբար ունին 5—8 տուն, մէկ երկուսը միայն 10—12 տուն։ Տրտունչքն է միայն մի քիչ աւելի երկար, ինչպէս որ պահանջում է նիւթի պջութիւնն ու ծանրութիւնը։

Դուրեանը թէի մեծ հատութիւր չէ թողած, բայց նա մեր ամենաարագ զրողներից մէկն է։ Նրա հանճարը տյնողէս ուժող ու կորովի էր, որ ժայթքում էր մէկ անգամից և կարիք չունէր երկար տատանումների։ Երբեք օրինակ յիշում են Լութֆեանի դամբանականը՝ որ սրճարանումն է զրել հապճեղով մի բուլէում, ձանֆէսճեանին ուղղուած հրաշալի մէկ նամակը՝ որ զրել է ուղը վրայ մի քանի բուլէում, Թրբունին՝ իր սրճանչելի ստանաւորը՝ որը նոյնողէս յանալաւրաստից զրել է զերեզմանատան մէջ՝ մի տապանաքարի վրայ յինուած, Թատրուն կամ Թշուաներ՝ հինգ արարուածով թատրերգութիւնը՝ որ պատրաստել է 15 օրում են։

Դուրեանը արժանացել է «Իւսկիտարի առխակ» արտղոսին։

4. ՅՈՎԱԷԼԻՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ
(ՄԵՐԵՆՑ)
(1822—1888)

Ե. Օահան.—Յովաէլիփ Շիշմանեան, Մասիս
1893, էջ 387—390:

Լէօ.—Բուռուանայոց զբականութիւնը. 1904,
էջ 261—278:

Վ. Փափաղեան.—Պատմ. Հայոց զբակ. 1911,
էջ 474—480:

Գրիշ.—Թորոս Լևոնի, Փոքը 1879, գետք. էջ
126—145:

Գեղամեանց—Մերենցի Երկունք. Թ. դարու.
Փոքը 1880, օգ. էջ 199—225:

***.—Մերենց. Աղրիւր 1895, էջ 42—44:

Յովաէլիփ Շիշմանեանը կաթոլիկ ծնողների
զաւակ էր. ծնուել է 1822 թ. սեպտ. 16-ին Պօլ-
սում 10 տարեկան հասակում նա զնում է վե-
նետիկի Մխիթարեանց վանքը՝ ուսում առնելու
համար. 1837-ին աւարտում է ուսումը. բայց իր
հուանդուն սրտի առաջ շատ նեղ զանելով վան-
քի շրջապատը, մերժում է ընդունել կրօնաւո-
րական սքեմը և վերադառնում է Պօլիս, ուր
սկսում է պարագակ ուսուցչութեամբ:

Մխիթարեանների հասցրած բոլոր աշա-
կերանների նման՝ Շիշմանեանն էլ վառուած էր
աղջի ու հայրենիքի սիրով: Բայց նա միւսնե-

ըի նման չի բաւականանում մի երեսկայական ու անծանօթ աշխարհ ունենալով իր մտքի մէջ, այլ ցանկանում է անձամբ տեսնել և ուստի մեառիւրել Հայաստանը, հայ ժողովրդի կացութիւնը, նորա կարիքներն ու ցաւերը: Այս նպատակով՝ 1843 թուին՝ մի տարի ամբողջ ճանապարհորդում է Հայաստանի զանազան կողմերը և Թիֆլիսի վերայով վերադառնում է Պոլիս: Նիւթականից զուրկ՝ նա նորից սկսում է այստեղ պարագել ուսուցչութեամբ, մի ժամանակ լինում է գեղագործի աշակերտ, և վերջապէս 1848-ին յաջողում է գնալ Պարիզ՝ բժշկութիւն սովորելու համար:

Պարիզում Շիշմանեանը մի կողմից յաճախում է համարսարան և միւս կողմից՝ նիւթական ապրուստ հայթայթելու համար՝ դասեր է տալիս Մուրատեան վարժարանում: Նա խառնուում է նորահաս հայ երիտասարդների այն աշխայժ խմբի մէջ, որ պիտի ծնէր յետոյ Տաճկահայ սահմանադրութիւնը: Առանձնապէս ընկերանում է Ռուսինեանին ու Նիկողոս Պալեանին: Միասին գնում են լսելու Հիւզոյի, Միշլի, Լամարտինի, Վ. Կուզէնի և ուրիշ աշխարհանոչակ գործիչների ճառակերը, որոնց ողջամիտ գաղափարներով համակւում են իրանք էլ:

1853 թ. Շիշմանեանը աւարտեց իր ուսումը և վերադարձաւ Պոլիս: Բայց փոխանակ շահագիտութեամբ ոսկի դիզելու հետամտելու, ամբողջ հոգով նետուց ազգային գործերի մէջ և

իր անշահախնդիր ընաւորութեամբ, մաքրութեամբ ու անկեղծութեամբ՝ քիչ ժամանակից ձեռք քերաւ ազնիւ զործիչի համբաւը: Ազգային շահը ամէնից բարձր էր նրա համար, նրան պէտք էր զոհել ամէն ինչ:

Մենք զիսահնք թէ ինչպիսի եռանդուն զործունէութիւն էր սկսուած այն ժամանակ Հայոց մէջ՝ վարչական ազատազրութիւն ձեռք քերիլու, կղերի և ազնուականութեան ձայնը իջեցնելով՝ ժողովրդի ձայնը բարձրացնելու, արհամարհուած աշխարհորարը զրական լիզուի աստիճանին հասցնելու և այլ նման նպատակների համար: Շիշմանեանը՝ իբրև կաթոլիկ, չէր կարող մասնակցել մեր պատրիարքարանի վարչական զործերին: Բայց Հայ-կաթոլիկ հասարակութիւնն էր նոյն ժումանակ ուներ ներքին վարչական ազատազրութեան վէճեր, մոնաւանդ Հասունեան և Հականասունեան վէճը, որ հայ ազգայնութեան լինել-չլինելու հարցն էր հայ-կաթոլիկ համայնքի մէջ: Շիշմանեանը՝ Պէտրիկթաշլիանի հետ, եսանզուն կերպով մասնակցեցաւ այս վէճերին, ինչ զեր որ խաղում էր Ռուսինեանը մեր պատրիարքարանի մէջ, նոյն զերը խաղում էր Շիշմանեանը հայ-կաթոլիկ պատրիարքարանում: Նա եղաւ պարագլուխ Հականասունեան կուսակցութեան և սորանով ընականաբար սաստիկ զրգուց Հասունեաններին իր զէմբէցիկթաշլիանի և Օտեանի հետ նա զործօն մասնակցութիւն ունեցաւ. Բարեկղործական ընկերու-

թիան մէջ, որ հիմնուել էր Համազգիաց ընկերութեան փոխարէն և նպատակ ունէր զիտական երկրագործութիւնը տարածելով Հայոց մէջ՝ պատրաստել զիտութեամբ լուսաւորուած ու տնտեսագէս զարգացած ժողովուրդ:

Դործը պէտք է սկսուէր Կիլիկիայից: Արոշուեցաւ զնիւ Կիլիկիայում մհծ քսնակութեամբ հողեր, հիմնել նրանց վրայ հայ գտղթականութիւն և երկրագործական դպրոց: Շիշմանեանը զնաց Կիլիկիա՝ ուսումնասիրելու համար այս գործը: Հասունեանները խոկոյն ամրաստանցին տէրութեան առաջ թէ Շիշմանեանը զնացել է յեղափոխութիւն քարողելու, ուստի նաստիպուեց Պօլիս վերագանակ (1863) և ընկերութիւնն էլ քայլայուեց:

Շիշմանեանը սակայն չընկճուեց. ընդհակառակը նա աւելի մհծ հռանդով կռւում էր իր հակառակորդների գէմ զրչով ու լեզուով: Նոյն ժամանակ բացուել էր Օբթագիւղի լսարանը. Շիշմանեանը նրա եռանդուն ձառախօսներից մէկն է դառնում. միւս կողմից շարունակ զրում է Ծերինց ծածկանունով՝ Մասիս, Արեւելիան Մամուլ և Ծիածան թերթերում, պաշտպանելով ազգային հարցերը, ժողովուրդին դաստիարակելով լուսաւորութեան և աղատութեան ձանապարհի մէջ: Վերջապէս կառավարութիւնը կասկածելով նրանից՝ կառավարական բժշկի պաշտօնով քշում է նրան Կիպրոս կղզին (1875):

Երեք տարի մնաց Շիշմանեանը Կիպրոսում,

իրեն ընկեր ունենալով միայն իր գրադէտ աղ-
ջկը՝ որի համար անհուն կաթոպին սէր ունէր:
Այդտեղ՝ այդ առանձնութեան մէջ՝ հայր և դուստր
սկսան պարագել գրականութեամբ: Այդտեղ գրեց
Ծերենցը իր Թորոս Լեռնիի պատմական վեպը
(տպ. Պօլիս 1878), որ մեծ ընդունելութիւն գտաւ
ժողովրդի կողմից և քաջալիրեց հեղինակին շա-
րունակելու իր սկսած դործը և հրատարակելու
երկու նոր վէպեր էլ՝ Երկունք թ., դարու և Թէ-
ոդորոս Ռշտունի:

1878-ին Շիշմանեանը գարձաւ Պօլիս, այս
ժամանակ է որ նա զգալով հայ աղզութեան մե-
ծամանութիւնից անջատ լինելու անպատճու-
թիւնները՝ վերադարձաւ հայ հկեղեցու ծոցը:
Կարճ ժամանակ մնալով Պօլսում՝ Ծերենցը ան-
ցաւ Թիֆլիս, ուր Ներսիսեան դպրոցում Հայոց
պատմութեան ուսուցիչ կարգուեցաւ: Ռուսահա-
յերը սիրեցին այս ազնիւ մարդուն, որ մի տե-
սակ կազ դարձաւ հայութեան երկու անջատ
մարմինների մէջտեղի Թիֆլիսում Ծերենցը ամուս-
նացնելով իր աղջկան, սկսաւ վարել թափառա-
կան կեանք: Ռուս-Տաճկական պատերազմից յի-
տոյ՝ 1879-ին, երբ Հայաստանի մէջ ճարակում
էր ահսելի սովը, Ծերենցը գնաց Տաճկահաս-
տան և Խրիմեանի հետ օգնում էր կարօտեալ-
ներին: Յետոյ իւրաքանչիւր տարի ճանապար-
հորդում էր Պօլիս, Թիֆլիս, Պարիզ: 1884-ին
վախճանուեց Ծերենցի սիրելի դուստրը Թիֆլի-
սում: այդ կորուստը այնպիսի ահազին աղդեցու-

Թիւն ունեցաւ ծերունի հօր վերայ, որ նա շուտ կաթուածահար եղաւ և շատ չանցած վախճանուեց Թիֆլիսում (1888 փետր. 17):

Ծերենցը նշանաւոր է մեր գրականութեան պատմութեան մէջ իր վէպերով. գրական միւս սեռերին պատկանող նրա զործերը, հրապարակախօսութիւններն ու ձառերը այժմ արդէն մոռացուած են: Սրանց մէջ պէտք է յիշել Հասարումն հրատարակութեանց (Պոլիս 1870), Յնորք Եւ երեսակայութիւն Տ. Շիշմաննեանի (Պոլիս 1873) և Եւրոպական քաղաքականութեան ներկայ ժամանակներուս հայ ազգին վրայ ըրած ազդեցութիւնը (Պոլիս 1873): Վերջնը մի բանխօսութիւն է՝ որ հեղինակը արել է 1873-ին Օրթագիւղի լսարանում, և նպատակ ունի ներկայացնելու Եւրոպական քաղաքական հայերի բաժանում է կաթոլիկ և բողոքական հայերի բաժանումը մեր հկեղեցուց: Այս բաժանումը նազանում է օգտակար, որովհետեւ «հայ կրօնաւորք որ գիրքին կողը միայն կը ցուցնէին, սկսան մէջն ալ կարդալ»: Այսպէսով՝ կրօնական վէճերի պատճառով՝ ազատ խօսքը սկսաւ, ուսումնասիրութեան, զրական քննութիւնների եռանդը արծարծուեցաւ, զպրոցներ բացուեցան և ուսումը տարածուել սկսաւ:

Ծերենցը, ինչպէս ասացինք, ունի երեք պատճական վէպ. Թորոս Լետնի, Երկումը Թ. դարու և Թէոդորոս Ռշտունի:

Թորոս Լեննի (Պօլիս 1878. երկրորդ տպա-
ղբութիւնը արգելուեց Պօլսում) Ներկայացնում է
Թորոս Բ.-ի ապատամբութիւնը Յունաց դէմ և
Ռուբինեանց իշխանութեան վերականգնումը՝ որ
Լեռն Ա.-ի գերութեամբ կործանուել էր Յոյները
Լեռնին՝ իր երկու որդիների՝ Ռուբէնի և Թորո-
սի հետ Պօլիս են տանում ու քանտարկում Նոյն
ժամանակ Պօլսում ազգիցիկ դիրք ունէր Եւփիմէ
իշխանուհին՝ որ Փոքր Հայոց յոյն կուսակալի
աղջիկն էր. Եւփիմէի մայրը՝ Արծրունի ցեղից
մի իշխանուհի, այնպէս էր կրթել իր աղջկան,
որ Կոյ իրան զգում էր անորատ հայ, առում էր
յոյներին և յոյն ազնուականութեան մէջ տիրող
ապականեալ կհանքից բոլորովին հևոռ էր Հայ
իշխանները ազատում են բանտից. Եւփիմէն
սիրում է Ռուբէնին. յոյները կասկածելով Ռու-
բէնի վրայ, սպանում են. Լեռնը չի դիմանում
այս ցաւին ու մեռնում է: Խոհեմ ու քաջ Թո-
րոսը՝ իր ազատութիւնը ձեռք բերելու համար,
ապուշ է ձևանում և այսպէսով յաջողում է ցըր-
ուել իր վրայ եղած կասկածները: Եւփիմէն՝ որ
իր սիրելու մահուան վրայ, յետին յուսահատու-
թեան էր մատնուած, տեսնում է Ռուբէնին չա-
փաղանց նման Թորոսին և իր սիրելուն նրա մէջ
վերակենդանացած համարելով՝ սիրում է նրան:
Եւփիմէն գաղանի միջոցներով յաջողից Թորոսին
փոխադրել մի պալատ, որ գաղտնի անցրով հա-
ղորդակցում էր իր պալատի հետ: Այսահեղ Թո-
րոս գտաւ ամէն խնամք ու հոգատարութիւն և

մինչդեռ զարմացած՝ ճղնում էր գանել իր ան-
ձանօթ բարերարին, յանկարծ բացւում է զաղա-
նի անցըը և երկան է զալիս Եւփիմէն։ Թորոսը
ամէն գաղտնիք խմանում է նրանից և տեսնե-
լով նրա մէջ հայութեան նուրիուած մի շքնաղ
իշխանունու տիտարը՝ սիրում է նրան ու մի հայ
քահանայի ձեռքով պսակւում։

Նրանք որոշում են փախչել Կիլիկիա և Ռու-
բինեանց իշխանութիւնը վերականգնել։

Եւփիմէի հայրը մհուել էր, մահուան ժամա-
նակ նա իր միակ աղջկայ խնամքը յանձնել էր
իր ընտիր բարեկամ՝ Դիոնիս յոյն բժշկին։ Թո-
րոսն էլ ունէր մի հին ծառայ՝ Բարգէն անունով,
որ անձնութիրութեան ու հաւատարմութեան ա-
մենապեղիցիկ տիտարն է, զուտ ժողովրդական
մի դէմք, որ զիշեր ցերեկ անքուն հոկում է իր
երիտասարդ տիրոջ պահպանութեան համար։

Զորոը միասին նաւով փախչում են Պօլսից
և խուսափելու համար յոյների հետապնդումնե-
րից՝ անցնում են Կիպրոս, ուր դանում են իրենց
հին բարեկամ Կոստանդինին և ծովահէն Սար-
գիսին։ Սարգիսը զնում է Կիլիկիա, պատրաս-
տում է անձնուէր հայ մարտիկների մի խումբ,
անձանօթ տեղեր թագցնում է պաշար, և Կիու-
րոս վերագանալով՝ առաջնորդում է փախստա-
կաններին զէպի Կիլիկիոյ եղերը։ Մութ զիշե-
րին, ամէնքից զաղտնի, լրտես յոյն նաւերից ու
ծովահէններից խուսափելով՝ մեր փոքրիկ խում-
բը ցամաք է զուրս զալիս։ Սարգսի մարտիկնե-
րը ցամաք է զուրս զալիս։

ըը դիմաւորում են նրանց: Եւ այնտեղ, ծովափի վրայ, իրենց վաղուց կորցրած սիրելի իշխանի առջև, ձեռքերը երկինք պարզած երդում են մեռնել յանուն հայրենիքի ու Թորոսի:

Փոքրիկ խումբը ճանապարհ է ընկնում և ափափայ ու անծանօթ տեղերից անցնելով՝ մօտենում է Վահկային: Թորոսը գրաւում է Նախ Ամուսայ բերդը և այնտեղ բարձրացնում առաջին անգամ հայկական զրօշակը, իրեն իշխան հրատարակում: Ամէն կողմից ժողովուրդը զիմում է զունդագունդ Թորոսի մօտ: Նա արագութեամբ տիրում է Վահկային, Մամեստիային, Զարդում Տարսոնի յունական բանակը և վերջապէս արշաւում Անարզաբայի վրայ: Այս քաղաքը յունահպատակ Սմբատ իշխանի ձեռքն էր Արևելեան բռնակալութեան ամենագաղանային տիպարն էր Սմբատը, իր լպիրը կնոջ և նորա արքանեակ հոգիսկոպոսի հետ տանջում, քամում էր հայ ժողովրդի արիւնը. պալատում տիրում էր ապականութիւնը տւեր, զրկանք, հարստահարութիւն, լրտեսութիւն, կաշառք ու անարդար գատառահաններ նահատակիլ էին թշուառ ժողովրդին: Այդ ընդհանուր ապականութեան մէջ մի անարատ գոհար միայն կար. դա Սմբատի աղջիկը՝ Մարզարիան էր: Մաքուր, սպարկեցա, ողորմած, բարեսէր այդ աղջիկը, զեղերի տուփը ձեռքին, ման էր զալիս զիւղից զիւղ, հիւանդներին դարմանում, նոցա վէրքերին սպեղանի զնում, աղքատներին նիւթական օգնութիւն հասցնում:

Թորոսը պաշարեց Անարզաբան, դուռդ
Սմբատի համար ծանր էր հպատակուն նորելուկ
իշխանին. Նա վճռեց մինչև վերջին շունչը գիմաղ-
րել, բայց զօրքը նրան չէր լսում. ժողովուրդը
բարձրացրել էր ընդհանուր ապատամբութիւն և
պահանջում էր որ բերդի դաները բացուին. պա-
լատը տակնուվրայ էր եղել, յուսահատ Սմբատը
դաշոյնը իր սիրան է խրում, ժողովուրդը յար-
ձակում է պալատի վրայ և ուղում է թագուհուն
ու եպիսկոպոսին յօշուել Այսուեղ երեան է գա-
լիս առաքինութեան յաղթանակը: Մարգարիտը
գաղանացած խուժանի առաջն է ելնում, նրա
տկար ձայնի առաջ լոռում են ահարկու գոչիւն-
ները. Նրան են յանձնում իշխանական գահը և
Մարգարիտը՝ Թորոսի հետ բանակցելով՝ քաղա-
քը յանձնում է: Այսպէսով Թորոսը Կիլիկիոյ
տէր է դառնում: Նա երկիրը կարգաւորում է
յունական քաղաքակրթութեամբ, հայրաբար կա-
ռավարում, անարգարութիւնը լսեցնում: Այնու-
հետեւ պատմում է Անգրոնիկոսի կոիւը, Կիողո-
սի արշաւանքը, Եւփիմէի մահը, Մանուէլ կայ-
սեր արշաւանքը Թորոսի դէմ և նրա հետ հաշ-
առւելը, Սահփանէի մահը յունաց ձեռքով, Մէհ-
մի ու Թորոսի վրէժինգրութիւնը, Լամբրոնի
կոիւները, Մէհմի դաւադրութիւնը, Անգրոնիկո-
սի վերջին արշաւանքը և Թորոսի մահը:

Երկունք Թ դարու (Տիխիս 1879) արարա-
կան տիրապետութեան վերջին ժամանակներից
առնուած մի վէպ է, որի գլխաւոր հերոսն է Մա-

սունցի Յովսանը: Յովսանը մի հասարակ գիւղացի էր, բնական ձիրքերով, խելքով ու քաջութեամբ օժտուած մի մարդ: Փոքր տարիքից նա ծառայութեան էր մտել Տարօնի Բազրատունաց պալատում: Իշխանի աղջիկը Վասկանուշ և Յովսան սիրում են իրար. ազնուապետական ըմբռնումների համար ահոելի այդ յանցոնքը լսում է իշխանը, Յովսանին բանտարկում, իսկ Վասկանուշին կուսանաց վանքն է ուղարկում: Յովսանը փախչում է բանտից ու Սասնոյ լեռները քաշւում, ուր սամկավարական սկզբունքներով կառավարում էր ժողովուրդը: Ամբողջ Սասունը սուրբի պէս պաշտում էր այդ աղնիւ ու քաջգիւղապետին:

851 թուի ձմեռն էր. Արաբները ամբողջ Հայաստանը աւերել, Բազրատ իշխանին մորթել էին, ամէն մարդ սոսկումով համակուած չգիտէր ինչ անել: Յանկարծ Յովսանը Սասնցոց գլուխին է անցնում, արշաւում Մուշ, արաբներին ջարդում և սատիկանին սպանում է:

Յովսանին ընկերանում է մի նոր երիտասարդ՝ Գուրգէն Արծրունի, որ Յովսանի նման սիրոյ զոհ է: Նա սիրում է Ռշտունեաց օրիորդ Հեղինէին, աղզականները զրկեցին նրան հայրենի ժառանգութիւնից. Գուրգէնը անցաւ Յունաց ծառայութեան, իր քաջութեամբ ստացաւ Թորթումը և այժմ՝ երկար տարիների բացակայութիւնից յետոյ՝ զնում է Ռշտունեաց սստանը՝ իր սրտի հատորին գտնելու: Հասաւ ամրոցը: Կայ-

ծակ իջաւ Գուրգէնի զլխին, երբ լսեց թէ Հեղինէն՝ այնքան տարի սպասելուց յետոյ՝ խարռուելով ամուսնացել է Մուշեղի հետ: Ի՞նչ անել այժմ։ Պէտք է տեսնել սիրադրուժ օրիորդին։ Գուրգէնը գնում է Կանգուար, ուր իր քաջութեամբ ազատելով Մուշեղին բրդերի յանկարծական յարձակումից, առիթ է ունենում հիւրասիրուելու ամբոցում։ Վաղեմի սիրահարները գտնում են իրար, բացւում է զազտնիքը, թէ ինչպէս չարամիտները յերիւրել էին Գուրգէնի անունից մի նամակ, որով իրը թէ նա մերժում էր Հեղինէի սէրը և ամուսնում ուրիշի հետ։ Հեղինէի սէրը կենդանի է զեռ, բայց իրքեւ առաքինի կին, նա միայն իր ամուսնուն է պատկանում։ Նա հեռացնում է Գուրգէնին՝ պահանջելով նրանից իր ամբողջ սէրը նուրիրել հայրենիքին։ այսուհետեւ նրա բարի անունը միայն պիտի լինի թշուառ Հեղինէի սփոփանքը։

Յովսանը կիտէր որ արտքները չեն կարող իրենց վրէժը մոռանալ, ուստի գնում է Գուրին, ներկայանում կաթուղիկոսի և նախարարների ժողովին, առաջարկում է պատրաստուել, միանալ Սամնցոց հետ և ընդհանուր ուժերով գէմ զնել թշնամուն։ Նախարարները կատաղում են՝ իրք տեսնում են որ մի հասարակ զիւղացի համարձակում է իրենց խորհուրդներ տալ։ Վոնտում են նրան ու բանտարկում։ Աշոտ իշխանը թարքուն արձակում է նրան։

Յովսանը տեսնելով որ իր յոյսերը ի զերի

ելան, քաշւում է Սասուն, ամբացնում, ժողովրդին ամէն կերպով զինում, պատրաստում Շարժում է Բուղայի ահարկու բանակը ուղղակի Սասուն. բայց Յովսանը իր կատաղի յարձակումներով շարունակ վանում է նրան. Բուղան թողնելով Սասունը, արշաւում է անտէր Հայաստանի զանազան կողմերը, երկիրը արխւով լուսնում: Յովսան դուրս է գալիս Սասունից, յարձակում մօտակայ դաւառները, արարներին կոտորում, գերիներին փրկում, թշուառներին պահապան հրեշտակ հանդիսանում: Նա ձերբակալում է նաև երեք մատնիչ նախարարներ, մի ընդարձակ դատապատճենի մէջ մահուան վճիռ արձակել տալիս և ինքը անձամբ կախազան է բարձրացնում նըանց՝ Դուինի մէջ՝ Բուղայի քթի տակ:

Ճորսիսի ափերի վրայ մի կուսանաց վանք կար, որի մայրապետն էր Վասկանուշ: Դա այն թշուառ ազնուական օրիորդն էր, որ համարձակուել էր սիրել ժողովրդի զաւակ Յովսանին և իրը պատիժ դատապարտուել էր վանք մտնելու: Նա ոչ միայն վանամայր էր, այլ և շրջակայ գաւառի պահապան հրեշտակը, որին բոլորը՝ միծու փոքր, սիրում զուրգուրում էին: Արարները յարձակուեցան նաև այսակեղ. Յովսանի խումբը հաստու ու վանեց թշնամին. Վասկանուշը՝ իրեն շնորհակալութիւն՝ խնջոյք տուաւ հայ բանակին՝ վանքում: Այստեղ՝ Վասկանուշը ու Յովսան գտան իրար: 27 տարի էր անցել և այդքան ժամանակ

նոքա անմոռաց պահել էին սրտում իրենց մաքուր, սուրբ, անարատ սէրը: Նոքա մի մի մշտավառ բուրգառ էին դարձրել իրենց սրտերը և մին Աստուծոյ, միւսը հայրենիքին նուիրուած՝ մխում էին անտրտունջ: Յովնանը հրաժարուել էր զինուց ու զուարճութիւններից և ամէն տարի զայիս էր այդ վանքի առաջ, ծնկաչոք դիտելու պարսպի վրայ շարժուող սիրելի ստուերն ու հեռանալու:

Բուղայի արշաւանքի առաջն առնելու համար՝ առանձին քաղաքականութեան է հետեւմ Սմբատ Բագրատունին. Նա կարծում է որ նրան սիրաշանելով, նրա բոլոր պահանջները կատարելով, կարող է նրա զայրոյթը մհղմել, և այսպէսով դառնում է ակամայ մատնիչ: Յովնանը գնում է Սմբատի մօտ, յորդորելու որ ետ կենայ այս դաւաճանութիւնից և ժողովրդի գլուխն անցնելով՝ Բուղայի դէմ կանգնի: Բայց իզուր: Երբ Յովնանը յետ էր դառնում, յանկարծ պաշարուեց արարքների խմբից, բռնուեց ու Բուղայի հրամանով գլխատուեց: Վասկանուշը թաղեց նահատակի մարմինը մի մատուռի մէջ, որի մօտ քիչ ժամանակից զնաց հանգչելու ինքն էլ: Ամէնքը յարգում էին այս երկու շիրիմները, մէկի քաջութիւնը, միւսի ողորմածութիւնը գովելով. «բայց ով զիտէր և ով էր Համբեր այն անթիւ արցունքներն ու հառաջանքները այդ երկու անձանց, որ տարիներով բաժնուած՝ վերջապէս զերհզմանին բով իրարու մօտ կը հանգչէին...»:

Յովնանի խմբի մէջ Գուրգէնի հետ կար

նաև մի ուրիշ դժբախտ իշխան, դա Խոսրով էր, որի փոքրիկ աղջիկը՝ Արիգան՝ գերի էր ընկել արաբների ձեռքը. ծերունի հայրը սարէ սար ընկած՝ նրան էր փնտում: Գուրգէն ու Խոսրով մի զիշեր գտնում են նրան մի արար իշխանունու բերդում, մի խումբ ուրիշ ստրուկ աղջիկների հետ: Իերզը աւերում ու բոլորին էլ ազտում են: Գուրգէնը գեռ շարունակում է իր քաջագործութիւնները, բայց վերջապէս նոյն արար իշխանունուց բռնուելով բանտարկում է: Խոսրով ու Հեղինէ միացան ու յանկարծական յարձակումով՝ ազատեցին նրան: Թիչ ժամանակից մեռաւ Մուշեզը և երկու սիրահարների՝ Գուրգէնի ու Հեղինէի սէրը օրհնուեց:

Թէողորոս Ռշտումի (Տփիիս 1881) արարական արշաւանքների առաջին շրջանից առնուած վէպի է: Սկզբում նկարագրում է Վարդանաբերզը՝ որ Մամիկոննեանների պալատն է. այսուհեղ են վէպի բոլոր գլխաւոր հերոսները՝ Թէողորոս Մշտունեաց նախարարը, Մուրէն իշխան, Զաւէն անձնապահապետ և Գրիգոր Մամիկոննեանն Յանկարծ լուր է հասնում թէ արաբները յարձակուել են Հայաստան: Թէողորոսը գնում է Վաղարշակերտի յոյն բանակը, ինզրելու Պրոկոպիոս զօրավարից՝ որ շաբժուի արաբների գէմ: Ամբարտաւան յոյնը բարկանում է Թէողորոսի վըրայ և զուրս վոնտում: Թէողորոսը իր ստկաւուրը ուժերով գնում է արաբների գէմ, որ բազմաթիւ խմբերի բաժանուած՝ աւերում էին Հա-

յաստանի այլեայլ կողմերը, Արաբները յարձակուեցան նաև անպատճաստ Պրոկոպիոսի վրայ ու շարաչար յազմեցին: Մի ուրիշ խումբ գրաւեց Վարդանարերդը ու բնակիչներին կոտորեց. Մամիկոնեան Բիւրեղ տիկինը արաբների ձեռքը չընկնելու համար՝ իր աղջկան՝ Նաղենիկին փաթաթուած՝ լիճը նետուեց: Սուրէն ու Գրիգոր մեծ դիմադրութիւն ցոյց տուին արաբներին, բայց վերջապէս զերի բռնուելով՝ Դամասկոսում մի շէյխի բանտառմ բանտարկուեցան: Զաւէնին յաջողուեց ազատել Բիւրեղի փոքր աղջկան՝ Արփենիին, բայց սա էլ ընկաւ Թովմա յոյն զօրավարի ճանկը, որ թաքնաբար փախցրեց նրան Պոլիս, այնտեղ իր պալատում մեծացնելու և իրեկ հոգանունի կայսեր որդուն ընծայելու համար: Զորս տարի ամէն տեղ իզուր որօնելուց յետոյ, Զաւէնը վերջապէս գտաւ Արփենիին Պոլսում և մի օր՝ օգուտ քաղելով ժողովրդական յարձակումից, փախցրեց նրան Հայաստան:

Սուրէն և Գրիգոր երկար չարչարուեցան շէյխի բանտառմ, ուր իրենց ընկեր ունէին նաև Գաղրիկ անունով մի զիւղացի: Վերջապէս որոշեցին առ երեսս ուրանալ իրենց հաւատքը և ազատուեցին: Նրանք թաքնաբար մտան շէյխի պալատը, ձի, զէնը ու ոսկի գողացան, պալատը կրակի տուին ու փախան դէպի Հայաստան: Ասորոց երկրի մօտ պատճեցին մի արար աւազակախմբի, որոնց թէև յաջողութեամբ դիմադրեցին, բայց իրենք էլ ստիպուեցան իրարից

բաժանուելու Գրիգոր ու Գաղրիկ զնացին Մուշ
ուր զտան Զաւէնին և յետոյ անցան Ոստան,
այստեղ զտաւ Գրիգորը իր սիրելի Թէնիին՝ Թէ-
ոդորոսի աղջկանը, որին մանկութիւնից էր սի-
րում Յոյները Թէոդորոսին գերի տարին Պօլիս,
ուր նա մասնակցելով պալատական յեղափախու-
թեան՝ իր պարզ ստացաւ. իր աղատութիւնը
Տեսնելով թէ յունաց ու պարսից տէրութիւնը
այնքան թուլացել է որ մուրացիկ թափառական
արարն անգամ կարողացաւ նրանց նուաճել ու
արագօրէն մեծանալ, մտածեց ինքն էլ միացնել
հայոց, վրաց, աղուանից ու սիւնեաց նաւարար-
ներին, քշել նորեկ արարներին և կազմել մի ան-
կախ տէրութիւն. իրեն միացան Վարազտիրոց
իշխանը և Առերէն, որ իր ընկերներից բաժան-
ուելով ընկել էր Մարտայիթ ասորիների երկիրը
և այնտեղ այնպիսի քաջութիւններ էր գործել
որ Մարտայիթները ուզում էին նրան բռնի ա-
մուսնացնել իրենց Քահինա իշխանունու հետ և
ընտրել իրենց թագաւոր. Առերէնը մի սուտ ա-
մուսնութիւն կեղծելով Քահինու հետ, կազմում է
Կիլիկիոյ հայերից մի զունդ և մէկ օր էլ իր
խմբով փախչելով Ասորիքից, ծառայում է Կի-
սարիոյ աղստամբ հայ իշխանի մօտ, այնտեղից
էլ մտնում Հայաստան. Թէնի և Գրիգոր ամուս-
նանում են. իսկ Թէոդորոսի մտադրութիւնը յա-
ջողութիւն չի ունենում և վերջապէս մեռնում է
այդ մեծ մարդը՝ տուանց իր սուրբ նպատակին
հասնելու:

Ծերենցը իւր այս վէպերով հիմք է դնում
մեր մէջ պատմական վիպասանութեանու ճշմա-
րիս է որ նրանից ՅՕ տարի առաջ ունեցել ենք
Քաղիազհանի Վարդղմի վէպը և վէպ Վար-
սենիսկանը, բայց այս երկուսն էլ, ինչպէս տե-
սանք, տւելի շուտ աժմաններ են կամ մշտկուած
հէքիաթ, քան պատմական վէպ։ Չենք յիշում ու-
րիշ երկրորդական գրողների փորձերը, որոնք
գրական արժանիքից զուրկ են։

Ծերենցի վէպերը միտումաւոր գրուածք-
ներ են Հրատարակելով հէնց այն ժամանակ՝
երբ Հայկական հարցը Եւրոպական զիւսնազի-
տութեան առաջ էր բարձրոցել, հեղինակը նորա-
տակ ուներ զարթեցնել ազգային զգացմունքնե-
րը և թիրես ուղեցոյց հանդիսանալ։ Այս պատ-
ճառով էլ նա ընտրել է պատմութեան այն շըր-
ջանները, երբ ազգը իր անկախութիւնը կոր-
ցրած և քաղաքային երկպառակութեան մէջ ըն-
կած, հնարք էր որոնում իր անկախութիւնը նո-
րից ձեռք բերելու։

Իր վէպերի մէջ Ծերենցը երեան է հանում
իր հայեցակէտները մեր հին պատմութեան իմաս-
տասիրութեան նկատմամբ և հին օրինակով՝ նաև
մեր նոր վարչական կազմակերպութեան ծրա-
գիրն է տալիս։ Ամէնից առաջ երեսում է նրա
ժողովրդասիրութիւնը։ Հին Հայոց քաղաքական
կեանքի տկարութեան զլիստոր պատճառը աղ-
նուազհատական կազմակերպութիւնն էր, ուր ու-
միկը բնաւ մասնակցութիւն չուներ։ ամէն բան

կենտրոնացած էր նախարարների ձեռքը և ոչ թէ
արժանիքն էր զնա՞նաւում, այլ ծագումը նա-
խարարների ներքին կույները թոյլ չէին տալիս
մի ընդհանուր միութիւն կազմելու, և ժողովուր-
դը՝ որ սեպհական ձայնից զուրկ ստրուկ էր մի-
այն, խաղալիք էր դարձել նոցա ձեռքին։ Մե-
րենցը սխալ է զանում այն տարածուած կար-
ծիքը թէ հայերը անմիաբան են և մեր բոլոր
դժբախութիւնը ծագում է միայն անմիաբա-
նութիւնից։ Մենք 25-ամեայ Պելոպոնէսիան պա-
տերազմներ չունեցանք, ասում է Մերենցը։ Մենք
անմիաբան չէինք, մենք անիշխան էինք, հարիւ-
րաւոր իշխողներ ունենալլը նշանակում է ոչ մի
իշխող չունենալ «Եթէ մեր այդ յիմար նախա-
րարական և ազնուապետական կառավարութեան
ձեզ չունենայինք, որ մեր ազգը հարիւր կտոր
ընկով, թիւր բանաւորաց գերի է ըրեր», եթէ
Յովեանի պէս կարենայինք ըսել թէ «այս լեռնե-
րուն մէջ ոչ իշխան կայ, ոչ նախարար, ոչ
ազնուական, ոչ ազատ, բայց և ոչ մի ծառայ և
մի գերի», եթէ ազգը լինէր «մի հօտ և մի հո-
վիւշ, այն ժամանակ նա կունենար իր ներքին
զօրութիւնը, որով արտաքին թշնամիների առաջ
պատկառելի կը դառնար»։

Բայց այս խօսքերով պէտք չէ կարծել որ
Մերենցը զուար սամկապետական է, ընդհակառ-
կը նա կողմանակից է իշխանութեան կենտրոնաց-
ման և ուժեղացման, միայն պահանջելով ժողո-
վրդի կատարեալ հաւասարութիւնը։ Ինչիցն է

որ նոյն մեր հայ կեանքի մէջ, մինչդեռ մէկ կողմից տեսնում ենք բազաքական իշխանութեան թուլաթիւնն ու անկումը, միւս կողմից էլ տեսնում ենք եկեղեցական իշխանութեան յարատե շարունակութիւնը։ Պատճառը տռաջինի բազմաթիւ իշխանապետական բաժանումների և ժողովրդական ձայնի արհամարհութեան մէջն է, ինչ որ գոյութիւն չուներ եկեղեցական իշխանութեան մէջ։ Եկեղեցական իշխանութիւնը՝ ձևացնելով մի և միահեծան կառավարութիւն, շարունակ իր մէջ ընդունելով ժողովրդի արժանաւոր զաւակներին և բարձրացնելով նրանց մինչև հայրապետական աստիճանը, հպատակելով միայն մի օրէնքի, ուներ իր մէջ զօրաւոր կազմակերպութիւն և յարատենութեան պայմանները։
Ահա այս ժողովրդասիրական ողու պատճառով է որ Ծերենցի վեպերը լի հն զաւո ժողովրդական արագարներով, այսպէս Սարգիսն ու Բարդէնը՝ Թորոս Լևոնիի մէջ, Յովլանը՝ Երկուսը թիւ, Զատէնը՝ Թէոդորոս Խշոռունիի մէջ։ Առքա երկրորդական անձեր չեն, այլ նոյն իսկ վեպերի հերոսները, որոնց զօրծունէութիւնը տեսնում է սկզբից մինչեւ վերջ և առանց որոնց այս վեպերը կարելի էլ չէ երևակայել։

Երկրորդ զիխաւոր զիծը որ տեսնում ենք Ծերենցի վեպերի մէջ՝ կնոջ դերն է։ Կինը մեր հին պատմութեան մէջ շատ քիչ է երկում։ Արա պատճառը անշուշտ ոչ թէ միայն պատմագրերի արհամարհու լուսթիւնն է, այլ նոյն իսկ կնոջ

իրական անմասնակցութիւնը։ Ծերենցը իր վեպերի մէջ շատ մեծ դեր է տալիս կանանց։ Թուրոս Լևոնիի մէջ Եւփիմէն, Մարգարիտը, Երկունքի մէջ Վասկանուշը, Հեղինէն, Թէոդորոս Ռըշտունիի մէջ Սեթան ու Քահինան՝ ամէն մէկը իր տեսակի մէջ ընտիր դրական տիպեր են, բոլորն էլ առնասարակ վարչական ընդունակութիւններով օժտուած, այսպէս որ նոյն խոկ Թէոդորոսը առում է. և Մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պէտք է յանձնենք Երկրին կառավարութիւնը, և միայն պատերազմով զբաղինք է (էջ 14):

Այստեղ հարց է ծագում թէ Ծերենցի վեպերը ինչ չափով հաւատարիմ են պատմութեան։ Պէտք է խոսանովանիլ որ Ծերենցը իսկատակէս շատ հաւատարիմ է պատմութեան, ոչ միայն իր պատմած գէպքերը և նոցա յաջորդականութիւնը, այլ և շատ անգամ մանր հանգամանքներ կատարելապէս պատմական են։ Պատմական են նաև բոլոր գլխաւոր տիպերը։ Բայց որովհետեւ պատմական տուեաները բաւական չեն մի կատարեալ վէպ գուրս բերելու համար, ուստի հեղինակը ստիպուել է իր երկակայութեամբ ստեղծել մի խումբ լրացուցիչ նոր գէմքեր, ինչպէս են Բարգէնը, Աարգիսը, և մանաւանդ կանացի տիպերը։ Սրանք պատմական աստառի վրայ հակասութիւններ չեն ձեւացնում։ Ինչ վերաբերում է բուն պատմական ողուն, հարցը այստեղ փոխում է։ Այն գաղափարական դործունէութիւնը՝ որ հեղինակը տա-

լիս է Յովնանին կամ Թէոդորոսին, իրապէս պատմական չէ: Ասանցոց յարձակումը Մուշի վրայ՝ պարզ վրիժառութիւն էր իրհնց Բագարատ իշխանի համար, և ոչ թէ ընդհանուր Հայաստանի փրկութեան համար պատրաստուած ապստամբութիւն: Յովնանը այդ վրէժինդիր տիրասէր լեռնականների պարզ մէկ առաջնորդն էր. բայց թէ նա ունէր այնպիսի սամկավարական սկզբանքներ, որպիսին վերագրում է Ծերենցը, և թէ նա համակուած էր նախարարական կարգերի բարձումով մի ընդհանուր հայկական միութիւն յառաջ բերելու խոչոր գաղափարով, այս բոլորը Ծերենցի գիւտն է: Պատմութիւնը մեզ չի տալիս այնպիսի երեսյթներ, որով մենք կարողանայինք եղացնել նայեալ եղբակացնել թէ հայ ժողովուրդը երբ և իցէ գիտակցել է իր գրութեանը և կամ որևէցէ փորձ արել թօթափելու իր վրայ ծանրացող աղնուապետական լուծը: Գուցէ այդպիսի փոքրիկ ու անյաջող փորձեր եղած լինին, բայց մենք դրանց մասին տեղեկութիւն չունինք, եւ քանի մեզ պակասում են այդ տեղեկութիւնները, պէտք է ընդունենք թէ հայ ժողովուրդն էւ միւս արեւելեան ծանրաշարժ ժողովուրդների նման, գիտէր համբերութեամբ և քրիստոնէական հեղութեամբ տանել իրեն վիճակուած ծանր կացութիւնը:

Այժմ անցնենք ըննել Ծերենցի վէպերի առաւելութիւններն ու պակասութիւնները: Այդ վէպերի մհծազոյն արժանիքը հետաքրքրութիւնն

է, հեղինակը զիտէ այսողէս վառ, կինդանի ու
աշխայժ ձևով պատմեր, որ ընթերցողը լարուած
ուշադրութեամբ լսում է Դրան մինչև վերջը
Ռեժիդ Հայրենասիրութիւնը բոլոր վէպերի շրդ-
թան է հիւսում: Տիգերը նկարուած են միշտ
զօրաւոր ու հասու զծերով: ամենադեղիցիկ յատ-
կութիւնների, բաջութեան, տիրոսիրութեան ու
ազնութեան հետ զանում ենք նաև ամենամոլի՛
յատկութիւնները Համեմատել օրինակի համար
քաջ ու քաղաքագէտ Թորոսը, բռնակալ արիւ-
նարը Սմբատը, Նրա անբարոյական էինը,
զթութեան հրեշտակ Մորգանիոսը, օտարների
մէջ անուած, բայց իր հայրենիքը բնաւ չմուսա-
ցող Եւփիմէն, տիրասէր ու հաւատարիմ Ապր-
զիսն ու Յարգինը, անվեհնի ժաղավրդական Յով-
նանը, սիրոյ մէջ յաւիպեան հաւատարիմ Գուր-
գէնը, տուաքինի Վատկանուշը, Թուշամորթ յոյն
Թովման, խորածանի ու դուռճախօս ծառայ
Վահրին, փողապաշտ Մարտիրոս վարդապետը,
մատնիչ նախարարներ են ևն Տիգերի նկարը
եցրեմ այնքան զօրանում է, որ հասնում է ա-
ւելորդ չափուղանցութեան: օրինակի համար Յով-
նանին վերագրուած գերազանց յատկութիւննե-
րը նոյն իսկ իր պատանեկութեան ժամանակը
Անքնական է յոյն Դիմոնիսի տիպը, որ Եւփիմէի
զործակիցն է զառնում Պոլսից վախցնելու հա-
մար Թորոսին, կռառելու յոյն զօրքերի հետ, մին-
չեւ կիլիկիա հապնելու և զրեթէ միշտ Թորոսի
հետ պալրելու: Ա՞ր լաւ մարդը կարող է դաւաճանու-

թիւնը հոացնել այն աստիճանի, որ միջոց տայ
իր աղքին թշնամի մի ցեղ ամբողջապէս վերա-
կանգնելու, իր ազգակիցների բանակների խոր-
տակումը անվրդով տեսնելու և իրենց տէրութեան
տակ գանուած մի ամբողջ երկիր բաժանելու։
Դիսնիսի այս անորակելի վարմունքը բացատրած
լինելու համար Ծերենցը ներկայացնում է նրան
իրրե մի աշխարհաբաղացի ու չոր գիտուն, որ
իրը թէ այս աշխարհով չի հետաքրքրում, բայց
թէ որչափ անբաւական է այս բացատրութիւնը,
ինքնին հասկանալի է։ Անրնական է Եւփիմէի
սէրը դէպի Թորոսը՝ միմիայն այն պատճառով որ
նա չափազանց նման էր Ռուբէնին։ Սիրոյ մէջ
միայն դէմքի գծերն են դեր խաղում, Հոգին,
մարդու ներքինը, բարոյական արժանիքները ոչ
մի նշանակութիւն չունին։ Այդ լենչպիսի ուր է
Եւփիմէի սէրը՝ որ իր տարկային կորինելոց
յետոյ թիչ էր մնում որ ենթակային էլ մոհա-
ցնէր, բայց Թորոսի երեսում յանկարծ վոխու-
զրում է նրա վրայ Աւելյորդ ախալքը են Երկուն-
քի մէջ Աշոտը և Զարուհին, որոնց միջադէպը
սկսում է կիսատ մնում է։ Տկար են բնութեան,
տեղերի, հանդէսների, ուրախութեանց, նիստու-
կացի, վերջապէս առօրեայ կհանքի բոլոր երե-
սոյթների նկարագրութիւնը։ Ընդհակառակը շատ
երկար, կեղծ ու բանազրօսիկ է այն դատաստա-
նը՝ որ վարում է Ցովսանը երեք մատնիչ նոս-
խաբարների դաւանանութիւնը պատժելու հա-
մար։ Այս դատաստանի մէջ զործ են զլուած,

կարելի է ասել, նիրկայ եւրոպական գտառավարութեանց բոլոր նրբութիւնները: Թոյլ է նոյնպէս Բուղայի տիպը: Բուղան այն գաղաննիրից է, որոնց հասցըրած աշխարհաւեր սարսափը մարդու մարմինն է փշաքաղում. բայց Ծերենցի տուած նկարագիրը այս զաղանութեանց մասին՝ սովորական չափերից չի բարձրանում, մինչդեռ նուպէտք էր ստեղծէր ահուելի, սարսակուցիչ նկարագրեր: Արա հակառակ տւելի յաջող է յունական պալատական շրջանի, նոցա ապահաննեալ կեանքի, դաւագրութեանց ու կրօնական կոիւների նկարագիրը:

Կարելի է ասել Բէ Ծերենցի վէպերը մի կատարեալ ամբողջութիւն չեն կազմում. այս կողմից ամենայաջողն է Թորոս Լևոնի, որ սկզբուում է Թորոսով ու Նրա մահով էլ վերջանում: Երկունքը իսկապէս Յովլանի վէպն է, թէ Արմբատի և Աշոտի: Հեղինակը «Երկունք» ասելով հասկանում է Թ. դարի այն շարժումը՝ որից ծընուեց Բաղրատունեաց թագաւորութիւնը՝ խոհեմ ու քաղաքագէտ Աշոտի ջանքերով: Բայց գրքի մէջ Սմբատ ու մանաւանդ Աշոտ՝ որ այս երկունքի միակ հերոսներն են, շատ քիչ են երեւում: Յատկապէս շատ անգոյն է Սմբատի տիպը. հեղինակը ոչ կարողացել է դուրս բերել նրան խոհեմ քաղաքագէտ և ոչ էլ գաւաճան կամ մատնիչ: Այս երկուօի մէջ տատանում է շարունակ: Բոլոր գլխաւոր դիրերը տուած է Յովլանին, Բաղրատունեաց տէրութեան հաստատու-

Թեան համար հազիւ մի քանի տող կայ. Հետեւաբար և Երկունքը վերնադիրը չի համապատասխանում նիւթին Յովնանը մեռնում է, բայց վեպը դեռ բաւական շարունակում է, որպէս զի Գուրգէն, Խռարով և այլ մի քանի դուրսը մնացած անձիր իրենց դերը վերջացնեն. Այս հանգամանքը աչք է ծակում: Պէտք էր այնպէս դասաւորել իրերը՝ որ բոլոր երկրորդական տիպերը իրենց գործը վերջացնէին նախապէս և ամէնքի պատկը լինէր Յովնանի փառաւոր մահը: Սրա նման է նաև Թէոդորոս Ռշտունին. զիրքը սկսում է շուա գեղեցիկ էջերով. Վարդանաբերդի առումը, Բիւրեղ տիկնոջ և Նազենիկի անձնապանութիւնը, Գրիգորի և Առւրէնի յուսահատդիմագրութիւնը շատ գեղեցիկ էջեր են: Բայց այնուհետև թուլանում է վէպը. դառնում է ոօման. և Թէոդորոսը՝ որ վէպի գլխաւոր հերոսն է, չկայ ու չկայ. Հազիւ տեղ տեղ երեսում է նախկինա մեծ գաղափարի գործադրութեան համար յիշառակութիւններ միայն կան և ոչ թէ դէպքերի նկարագրութիւն: Առ հասարակ Ծերենցը չափազանց շատ պատմաբան է. այսպէս Թորոս Լեռնին սկսելով սոմանի ձեռի, յետոյ դառնում է իսկական պատմական վէպ, բայց այնուհետև զուտ պատմութեան դասագիրք է: Երկունքը աւելի յաջող է. իսկ Թէոդորոսը ամէնից շատ ունի զուտ պատմութեան դասագրքի կերպարանք:

Ծերենցի երեք վէպերից ամենաթոյլը Թէ-

ողորոսն է. քննադատները ամէնից բարձր դնում
են. Թորոս Լեռնին, ի նկատի ունենալով նրա
ամբողջականութիւնը. բայց եթէ այս հանգա-
մանքը մի կողմ զննեք և նկատի ունենանք թէ
ինչ է առեղծել հեղինակը իր կողմից, այն ժամ
մանակ առաջնութիւնը պէտք է տանք Երկուն-
քին: Թորոսի ուրուաղիծը արդէն բոլորովին
պատրաստ է պատմութեան մէջ և Ծիրենցը մի-
այն զոյներն է դրած. իսկ Երկունքը մի շատ
անորոշ ու տարտամ աստառ ունի պատմութեան
մէջ, որա մէջ շատ բան կայ, որ հեղինակը իր
կողմից կազմել զոսաւորել ու առեղծել է: Տե-
սարանների գեղեցկութեան կողմից էլ շատ յա-
չող է Երկունքը. ինչ ուժեղ պատկերներ են օրի-
նակի համար Արար իշխանուհու ազարանքը,
Գուրգէնի վիճակը՝ երբ նու լուսմ է իր սիրու-
հու ամուսնութիւնը և վիճառքին ամբողջ Ծի-
րենցի ամենաբարձր աւտորանը՝ Յովունի և
Վականուշի անակցութիւնը (Գլուխ Ժ՛ր): Յու-
ղիշ, շնորհիշ է այս զրոխը ոյնտեղ կը գրա-
նենք սիրոյ այս անմեղ զոհերի դառն տառա-
պանքը, անկեզծ մէր, սիրոյ հաւատաթմութիւնը,
պարտականութեան ձայնի հնագանդութիւնը,
ու իստի նուիրականութեան գիտակցութիւնը: Այս
բոլորը իրօք շատ հեռաւ է իրապաշտ նկարա-
գութիւններից և չափազանց իդէալական է,
բայց միթէ գեղեցկութիւնը իրականութեան մէջ
է միայն և իդէալը չունի աւելի հմայիչ, աւելի

զրաւիչ, մարդու հոգին աւելի բարձրացնող յատկութիւն:

Ծերենցի լիզուն գեղեցիկ չէ. զբարարի
խառնուրդը բաւական շատ է նրանում. պակաս
չեն նաև քերականական սխալներ, թերի կաղ-
մուած նախադասութիւններ, որոնցից երբեմն
խմասաւ ել չի գուրս գալիս: Թէև Ծերենցը իր
կհանքի մեծ մասը նեռաւայոց մէջ է անց կա-
ցրել, այնուամենայնիւ արևելեան հայերէնը նրա
վըսայ չէ ազգած:

5. ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ

(1834—1887)

Մ. Մամուրեան (Վարյը).—Հայկական Նամականիւնիան 1872, էջ 219—230.

U. S. Fish Commission *U. S. Fish Commission* 1887, *Vol.* 409 *Suppl.*

b. Օտեան.—Օտեանի ներքին կեանը. Մասիս
1893, էջ 195—8, 214—7, 233—5, 247—9,
275—8, 293—6, 313—5.

Ա. Ա.—Անցեալի դէմքեր. Նոր կհանը 1900,
թիւ 3—4:

Հրանդ.—Դր. Օսեան (հաւաքածոյի յառաջա-
բանում, էջ է—լր.):

Գրիգոր Օտեանի հայրը՝ Պօղոս Օտեան՝ կեսարիոյ Մունճուսուն զիւղիցն էր. 12 տարեկան հասակում դործ ճարելու համար գնում է Պօլիս. նա այնքան աղքատ էր, որ այս ահազին ճանապարհը ոտքով է կտրում. Բայց Պօլսում իր ընդունակութեան շնորհիւ այնքան է յառաջանում որ դառնում է ամենաբարձր ընտանիքներից մէկը. Իր 13 որդիներից Խօթներորդն էր Գրիգոր—Սիսակ Օտեան, որ ծնուեց Խւսկիտար թաղի մէջ, 1834 թ. դեկտ. 9-ին. Հինգ տարեկան հասակից սկսում է սովորել Հայրը բաց էր արել մի մասնաւոր դպրոց, ուր աշակերտում է նաև մանուկ Գրիգորը. Մի քանի տարի յետոյ դպրոցը փակում է. այն ժամանակ հայրը փոխադրում է

Պալրոցը տուն, իր ուսուցիչ հրաւիրելով ժամանակի ամենալաւ ուժերը՝ Այստեղ սովորում է Գրիգորը՝ մի խումբ աղնուականների որդոց հետ:

Օտեանը մի համեստ, ծանրաբարոյ երեխայ էր, ամենափոքր հասակից արդէն երեսով էր, որ նա սահմանուած է մեծ ապագայի, այդ փոքրիկ հասակում մեծ սէր ունէր ատենաբանութեան, հաւաքում էր իր հասակակից երեխաներին և նրանց ոգեսրուած ճառեր էր խօսում: 11 տարեկան հասակում Պատրիարքի ներկայութեան նա մի ճառ խօսեց մարդու կամքի ազատութեան վրայ, որ և հրատարակուեց Արշալոյս Արարատեան թերթում՝ իրրի հետաքրքրական բան: Երբ աւելի մեծացաւ, հայրը իր տան մէջ բաց արաւ թատրոն, ուր Օտեանը՝ իր ընկերների հետ տալիս էր ընտանեկան ներկայացումներ, յատկապէս Մոլիէրի կատակերգութիւններից:

Այսպէս ուրեմն Օտեանը չտեսաւ ոչ կանոնաւոր վարժարան և ոչ էլ բարձրագոյն ուսում ստացաւ: Նա իր դաստիարակութիւնը ստացաւ իր գերդաստանի ծոցում, իր իմաստուն և ընտիր հօր խնամքի տակ. իր ուսումը կարծես աւելի իր մաքի ծնունդն էր, քան ուսուցիչների որդիւնքը: Ի բնէ աշխոյժ և սուր իմացականութեան տէր՝ չտեսածը երեակայում էր, չսովորածը երկնում, չեղածը հնարում:

Դեռ 16 տարեկան էր Օտեանը՝ երբ արդէն ճանաչում էր մարդկային ընկերական կազմա-

կերպութիան վտա կողմիրը, մանաւանդ մեր ազ-
գային տխուր վիճակի պատճառներն ու շարժա-
ռիթը, նա այս ժամանակից դարձաւ ազատու-
թիան ու արդարութիան ձգտող ու պաշտպան,
բնակալութիան ու կեղծիրի ոխերիմ թշնամի:
Օտեանը դիւրահազորդ բնաւորութիւն ունէր՝
իր իր հոգին, իր գաղափարները թափանցող
մարդկանց հետ էր. ընդհակառակը լուսկեաց, մե-
նասէր ու տրտում էր՝ իրը կեղծաւոր սարկա-
հոգի մարդկանց մէջ էր:

Այս ժամանակից արդէն Օտեանի անունը
տարածուեց, ժողովրդական դարձաւ, և ամէն մէ-
կը նրանից մեծ բան էր սպասում:

17 տարեկանից սկսաւ Օտեան իր գրական
գործունէութիւնը, հրատարակելով մի գրքոյի՝
«Աշխարհաբար լեզուի վրայ առաջարկութիւն»
վերնագրով (Պոլիս 1851): Այս գրքով Օտեանն էլ
մտնում է գրաբարի ու աշխարհաբարի գրապայ-
քարի մէջ և իրեւ ազատական՝ բոնում է աշ-
խարհաբարի կողմը, ի հարկէ որոշ չափաւորու-
թիամբ: Գրաբարեանների առարկութիւններից
մէկը աշխարհաբարեանների դէմ այն էր՝ որ
աշխարհաբարը մէկ լեզու չէր. բազմաթիւ բար-
բառներից որը պէտք է ձևացնէ հասարա-
կաց հայերէն: Օտեանը իր առաջարկութիան մէջ
այս դերը տալիս է Պօլսի բարբառին. «Պօլսի
հայերէնը պէտք է ձևացնէ հասարակաց լեզուն,
զի աւելի մարուր և կոկված է, մինչդեռ զրսե-
ցիներունը շատ բիրտ ու կոպիտ է, թէպէտ ա-

ւելի մօտ է դրաբարի, սակայն այնպիսի բոլորովին անկիրթ լեզու մը հառարակաց լեզու ընտրվելու անարժան է։ Ժամանակը արդարացուց Օտեանի կարծիքը։

50-ական թուականներին Օտեանը մանումէ աղատականների շրջանը, այն աղատականների՝ որ պատրաստեցին 1860-ի Տաճկահայ Աահմանաւդրութիւնը. Թուախնեան, Պալեան, Պէշիկթաշնեան, Պարտիզաննեան, Աղաթնն, Բարունակ պէյ և դանիք սրտի ու մտրի ընկերները։ Օտեանը թէև նոցանից տարիքսվ փոքր ու անփորձ, բայց այդ փորձառու մարդկանց խորհրդատու գարձաւ. Իր ձայնը և իր խորհուրդները նոցա առաջ մեծ կշիռ ունեցան։ Յայտնի չէ թէ այս խմբի իւրաքանչիւր անդամը ինչ մաս ունի Աահմանադրութեան պատրաստութեան մէջ, բայց ստոյդ է, որ Օտեանն էլ Պալեանի ու Թուախնեանի հետ՝ զլսաւոր հիմնադիրներից մէկն է։

Նուրբ քաղաքագիտութեամբ Օտեանը այնուհետեւ մտաւ պետական ծառայութեան մէջ, նախ իր վարչական գործունէութեան առաջ տելի լայն ասովարէղ բանալու համար, երկրորդ՝ մեր ազգային Աահմանադրութիւնը զանազան ստնծգութեանց դէմ պաշտպանելու համար, և երրորդ՝ նոյն աահմանադրական զաղափարները նաև տէրութեան մէջ մտցնելու համար։ Այսաեղ պիտի երեար Օտեանի ճարպիկութիւնը և ճըշմարիտ ազգասիլութիւնը, մի կողմից չմռուանալու համար ազգի շահերը և միւս կողմից հաւա-

տարիմ մնալու համար աէրութեան շահերին, և
այս հարավիկ քաղաքազիսութիւնը փառաւոր
կերպով ցոյց տուաւ Օտեանը՝ ազգի շահերը
միաբանելով աէրութեան շահերի հետ Այսու-
հետեւ Օտեանը դարձաւ միանզամայն պետական
մռծ դործիչ ու ազգային շարժումների անձնուէքր
զինուոր. չկար որեէ ազգային յառաջդիմական
գործ ուր Օտեանը յայտնի մասնակից կամ թա-
քուն զբգիչ չլինէր. Այսպէսով նա ստացաւ ազ-
գի մէջ անհան ժաղովբականութիւն, որին
նպաստեցին իր հանճարի ու ճարտասան լեզուի
հետ նուև համակրելի բնաւորութիւնը. Աահմա-
նազրութիւնը դեռ վաերացուած չէր աէրութեան
կողմից. ալանպանոզականները՝ նոյն խակ խար-
դուս միջոցներով՝ տշխատում էին խափանել նրա
հաստատութիւնը. կառովմարութիւնը 1862-ին
հրամայեց կազմել մի Յանձնաժողով՝ քննելու
համար այդ Աահմանազրութիւնը. ամէնքը վա-
խում էին, որ ահա ալանպանոզականների դաւերը
յաջողուցան և նորածին Աահմանազրութիւնը
կը մնանի: Բայց Օտեանը ընտրուելով անդամ
նոյն Յանձնաժողովի և օդուուելով Եպարքսի
հետ ունեցած մաերմութիւնից, կարողանում է
միրկել Աահմանազրութիւնը իր բարոյական ազ-
դեցութեամբ: Աակայն պահպանողականների դա-
ւերը աւելի են յառաջանում, այս անգամ նպա-
տակ ընտրելով Օտեանին. չարախօսների մատ-
նութեամբ Օտեանը կասկածելի է դառնում պե-
տութեան առաջ և պետութիւնը ազգային շրջա-

նուկից հեռացնելու համար նրան՝ կառավարական պաշտօնով ուղարկում է Բուլղարիոյ Ռումանիք քաղաքը (1864):

Աղջային շրջանակից ու բարեկամներից հեռանալը, հայրենիքի կարօտը և շրջապատի մեռնելութիւնը շատ ազգեցին Օտեանի վրայ և նա ընկաւ տիսուր մելամազձութեան մէջ: Ի՞նչքան թախծոտ, ի՞նչ վշտալի են այն օրագիրն ու այն նամակները՝ որ նա այս պահղխտութեան մէջ գրում է:

Երեք տարի տևեց Օտեանի պանդխտութիւնը Ռուսնութեան, ուր նշանաւոր պետական գործիչ Միտհաթ փաշայի բարեկամն ու գործակիցն էր 1867-ին Օտեանը Պօլիս կանչուեցաւ և անցաւ աւելի բարձր պաշտօնների. գարձաւ Պետական Խորհրդի անդամ, Հասարակաց Շինութեան նախարարի խորհրդական, Արտաքին գործոց նախարարութեան օգնական, նրան յանձնուեցաւ կարդադրել Սերպիոյ թագաւորութեան հարցը՝ որի համոր ուղարկուեց Պարիզ, ուր և վայելում էր Ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Թիէոի այցելութիւնները:

1866 թուին, երբ Օտեանը գեռ Ռուսնութեան էր, կառավարութիւնը տապալել էր Աղջային Սահմանադրութիւնը: Օտեանը յաջողեցաւ հոտ առնել: Մինոյն ժամանակ շարունակ գրում էր Մասիս, Մանգումէ և Օրագիր թերթերում՝ պաշտպանելու համար Սահմանադրական սկզբանքները և տարածելու աւելի լայն խուերի մէջ:

Օտեանը ի բնէ կրօնասէր ու հաւատացեալ
մարդ էր. բայց այս չէր խանգարում լինել հակա-
կղերական։ Տեսնելով կղերի կատարած բռնակալ
ու ապօքինի գործերը հայերականութեան մէջ, նա
ասել է մի անգամ. «Ով որ գլուխը վեղար մ'ու-
նի, սիրաը սատանայ մ'ունի»։ Բայց Սահմանա-
գրութեան հաստատութիւնից յիսոյ, երբ այլ ևս
կպերը զրկուած էր իր ինքնագլուխ իշխանու-
թիւնից, նա փոխում է իր դիրքը. նա այլ ևս
ոչ թէ թշնամի, այլ գործակից է ճանաչում նուե
կղերին, ազգի միւս բոլոր դասակարգերի հետ։
Ինքն է որ պատճառ է լինում Խրիմեան Հայրի-
կին բարձրացնելու պատրիարքական աթոռը, ո-
րով մի կողմից ժողովրդական ոգին բարձրացաւ
պաշտօնական շրջանակների մէջ և միւս կողմից
սկսուեց Հայաստանի բարենորոգութեանց հար-
ցը։

Սիրպիական ինքը առթիւ ուղարկուելով
Պարիզ, 1870—71 թուերին Օտեանը ման է գա-
լիս ֆրանսիա ու Գերմանիա, վերադարձին անձ-
նատուր է լինում մի այլ խոշոր Պետական գր-
ծիւ Դա Օսմանիան Սահմանադրութիւնն էր։

Երբ Միտհաթ փաշան եպարքսս գարձաւ,
Օտեանը նրա ծածուկ խորհրդականն էր։ Երե-
կոները զալիս էր նա Օտեանի տունը, ուր հա-
ւաքւում էր նաև հայ ազատականների խումբը
(Սիրպիչէն, Քեաթլիպեան, Սամանձիան) ու խոր-
հսդակցում էին տէրութիւնը Սահմանադրու-
թիամբ օժտելու մասին։ Օտեանը անջատական

չեք և կարծում չեք թէ Հայը լաւագոյն կեսարքը
կունհնայ Սահմանադրական Թիւրքիայում:

1876 թ. ճրապարակուեց Օսմանիան Սահմանադրութիւնը Ամպիթան Ազիզը գահազուրկ եղաւ և ապանուեց կազմուեց Օսմ. երեսփոխանական ժաղով և գոն բարձրացուեց Մուրազը՝ իրը Ասամանադրական կայսր Նոր կառավարութեան մէջ Օտեանը կասարում է ամենապղեցիկ պերը և Օսմանեան կայսրութեան մէջ հանդիսանում է իրը միծ պիտական գործիչ Զուշացաւ սարկայն պիտական ճարտածը, Համբիզ Բ. բարձրացու գահը Սահմանադրութիւնը տապալից և նրա հեղինակներին աքսորից կամ կոխադան բարձրացրեց Օտեանը փախաւ Պարիզ և թէև Համբիզը շատ աշխատեց դեսպանների միջոցով նրան յիտքերկուեց բայց նա միշտ մերժեց, հաւատ չընծայելով նրա խոստումներին 7. տարի մնաց Օտեանը Պարիզում, ուր առյօն տարապիրեալի խորտակուած ու ջախջախուած կեանքով: Այս ժամանակ ստացաւ «Մհծվաբանդի» անունը: Հեռուից թղթակցում էր Մասիսին Վահրամ ծածկանուութիւնը: Մեռաւ 1887թ. օգոստ 6-ին և թափուից Պէռլա Շէզի գերեզման նատնօւմ մի անշուք շիրմի տակ:

Օտեանը թէև մեւ յայտնի գրողներից մէկն է բայց մի առանձին աշխատութիւն չունի, մեծադրութիւն գրուածքը՝ որ նա թողիլ է, Լամարտինի միափայտէլ վէսլի թարգմանութիւնն է, որ կատարեիլ է երկու անգամ՝ 20-տարեկան հասակում,

բայց այս էլ անտիպ է։ Գրելուց աւելի նա խօս-
սել է. Նրա ոգևորուած, ազդու և գեղեցիկ ձա-
ռերը մեր Ազգային ժողովի զարդն են կազմել.
Մամուրեանը կոչում է նրան «Հայոց Միքարօ»՝
համեմատելով նրան ֆրանսիական յեղափոխու-
թեան հաջակաւոր հոկտորի հետ։ Մնացեալ գոր-
ծերն են նամակներ, մի անտիպ օրագիր (յիշա-
տակարան), գեղօններ, ոտանաւորներ, դամբա-
նականներ, գրախօսութիւններ, վարչական խոր-
հրդածութիւններ և զանազան յօդուածներ, որոնք
հրատարակուած են ցանուցիր այս ու այն թեր-
թում։ 1892-ին Պօլսում ձեռնարկեցին հաւաքել
Օտեանի բոլոր գործերը և հրատարակել, բայց
կառավարութիւնը արգիլեց. այնուհետեւ Օտեա-
նի անունն անգամ արտասանել ներելի չէր։
Սահմանադրութեան վերահաստատումից յի տո
կարելի եղաւ յաջողութեամբ ձեռնարկել հրատա-
րակութեան։ Աս այժմ հրատարակուած է Ա. հատո-
րը (Պօլիս 1910), որ պարունակում է բացի մի բա-
նի դամբանականներից, գլխաւորապէս Ազգային
Ժողովի մէջ խօսած ճառերը. բայց այս ճառերն
էլ ատենադպիրների ձեռքով կազմած տմվու-
թումներ են և ոչ մի ամբողջական ճառ չկայ։
Այնուամենայնիւ նրանց մէջ որոշ կերպով տես-
նեռն են Օտեանի ոգին ու սկզբունքները։

Ամէն բանից առաջ պէտք է շհշտել Օտեա-
նի անկողմնապահութիւնը. Օտեանը թէե ազա-
տական, այսինքն որոշ կուսակցութեան պատկա-
նող մարդ, բայց տեսէր թէ ի՞նչպիսի շիտակ վե-

ըարերմունք է ցոյց տալիս դէպի պահպանողականութիւնը, որ ըմբռնում է իրքի մի ընկերական պահանջ: «Ամէն ազգի և ընկերութեան մէջ, ասում է նա, կողմնակցութիւններ կան և պիտի ըլլան, վասն զի ամէն ընկերութեան վիճակի մէջ երկու էական պիտոյք կան. — պահպանութեան պիտոյքն ու յառաջդիմութեան պիտոյքը: Այս կրկին պիտոյքէն ծագած կուսակցութիւնները իրենց օգտակար և իրաւացի կողմը ունին. երկուքն ալ չափազանցութիւններ կընան ունինալ: Կառավարութեան գլուխ եղողներուն կը վերաբերի չափազանցութիւնները ամոքել, կիրքերը հանդարտեցնել և ձշմարտութեան ծառայել չվախոնալ կողմնակցութիւններէն, այլ յարգել ինչ “որ իրաւացի է իրենց պահանջմանցը մէջ, և մերժել միայն ինչ որ նախապաշարմունք և կիրք է (էջ 2):

Յառաջդիմութիւնը պատմութեան ընական ընթացքն է. «Մարդկութեան ընթացքը պատմութեան մէջ անյարիր և աղխազուր դիպուածոց շարք մը չէ: Մարդկութիւնը վայրենութեան վիճակէն սկսելով միշտ լաւագոյն վիճակի մը դիմած է և իւրաքանչիւր դար մարդկային յառաջդիմութեան այս միծ գործողութեան մէջ իր բաժինն ունեցած է: Այս ճշմարտութենէն կը ծաղի իւրաքանչիւր մարդու համար պարտաւորութիւն՝ մարդկութեան յառաջդիմութեան աշխատելու, առանց հայրենիքի ու ազգի խարութեան (էջ 173):

Օրէնքի հպատակութիւնը պարտաւորիչ է:

նոյն իսկ վարչութեան. առանց օրէնքի կառավարութիւն չկայ. «Օրէնքը կոխելով ազգեր փըրկելու ելնող առաջնորդները խարած են միշտ զԱզգերը և խարուած են իրենք ալ. կը խարուի Սրբազն Պատրիարքն ալ եթէ կը կարծէ որ երրինք օրէնքը չյարգելու օրինակը տայ Ազգին, աւելի դիւրաւ կը կառավարէ զԱզգը. չէ. ահա այն ատեն անկարելի կըլլայ ազգին կառավարութիւնը. զի օրինաց յարդութենէն զատ ուրիշ բարոյական ոյժ չէ մնացած մեր Ազգային Վարչութեան համար, որոյ հիմն ու գործողութեան բոլոր միջոցը բարոյական զօրութիւնն է (էջ 137):

Գործիչը չպիտի յուսահատի ներկայ անյաջողութիւններից. ապագայի հաւատը նրա զօրութիւնը պիտի լինի: «Օ՞չ, եթէ մարզս ներկային մէջ միայն ընկղմած ըլլար, եթէ անհուն ապագային հաւատ չունենար իր ներսէն, եթէ վերջապէս սահմանաւոր և ժամանակաւոր ըլլային մարդուս ակնկալութիւնները, ինչու առաքինի մարդը այս աստիճան նահատակութեան յանձնառու ըլլար, մինչև զո՞ն ընելու չափ իր անձը հայրենեաց սիրոյն և ազգին ապագային համար, զոր և ոչ իսկ աչքովը տեսնելու և միիթարուելու յոյսն ունի: Եւ յաւ ուշ գըքը. հայրենիք մը որ կայ, հայրենիք մը որ իր փառքին մէջ կը փայլի, սիրելը դիւրին է. իսկ Պարտիզպան՝ այն հայրենեաց նուիրած էր զինքը, որ ընկած էր և անփառունակ (էջ 158):

Վէճի մէջ իրա հանդարտ բնաւորութեան նկարագիրն են տալիս հիւնեալ տողերը. «Եթէ հանդարտութեան ու անկողմնակալութեան օրինակը չեն տար անոնք, որոնց ամենէն առելի կը պատկանի, ես խակ կուտամ իրենց անյիշաչարութեան օրինակը, և այս պարագային մէջ ալ անձնական խնդիր չեմ ուղեր խառնել արդէն կրնառութիւնը մը մէջ, թէև եղած ակնարկութիւնը ամենէն առելի ինծի կը վերաբերին Դուք զիս կը զրգոէք, ես ամենայն հանդարտութեամբ ու անկեղծութեամբ ձեր ուղած բացատրութիւնը կուտամ (էջ 94):

Խօսելով այն երեսփոխանների մասին՝ որոնք միաժամանակ և տէրութեան պաշտօնեայէին և ակնարկելով իր անձին, ասում է. «Ի՞նչ վատութիւն, ի՞նչ ցած սիրտ պէտք է ենթադրնել ազգային պաշտօնեայի մը քով, որ իր առօրեայ շահերուն ու սին պատիւներու զոհէ զըժքախտ ազգի մը, իր ազգին, մշտնջինաւոր շահերը: Եթէ այնպիսի ազգային մը կը գտնուի որ օտարք քաղաքականութեան մը կը ծառայէ, անիծեալ ըլլայ, երիցս անիծեալ այնպիսին (էջ 45):

Դամբանականները խօսուած են մի բանի նշանաւոր ազգային գործիչների վրայ. Նրանց մէջ ամենազեղեցիկն է Քհաթիպեանի վրայ զրածողը: Քհաթիպեանը Առւթան Ազիզի բժիշկնէր. նա խսկական բարեգործ էր. ոչ միայն իր գիտութիւնը, այլ և իր բովանդակ նիւթական կարողութիւնը բաշխում էր ազգատ հիւանդներին.

Պօլիսը՝ տռանց աղջի խորութեան՝ պաշտում էր նրան։ Թուրք յեղափոխականները նրան խեզդիցին և ծովը զցեցին, լուր տարածելով թէ անձնասպանել է։ Օտեանը Պարիզից լսեց ցաւալի գոյժը և գրեց այս գեղեցիկ ողբը։

Ո՞վ ինձ բարեկամ, ով ինձ մտերիմ, ով նոպիտի տայ ինձ իմ մտերիմ բարեկամ։
Ո՞ն առնն։

Քան զոլատմական անձինո աւելի կարժէր նա, իրեն նմանը բիւրաւոր մարդոց մէջ մէկ հաստիկ կը ծնի, շատ մը վատերու փոխարէն Աստուած երբեմն այսպիսի ոճն կը սաեղծէ, որ միիթարուին մարդիկ։
Արի արանց էր նա, բնաւորութեամբն արի, արի հւնաճարով, որտովն ալ արի։

Մեծ և էր, բարութիւնն էր անձնաւորեալ, աղքատին ու հիւանդին բարեկամ, բարեկամ մհամատանց ու ամենուն բարերար։

Պարտաւորութեան ձայնը իր պատգամն էր և ուրիշ ձայն չուզեց լսել. առաքինութիւնը ըստ բնութիւնն էր և օր մը չմուլացաւ իր սիրոյն։
Այլ թէ թուլացաւ, աւար, այն իր վերջին օրն եղաւ։

Ո՞ն, ամպեր, ո՞ն ամպեր, եկան մթագնել քու պայծառ միտրդ ու առողջ զաւողութիւնդ, ով իմ բարեկամ։

Զքեզ սիրեցին Պուֆօրի կրկին ափունը, ծերն ու աղքատ քեզ օրհնեցին, երիտասարդը սիրեցան ի քեզ ու մնձամեծը և մնձաւունը պատրիեցին քեզ, ամեն աղջէ մարդիկ ու ամեն աստիճանի մարդիկ քեզի գիտեցին։

Ամենուն հասար, ամենուն օդնեցիր, անսման արհեստովդ, աննման խելքովդ, աննման ձեռքովդ։

Ուր որ գացիր՝ շատ անզամ յուսահատութեան
յացը դադրեցուցիր, յսւոյ ժպիտը փայլեցուցիր.
սրտիդ բարութենէն ու բնաւորութեանդ կորովէն
միշտ բան մը կը հազորդուէր ամենուն
Միայն սիրեցիր, ոչ զոք ատացիր, ու միայն
կեանըդ ատեցիր:

Անյուշ և անյոյս զքո ուղիդ ընթացար մինչև
որ յոզնեցար,
Ինչու արգեօք:

Երեակայելով այն բոպէն՝ ուր նա զնում է
ծովափ՝ իրր թէ անձնասպանութիւն գործելու,
զրում է.

Ու առ խարխափ գնացիր կարծր ու պատ ա-
ւազին վրայ, խինհրուն վրայ, ժայռերուն վրայ,
ջուրերուն մէջ ոչնչութիւն գտնելու:

Դարձիր, ես զարձիր. տակաւին պէտք ունինք
այդ աղնուական գլուխու տեսնելու, որ երբեք վատ
խորհուրդ մը չէր յդացած. զարձիր, տակաւին շատ
վիշտեր կան սփոփելու, շատ նկուն արտեր կան զօ-
րացնելու, ու նայէ որչափ ձեռքեր երկնցած են
քեղի. դարձիր, ըլլայ թէ Աստուած որ քու կեանքդ
պարզե մը ըրաւ ամենուն՝ զքու մահդ պատունաս մը
ընէ շատերուն:

Այլ չէ, աւանիկ աներկմիտ կընթանաս ու
չես լսեր անհուն աղաղակը որ կը բարձրանայ
ետեկդ ժողովրդեան ամէն կուրգերէն. ալիշներուն
աղաղանկն ալ չես լսեր:

Լուէիր զոնէ վերջին վայրկեանիդ Աստուածոյ
ձայնը սրտիդ մէջ:

Ո՞ զիտէ:

Կըսին թէ այն դմ'սէ ծովածոցին մէջ զիս ծո-
վամոյն չեղած, երկար ժամերով շըջեցար, ժամեր ի

բաւն հայելով անշուշտ ծովուն, հայելով նաև երկնքին Ասրհութղք արդեօք նորանորք չթաւալեցին քու միարդ այն միջոցին և արդեօք երկինք չիջեցուց արդէն հոգւոյզ մէջ, ի վարձատրութիւն անստգիւտ և առաքինի կենցաղիդ, իր յաւիտենական զիւթեան ցողն անմահարար:

Հատորից գուրս մնացած զրտածքները՝ ինչպէս անտիպ յիշատակարանները, նամակները, գեղօնները և այլն շատ աւելի զեղեցիկ են: Այս բոլորի մէջ նա քնարական բանաստեղծ է, և քնարերգութիւնը նրա սիրած զրական սեոը, ամէնից աւելի քնարերգու բանաստեղծներին է նա պաշտում, Լամարտինը, Հիւգոն, Ալֆրէդ դը-Միւսէն, Ալիշտնը ամենօրեայ ընթերցման առարկաներն են. Լամարտինի Ռաֆայէլը իր ծոցումն է կրում: Առանձին սէր ունի Հալէվիի «Արբայ Կոստանդին» և Ալրէս Դէլալիի «Մարքիդ» վէպերի վրայ, որոնք թարգմանել է տալիս հայերէնի և այս չի սիրում իրապաշտ գպրոցը. Զոլան նրա համար ամէնից ատելի գրողն է:

Օտեանի գրութիւնները առ հասարակ օծուած են մելամազնու վեհութեամբ, նրա ամէն մի տողից տխրութիւնն է ծորում կաթիլ կաթիլ: Եւնչ է նրա տխրութեան պատճառը: «Գալգունիք մըն է, որ ոչ ոք պիտի զիտնայ»: Այդ տխրութիւնը սկսում է հէնց ամենաթարմ երիտասարդութիւնից. դեռ 20 տարեկան՝ նա Ռաֆայէլն է թարգմանում, տխուր սիրոյ այդ վէպը, որ վէպ լինելուց աւելի՝ քնարերգութիւն է համակ՝ մահ-

ուան հրտապոյրներով լցուած։ Այնուհետև գալիս են կեանքի ղատրանքները, պանդխտութիւնը, սիրած բարեկամների մահը, հասարակական զօրծունէութեան իր լայն եռանդի առաջ բացուած անձուկ ասպարէզը, և այս ըոլորի հետ մի անյոյս սէր, որոնք նրա սիրաը դառնութեան թոյնով են լցնուած։ Ահա թէ ինչպէս է նկարում իր պատկերը «Վերջին հառաշանքի» մէջ (Մէր 1864թ)։

Երսուն տարի անցած է իր զլօնին զրայէն։

Երսուն տարի, առայդ հասակին ծիրն է լու-

ստփառ։

Եւ սակայն վերջին ծայրը հասած է որդէն
կենաց։

Կհճիռ շունի իր ճակատը, այլ որտին մէջ
վէրթեր կան բացված։

Դժբախտութեան բաժակին մինչև մըսւը քա-
մած է։

Երջանկութիւնն իրեն համար լոկ անուն մըն
է. բոլոր կեանքին մէջ և ոչ իսկ վայրեկան մը զգա-
ցած է զանի։

Բոլոր կեանքին մէջ և ոչ մէկ վայրեկան մը։

Բայց յայսը, այն պահապան հրեշտակը, զոր

Ասուած դրած է ամէն մորդու քով, զինը լրած
չէր մինչև այս տարիքը։

Թերեւ իրաւունք ունէր յուսարիւ։

Երբ այս տարիքը հասաւ և երջանկութեան
լոյրծուն մէմին մըալ ոտք կոխել ուզեց, ոտքը զթե-
ցաւ, և յայսը, իր պոյնութեան վերջին ապահովանա-
րանը, զինը լրաւ ի բաց զնաց։

Աւ բան մը չը յուսարի։

Եւ ոչ կը զգայ։

Եւ միայն մահուան կ'ակնկալէ:

Մարդիկ զանազան կերպով պիտի զատեն զինքը և ոչ ոք սիրտի գիտնայ իր յուսահատութեան զաղանիքը:

Օտեանը շատ էր սիրում Պէշիկթաշլեանին, իրկուսի հոգիները իրար մէջ հալուել էին: Մեռաւ Պէշիկթաշլեանը՝ իրեւ սիրոյ ու հիւծախտի զոհ: Կոյսին ուղղելով իր խօսքը՝ նա զրել էր իր մի զեղեցիկ տաղը.

Ցիշեա զիս, կոյս, երբ զվայրի, ահ, տեսանես դու զծաղիկ,

Որ հակէ ի միայն իմ մենաւոր զերեզմանին...

Այս տողերից ներշնչուած Օտեանը զրում է իր հիանալի մի զեղօնը.

Մաղկին վայրի ի տես զնացիք, ով աղջիկ.

Ոչ ձեռք տնկեց զանի, ձեռք բարեկամի կամ սիրունոյ,

Ոչ արտասուաթուը աչքերով՝ երեկոյեան ստուերներուն խառնուած՝ անծանօթ որ եկաւ ջուր տալ ինքնաշոյս տունկին.

Ու միայն՝ զոր հետ աղջկան երգեց նա ի սէր կաթոգին, շողն առաւօտին ու ցօղն երկնքին ու զեփիւս հովտին, ե՛կան այցելել անտերունջ ծաղկին...

Քըթմնջիւնք Բանաստեղծին տատանել են հզել զերեզմանին բոլորտիք.

Փառչ փառչ կերեան մէն մի հառաջանք որ կարծես կելնեն ի խորոց շիրմին:

Միծազափայլ դաշտ ծիրանի՝ բռւ տո ոտիւք ձաւալի, ձառն ու ծաղիկ քեզ ժպտին ի բոյր ի թոյր բրբմենի...

Փշեն շաբ հողմունք, սուրան կայծակներ,

լսոնչեալ քունէդ կարթննաս, ուսկի անուշջըդ ընդ-
հատեն, արտփէ սրտիկդ՝ այլ երկիւղէ:

Ո՞վ տեսաը յանկարձ՝ ի շարաշուր փաղփէւն
փայլակին, կամ թէ անուն մարդեօք զժոհին՝ սուլե-
ցին ականջիդ հողմունք վրէժինդիր:

Անուն սիրելի ու ոչ ոք, յետ մահուն բռւ
առջիդ արտասանած էր զանի, ոչ ալ ի ջինջ գիշերին
բարսկ ամպիկն որ ծածկէր զերես լուսնին՝ մելա-
մաղձիկ անոր դէմքն յիշեցուցած էր քեղի:

Ո՞վ մոռացօնք մոռացօնք, պատանք մեռելոյն,
դու դամէնք կու պատես, մեռեալն ու կենդանին, և
որ մեայն կենդանի՝ զոչէ կարեվէր. «զմէ» այս կեանք,
զմէ աշխարհ, զմէ սէրը:

Օտեանն էլ սիրել էր. և իր անյոյս այդ
սիրոյ յիշատակն է որ երդում է այս տիսուր տողի-
րի մէջ.

Թեթև ոտիւք անցնիմ դռնէդ, ով գերեզման,
տաժանելի եղաւ լոյսն ինծի համար. ըլլայ խաւարն
աշքերուս դիւր:

Հառաչ մհանէ, սրտիկս, հուսկ հառաչ, և ի
նմա աղաղակին ըոլոր աղէտք իմ կենաց:

Մընջեսցէ անունն իմ, մընջեսցէ ի սրտին,
իրըն վանպիւն մի յետին զոր կըկնէ հովիտն առ
հովիտ՝ ձայնի միոյ դաղարելոյ. .

Զատպնապէ յիշատակն իմ զնոտ, անմըրիկ և
անմըրուր՝ սրպէս իր լոիկ սէրն ալ ինծի համար:

Քանիցս արդեօք յառեալ ի քեզ, ով իմ լու-
սին, եղերերդեալ ի սիրս, համը ի քերան, յիշեցի
զանցեալ օրերս ու զանցեալն իմ սէր:

Քանիցս արդեօք, ով երկինք, պաղատագին
նայուածքներով առ քեզ ակնարկեցի...:

Օտեանի գեղեցիկ գրուածքներից է նաև իր

Օրագիրը՝ որ օրը օրին զրել է մեռսճուքում։
Հայրենի կարօտով տառապող պանդու խափ տխուր
էջերն են սրանք. բանաստեղծը վշտահար նայում
է չորս կողմ, ոչ ծանօթ է տեսնում, ոչ բարե-
կամ. չի գտնում սրտակից մէկին, չի լսում մի
կարեկից ձայն. բնութիւնն էլ է իրեն համար
տխուր, միօրինակ, ձանձրալի ու անհրապոյր.
Հեռուց՝ երազի նման երեցող հայրենիքը այժմ
ինչ դեղեցիկ հրապարներ ունի նրա համար։

Տար օր մը անցուցինք այսօր, տար ու շատ
տխուր—տխուր ինչպէս երէկն էր և ինչպէս եռանդ,
ինչպէս պիտի ըլլայ վազիւ և վազանդ ես... լուս-
թիւն և ամայնւթիւն—ամայնւթիւն չորս դիմ, ամա-
յնւթիւն ներսի դիմ—ողբ, մարդիկ և երկինք ան-
դամ գառակից են սրտին նեղութեանը—ամենայն ինչ
կը ծանրանայ վրաս—խօսք մը, բառ մը, փողոցին
մէջ փոքրիկ մանուկներուն հանած միջն անդամ,
աերեւց շաւանջն ու ալեաց մրմունջը՝ ամենայն ինչ
չարաշար կը հնչէ ականջիս... և կուզէի որ իմ հա-
ռաշանքս միայն լիցնէր գաշխարն համայն...

Եւ այս ինչ մեռելական հանդարտութիւն է—
տեղի շերերար—անչարժ են ամսերը ու Դանուրին
ալիքները չունեն և ոչ կնճիռ մը—կարծես թէ բո-
լոր բնութիւնը ապշեց է. շեմ ուզեր այս հանդար-
տութիւնն ալ—ուրեմն իմ սիրաս միայն փոթորիկի
մէջ պիտի ըլլայ...»

Բայց այս ձայնը—շոգենաւին անիւն է որ ա-
լիքները պատռելով կ'երթայ կամ կուզայ—Դանու-
րին մեռեալ ալիքները—և ահա կը սուլէ։ Սուլէ շո-
զենաւդ իմ,—ան, այդ ձայնէն ուրիշ անուշ ձայն շը
կայ ինձի համար—թող բնութեան լսեն բոլոր ձայ-
ներըն ըստ ձայնի միայն լսեմ հսկ

Օտեանը ունի նուե նկարագրական գեղեցիկ հատուածներ.՝ դրանց մէջ հիանալի է Վիսպատի նկարագրութիւնը, որ հայ գրականութեան մէջ պիտի կազմէ յաւիտեան անջնջնլի մէկ էջ:

Վիսպատ հնը:

Վայըն է զեղեցիկ ու հանգարտիկ.—Հոս ջուրը ծիծաղ մ'ունի, ողը ծիծաղ մ'ունի, երկենք ծիծաղ մ'ունի, որ անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանեն: Անտառն իր զոս տերենց խօշիւնն ունի, իր մամուսպատ ծառերն ու ծառի կոճերը, իր բարանձաւը, իր սահանքը, իր բացավայրը և իր հավաւայ համբարը: Կը միխս անտառին մէջ, կը խորասուզիս, և նու ի խորոց անհուն մթութեանն կերկերաձայն թոշնոց վայիններովը ու անոպնադոչ ծառերուն սոսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն: Քիչ մ'անգին կը տեսնեն, որ անագին տոպատմ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծեն շանմը: Կ'արհամարնէ: Իր լուսու կողերուն վայրի կանչին վրայէն կաթիլ ջուր մը կը մզի վճիռ, վայլիլուն, զովագին, և այն կաթիլ հեղեղ կը լլայ որ զմայրիս կը խորտակէ ու անհուն հովիս մը կը փորէ իր ձամբուն վրա, հոս ջրվէժ, հոն ջրի առուակ, հոս կը զբոշէ, հոն կը կարկաջէ, հոն ամպերուն հետ թիւղոյն կ'որուտոյ, հոս դալարագեղ ծադկասփիւն խոտերուն եղերը՝ մանուածապատ ման կուզայ, հոն կը փրփրայ, հոս կը վայլիլայ, և արեւուն նախածադ վայլիններուն առջե կը կարմըրի:

Հոն է ներդաշնակութիւնը, կարզը այս անկարգութեան մէջ է. և զի մարզուն ձեռքը ոչ ժողիրն այլ համեստօրէն խանուած է բնութեան դործոցը,

անոր կամացն ու քմացը հնագանդելով. և զի ընութիւնն է որ կը տիրապետէ:

Մշուշ չունի երկինքը՝ որ այն մշուշը պատէ նաև գսիրաը. կապոյտ կը տեսնես ցերեկը. աստղունը կը տեսնես զիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են և թափանցիկ արեին լուսով:

Օտեանի լեզուն հետևում է մի առանձին ոճի. ինքը թէե աշխարհաբարեան, բայց չափազանց սիրող է զրաբարի և շարունակ օգտւում է նրանից: Սակայն զրաբարի այս խառնուրդը այնպէս ճարտար հիւսուած, այնպէս անուշ շարախառնուած է, որ փոխանակ կոպիտ անհարթութիւններ ձեւցնելու, տալիս է նրա լեզուին ծանր ու վեհափառ կերպարանք: Օտեանը աշխարհաբար է զրում զրաբար շարադասութեամբ: Նրա կարճ կարճ հատուածները, նրա սիրած աղատ շարադասութիւնը Սազմոսների վհճունակ լեզուն են յիշեցնում:



